


Reefse
Dumaguete
Smyrnae
egg supply





ԼԵՂՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

891.99.09

Մ-27 Կ.



ՊՈՒՍՍՅԱՑ

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



Տպարան «Շ Ի Բ Ա Կ» Ալեքսանդրապոլ

1910

(92)

1 24 JUN 2013

2013
May 5: 10.1 x 2

64.962

R. R. K. U. U. Z. U. 3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

XIX 2.

Угуув бүрхүүрүүр

11. ՎԵՐԱԾՆՈՒԹՅՈՒՆ

Վերածնութեան առաջին արտայայտութիւնն եղաւ մի արտասովոր կենդանութիւն, որ նկատելի էր ոռւսահայերի մէջ 50-ական թւականների վերջում: Եկաւ վարդապոյն յոյսերի, գեղեցիկ ծրագիրների ժամանակը: Բացւեց գործունէութեան ասպարէզ, որի վրայ երևացին մի շարք պատրաստւած գործիչներ:

Վերածնութեան երկրորդ արտայայտութիւնն էր պարբերական մամուլը: 1858 թ. Մօսկվայում սկսւեցին «Հիւսիսափայլ» և «Ճռաքաղ», Թիֆլիսում «Մեղու Հայաստանի», և ապա հետզհետէ երևացին «Կոռունկ» ամսագիր, «Մասեաց Աղաւնի», «Համբաւաբեր Ռուսիոյ» և այլն: Այդ օրգանների շուրջ, գիւտորապէս «Հիւսիսափայլի», և «Կոռունկի», համախըմբեցին ժամանակի լաւագոյն ոյժերը, որոնք հրապարակ հանեցին բազմաթիւ հասարակական, գրական և ազգային խնդիրներ: Ասպարէզ եկան հրապարակախօսներ, բանաստեղծներ, գրականագէտներ:

Վերածնութիւնն ընդգրկեց աւելի լայն շրջան-ներ։ Առաջին թատրոնական ներկայացումների հիմքը դրւեց, և հայի քանքարը գտաւ արտայայնութեան



334
41

Նոր ասպարէզներ: Հայ կինը խորտակեց հնագարեան նախապաշարումները, դուրս եկաւ ընտանեկան նեղ շըշանից և մասնակցեց ժամանակակից կուլտուրական հոսանքին՝ դպրոցի ամբիոնից և թատրոնական բեմից լսելի դարձնելով իր ձայնը: Հասարակութիւնն սկսեց ընտելանալ հաւաքական, համերաշխ գործունէութեան, և բացւեցին դպրոցներ, գրադարաններ, ընկերութիւններ: Մտաւոր շարժումն անմիջապէս ազգեց գրականութեան վրայ. ծաղկեցին բանաստեղծութիւնը և դրաման:

1858 թւականն, այո, անմոռանալի, նշանաւոր տարեթիւ է հայերի համար: Այդ վկայում են և ժամանակակից գրողները: «Մեղու Հայաստանի»-ի աշխատակիցը համեմատելով ներկան անցեալի հետ՝ անցեան անւանում է «Թմրութիւն» կամ «անզգայութեան վիճակ», իսկ ներկան «սթափումն»: Նալբանդեանը նոյնպէս շեշտում է 1858 թւականի նշանակութիւնը, յայտնելով, որ այդ տարի լայնարձակ ասպարէզ ստացաւ ժողովրդական կենդանի խօսքը, երևեցաւ ազգի մէջ բանականութեան դատաստան, խլրուեցան մի քանի մտքեր, որոնք մեծ յոյսեր են տալիս հայերի յառաջադիմութեան մասին: «Այս թանձր և խաւարատեսիլ ամպերը, որ դարերով ահա հաւաքւելով և լեռնանալով պատել էին հայկական բարոյականութեան հօրիզոնը, այսօր «Հիւսիսափայլի» ձառագայթների տակ նկատում ենք փարատւած. անցան գիշերային մըրիկները, և փիլիսօփայական ծանրաչափը (բարօմետր) գուշակում է մի գեղեցիկ առաւօտ»:



Ն Ե Զ Ը Ր Ե Ե Կ Ն

1. Մ Ա Մ Ո Ւ Լ

Նազարեանի կեանքը

Ստեփաննոս Նազարեանը ծնւել է Թիֆլիսում 1812 թ.: Նախնական կրթութիւնն ստացաւ իր հօր՝ եսայի քահանայի մօտ, որը Պարսկաստանի Խօյ գաւառի գաղթականներից մէկն էր և իր բնաւորութեամբ լուրջ և խստաբարոյ մարդ էր: Այսուհետեւ ուսումը շարունակելով Պօղոս վարդապետի ձեռքի տակ՝ 1824 թ. մտաւ Ներսիսեան դպրոցը, դասընկերունեալով: Աբովեանին: 1827 թ. աւարտեց՝ դուրս բերելով ուսումնարանից, Աբովեանի նման, «մի քանի կենդանի սերմեր, մի ազնիւ ձգտողութիւն դէպի ուսում»: Բժ. Սոլոմոն Տէր-Ղուկասեանի օժանդա-

կութեամբ նազարեանին և յաջողւեց մտնել Դօրպատեան համալսարանը (1835 թ.): 1840 թ. աւարտեց լեզւագիտական ճիւղը, երկու տարուց յետոյ ամուսնացաւ գերմանուհու հետ և այնուհետև Պետքը բուդում պաշտօն էր որոնում: Շուտով ձեռք բերեց լազանի համալսարանում արևելագիտութեան ամբիոն: Բայց այստեղ նա գոհ չէր իր վիճակից, ունէր միքանի ունկնդիրներ և գրեթէ մենակ էր զգում իրան: 1849 թ. փոխադրւեց Մօսկուա և մտաւ Լազարեան ճեմարանի նորաբաց լիկէոնը, ուր նա պիտի դասախոսէր պարսիկ և արաբ լեզուներ: Մօսկուայում նա դասաւ իր ուզած հասարակութիւնը: այստեղ նրա եռանդն աւելացաւ, և գրիչը դարձաւ աւելի բեղմնաւոր: Մէկը միւսի ետևից լոյս էին տեսնում նրա գրական վաստակները: 1855 թ. հիմնեց «Հիւսիսափայլ» ամսագիրը, որ հրատարակւեց վեց տարի, մինչև 1864 թ., մի տարւայ ընդհատումով (1863 թ.): Այնուհետև նազարեանին տեսնում ենք Ներսիսեան դպրոցում վերատեսչի պաշտօնով, որ նա ստանձնեց 1869 թ. բայց համերաշխութիւն չ'գտնելով հոգաբարձութեան կողմից՝ 1871 թ. հրաժարւեց պաշտօնից և վերադարձաւ Մօսկուա, ուր շարունակեց իր պաշտօնը Լազարեան ճեմարանում: Նազարեանը մեռաւ 1879 թ.: Նրա մարմինը ամփոփւած է Մօսկուայի հայոց գերեզմանոցում: դամբարանի վրայ Մօսկուայի հայ հասարակութեան ճեռներէցութեամբ կառուցւած է մահարձան:

туры до конца XIII ст.[“]: *Беркемпүрәт* ғұрғар, ор шаша-
жынғи ғарпенәкпүтіннан է, оңынғи հետебеәл ғերңашағи-
рәр. „Обозрение истории гайканской письменности
въ новѣйшія времена“: *Аյғ* аշխашаппүтіннебар, һи-
ғарк հայոց գրականпүтіннебар, պատմпүтінн, оչ այս-
քան կարեոր և оչ էլ ինքնпүтіннебар, երկեր են: Բայց հե-
տաքрәрәкаկան է յառաջաբանը, орбі мәсіні կ'խосиңеңе
իր տեղпүтм: Նազарեանը գրել է և ուրիշ ուռасերէն
աշխашаппүтіннебар՝ պարսիկ բանաստեղծ Սաադի
„Гюлистанъ“, „Фирдуси“: 1851 թ. Ս. Նազарեանը
հրատարակեց «Յաղագս փորձական հոգեբանпүтінн
ձառ» (1851 թ.), իսկ 1853 թւին «Վարդապետական
կրօնի», орпнаг հետաքрәрәкаакаң կողմը գարձեալ յա-
ռաջաբանнебарն են. Նրանց մասին խօսք կ'լինի յետոյ:
Յիշենք նաև «Առաջին հոգեղէն կերակուր» և «Հան-
դէս նոր հայախօսпүтінн» երկու ահագին հատорնե-
րը, орпнаг մէջ զետեղւած են ընթերցանпүтінн բազ-
մատեսակ նիւթեր բոլոր հասակների համար: Նազա-
րեանը մінде аշխашаппүтінн է գործ գրել նաև թարգմա-
նական երկերի վրայ, орпнагопү լի է «Հիւսիսափայլը»:
Առանձին գրքопү լոյս է տեսել «Պաւոս և Վիրգինէ»,
վէպ Բերնարդէն դը Սան Պիերի:

«Հիւիսափայլ»

Երբ Նազարեանն սկսեց հրատարակել «Հիւսիսափայլը», նա 46 տարեկան էր. դա մի այնպիսի հասակ է, երբ մարդու բնաւորութիւնը և հայեացքները բոլորովին կաղմակերպւած են լինում:

Նա մտաւ ասպարէզ՝ լի ինքնավստահութեամբ և
ջերմ հաւատով դէպի իր խօսքի զօրութիւնը։ Նա իր
վրայ նայում էր, որպէս առաքեալի, որը կոչւած է

լուսաւորելու մի ամբողջ ժողովուրդ։ Նա ուսուցանում էր, որպէս ուսուցիչ, և քարոզում, որպէս վարդապետ։ Ինչպէս առաքինի և մաքուր էր նա ամբողջ կեանքում, այդպէս էր և իր բոլոր քարոզներում։ Նրա ոճը նոյնպէս կրում էր նրա հոգու ազնութեան դրոշմբ։ Նազարեանը գերազանցօրէն ըմբոնել էր ժամանակի ոգին և պահանջները, որոնք և դրդեցին նըրան հիմնել իր ամսագիրը։ «Հիւսիսափայլը» լոյս տեմնելուն պէս՝ զրաւեց առաջադէմ երիտասարդութեան համակրութիւնը։ Բոլոր անձինք, որոնք սեփականել էին եւրօպական լուսաւորութեան ոչ արտաքին փայլը, այլ էութիւնը, որոնք տողորւած էին հայրենասիրութեամբ և ազգին ծառայելու փափառվ, բոլոր ազնիւ և անկախ մտածողները համախլմբեցին «Հիւսիսափայլի» շուրջը, և առաջին տեղը զրաւեց Նալբանդեանը, Նազարեանի անվեհեր համարզը։

Որքան տարբեր լինէին իրանց խառնւածքով այդ երկու նշանաւոր գործիչները, նրանց հայեացքների մէջ, գոնէ սկզբում, մեծ տարբերութիւն չկար. շատ խնդիրներում նրանք միևնոյն դաւանանքի մարդիկ էին։ Նրանք զանազանուում էին գլխաւորապէս քաղաքական և ընկերագրական խնդիրներում, ինչպէս այդ յայտնեց վերջում։ «Հիւսիսափայլի» գաղափարը նրանք յղացել էին միասին դեռ ևս երկու տարի առաջ, և նրա թոյլաւութիւնն ստանալու համար Նազարեանի հետ աշխատում էր և Նալբանդեանը։

Այժմ տեսնենք, թէ ինչ խնդիրներ էր շօշափում Նազարեանը, ինչ էր քարոզում իր ազգին։

Ազգի մտաւոր և բարոյական վերածնութիւն եւրօպայի լուսաւորութեան միջնորդութեամբ—ահա ամենամեծ բարիքը, որ նա ցանկանում էր իր ազգին։

Հայը պիտի մտնի քաղաքակիրթ ազգերի շարքը, հաղորդակից լինի հանրամարդկային լուսաւորութեան։ Նա գրան հաւատում է, որովհետեւ ամենայն տեղ հայերի մէջ արդէն նկատում է «մի հոգեղին շարժողութիւն», մի անուրանալի ձգտում սեփականերու եւրօպայի իմացական կրթութիւնը։ Հայերը թէն ցիր ու ցան եղած են եւրօպա, Ասիա, Աֆրիկա, բայց նըրանք ունեն «անքակտելի կրօնական կենտրոն միութեան», որ ասել է թէ էջմիածնի պատրիարքական Աթոռը։

| Նազարեանի կարծիքով, հայը պատմական մեծ Հայերի գեր ունի կատարելու. «Նա ունի աշխարհի հրապարակի մէջ կատարելու մի օր մի մեծ և գեղեցիկ կան դեռը. խորհուրդ»։ Այդ մեծ և գեղեցիկ խորհուրդը հետեւեալն է. «Մեր սիրելի ազգը լինելով գլխաւոր քրիստոնեայ ժողովուրդը ասիական հողի վերայ, ունի առաւելապէս այն գեղեցիկ կոչումը, որ է՝ ընդունել իր մէջ եւրօպական ազգերի լուսաւորութեան արգասիքը, գործել և պատրաստել գորանց և տարածել ասիական մարդկութեան մէջ և այդպէս լինել Ասիայի համար մի լուսաւոր ճրագ, մի փարոսեան աշտարակ ասիական թանձր խաւարի մէջ»։

Բայց ինչ միջոցներով ազգը պիտի ընդունէ իր մէջ եւրօպայի լուսաւորութեան արգասիքը։ Նազարեանի յօգւածները մեծ մասամբ պտտում են այդ ինքը շուրջը։

| Նախ և առաջ, ի հարկէ, ուսում և բարեկարգ Ռւսում և դպրոցներ են հարկաւոր։ Նազարեանն առաջարկում դպրոցներ։ Է հիմնել միջնակարգ ուսումնարան, որ աւարտելուց յետոյ ուսանողները կարողանան բարձրագոյն ուսում ստանալ գերմանական համալսարաններում։ Ազգային կրթութեան հիմքում դրւած պիտի լինի ազգային լե-

զուն: Կրթւած դասատուներ պատրաստելու համար Նազարեանը աարտաք է գնում հոգևոր իշխանութեան վրայ հիմնել մի հոգևոր Ակադեմիա, որ լինի ազգային մայր-դպրոց Եւրօպական հիմքերի վրայ: Ուսումնարանին կից նա անհրաժեշտ է համարում նաև մի «ճոխ մատենադարան»:

Կրօն. Իբրև հաւատացող քրիստոնեայ, Նազարեանը մեծ գեր էր յատկացնում կրօնին բարոյական դաստիարակութեան մէջ: Կրօնը նա հասկանում է ոչ որպէս արտաքին ծիսակատարութիւն և չոր ու ցամաք հաւատ, այլ մանաւանդ գործ, աստածահաճոյ բարք և վարք և բարոյական կատարելութիւն:

Նախնի Եկեղեցին | Նազարեանը շատ բարձր է դասում Վ դարի հայ հոգևորականութիւնը և քրիստոնէութեան առաջին դարերի սուրբ հայրերին: Իր մի յօդւածում («Կրօնը և Եկեղեցին») նա ցոյց է տալիս սկզբնական Եկեղեցու պարզութիւնն իր սակաւաթիւ արարողութիւններով, որոնք կղերականների ձեռքով աւելի և աւելի բարդեցին և զանագան ազգերի մէջ ինքնատիպ գըրոշմ կրեցին:

Ներկայ Հոգևորականութիւն | Բայց Նազարեանը կշտամբում է այն հոգևորականներին, որոնք կրօնը ընդունում են լոկ որպէս ծիսակատարութիւն: Մի առաջնորդողում («Մտածող հայերի յօյսերը և ակնկալութիւնները ներկայումս») նա ցաւելով յայտնում է, որ հայոց Եկեղեցին գոյն Ռուսաստանում մինչև այժմ չէ եղել որպէս դպրոց քրիստոնէական դաստիարակութեան, այլ մի ամբոխ տգետ և անուսումն բարձի թողած պաշտօնեանների, որոնք արտաքին ծէսեր, արարողութիւններ՝ միայն կատարելով «պահպանել են քրիստոնէութեան չոր ու ցամաք ոսկեղին կերպարանքը, և հոգին, որ միայն կարող է կեցուցանել, վերացել է»:

Ուրեմն քանի որ հոգևորականութիւնն անպաշտաւած է, ազգի լուսաւորութեան զեկը պէտք է լիւ ըութեան նի կրթւած աշխարհականների ձեռքում: «Նոր տաղեկավարը ըու մտածմունք» առաջնորդողում աւածած է. «Աբեղաններին գործ չ'կայ այսուհետեւ ազգային խնդիրների մէջ, ժողովուրդը կարօտ է այժմ այլ ուսուցիչների, քան թէ կարող էր տալ նրան խուցերի մէջ փակւած, մարդկութիւնից ամենախին օտարացած մի հասարակութիւն»: Նազարեանը հոգևոր դասի տիսուր պատկերը, Նազարեանը կոչ է անում նորընտիր Մատթէոս կաթողիկոսին պատրաստել գիտուն և առաքինի պաշտօնեաններ, որ ուղղութեամբ ո. Գրքի հիման վրայ քարոզեն Աստուծոյ բանը ժողովրդին:

Եկեղեցու նշանակութիւնը և հոգևոր դասի վարչ Եկեղեցու կը բարձրացնելու համար Նազարեանը անհրաժեշտ էր բարեփոռ համարում արմատական բարեփոխութիւններ: «Եթէ խութիւն հայոց Եկեղեցին պէտք է այս մեր կլանող ժամանակին գիմանայ, պահպանւի, ապա անպատճառ պիտոյ էր նորան նորոգել իր հնացած և մաշւած կենդանութիւնը՝ միտ գնելով յառաջազէմ մարդկութեան պիտոյքներին: Հայոց Եկեղեցին պիտոյ է մի բեֆօրմ առներ ուաքից մինչև գլուխ, այսինքն, մի ազգու վերանորոգութիւն Աւետարանի հաստարմատ հիման վրայ, իհարկէ, ներգործելով արմատից դէպի վեր, ժողովրդի և հոգևորների դաստիարակութեամբ և կրթութեամբ մեր օրերի լուսաւոր հոգու համեմատ»:

Այս համարձակ կոչը մեծ անհանդատութիւն նազարատանեց Նազարեանի հակառակորդներին: «Մեղու հակառակայատանին», «Ճռաքաղը», «Կոռւնկը» միահամուռ գոչեցին. «Նազարեանը լութերական է, Նազարեանը հաւատուրաց է, Նազարեանը կամենում է ազգը գարձնել լութերական...»: Աւանդապահների պարա-

գլուխներից մէկը, Զէրքէզեան, որ աչքի էր ընկնում իր առանձին մոլեուանդութեամբ, յանձն առաւ միջնադրեան ինկվիզիտօրի պաշտօն և մի անդութ մեղադրականով դիմեց Վեհափառին։ Ներկայացնելով նազարեանին իրեւ հերձածող և ազգի պառակտիչ, առաջարկում էր ենթարկել առւտօ-դաֆէի «Հիւսիսափայլի» այն համարը, ուր տպւած էր յանցաւոր յօդածը (1860 թ., № 10)։ Սակայն Զէրքէզեանի որոգայթը նպատակին չ'հասաւ։

Հաւատարիմ իր վերանորոգչական սկզբունքներին՝ նազարեանը մարտնչում էր և այն բոլոր հնաւանդ հասկացողութիւնների դէմ, որոնք այլ ևս չէին համապատասխանում ժամանակի ոգուն։

Գրաբարի Սյդպիսի հին աւանդ էր և գրաբարը, որի շուրջէմ. ջը, «Հիւսիսափայլի» շնորհիւ, սկսւեց երկարատեև և ճակատագրական պայքար։ Որովհետև ժողովրդի մէջ ուսում և գիտութիւն տարածելու ամենամեծ խոչընդուռը հանդիսանում էր հին լեզուն, ուստի նազարեանը վեր կացաւ նրա դէմ և սկսեց իր դատը՝ ընտրելով հետեւեալ նշանաբանը. «Այսուհետև ոչինչ եղիպտական խորամանկ քուրմեր, որ կամէին լինել գիտութեան միակ պահապանքը. այսուհետեւ ոչինչ Զինէական պարիսպ, որ պիտոյ է փակէր լուսաւոր գաղափարների մուտքը ազգերի մէջ։ Այսուհետև լոյս և ծամարտութիւն և ազատութիւն խաւարի բաբելոնեան գերութիւնից։»

Աշխարհա- Այդ ժամանակ աշխարհիկ լեզուվ գրելը նորութիւն չէր, և այդ շատերը գիտէին։ Մ. Աղաբեկեանը հութիւնը «Կոռունկ» ամսագրի մէջ բերում է աշխարհաբարի պատմութիւնը և ցոյց է տալիս փաստերով, որ աշխարհաբարը նոյնքան հին ծագում ունի, որքան գրաբարը. «Հիւսիսափայլից» դեռ շատ առաջ աշխար-

հիկ լեզու գործ էին ածում Վենետիկի միսիթարեանները, Թաղիաղեան, Արովեան, Պատկանեան և այլն։ Բայց ոչ ոք զրա դէմ ոչինչ չէր խօսում։ Ինչնու ուրեմն «Հիւսիսափայլի» օրով սկսւեց պայքարը։ Պատճառը հասկանալի է։ Հին, որբազան լեզուի լինել չը լինելու, նրա գոյութեան խնդիրն էր որոշում։ «Հիւսիսափայլը» նազարեանի և նալբանդեանի բերանով համարձակ յայտարարում էր, որ գրաբարի դարն անցել է, որ հնացած՝ մեռած լինելով՝ այլեւ անկարող է բաւականութիւն տալ ժամանակակից պահանջներին։ Ուստի անհրաժեշտ է ստեղծել նոր լեզու։ Նազարեան

Աշխարհիկ լեզուի խնդիրը դեռ շատ առաջ գրա-աշխարհա-ղեցնում էր նազարեանին։ 1846 թ. Ղազանում տըպ-բարի ջա-ւագով. «Обозрение истории гайканской письменности» յառաջարանում նա գրում է, որ հին հայկական լեզուն չէ կարող ծառայել իրեւ մինորդ լուսաւորութեան այժմեան հայերի համար։ Դեռ այդ ժամանակից նազարեանը յայտնի էր իրեւ աշխարհիկ լեզուի պաշտպան։ Իր. Պատկանեանը 1850 թ. «Արարտի» մէջ գովում է նրան աշխարհաբարի պաշտպանութեան համար։ 1851 թ. տպւած «Յաղագս փորձական հոգեբանութեան ճառ»ի մէջ նազարեանը յայտնում է, որ պէտք է շտապել կազմելու «նոր և գիւրընկալ լեզու գլութեան», որի համար նա գտնում է ճոխ նիւթեր թէ հին լեզու և թէ ընտիր ժողովրդական բարբառների մէջ։ Այդպիսով լեզուն էլ կ'մաքրւի օտարաբանութիւններից։ Ոչինչ, եթէ նոր լեզուն ունի թերութիւններ, ապագայում նա կ'կատարելագործւի. «Թող լինի թերի և անկատար աշխարհիկ հայկաբանի առաջին վաստակները. իւրաքանչիւր մի բան ըսկը գրում եղել է փոքր և աննշան և օրբստօրէ առաջ գնալով դիմել է դէպի կատարելութիւն»։ Գալով գր-

րաբարին, Նազարեանն ասում է. «Դիւրին է յարուցանել մեռեներին գերեզմաններից, քան թէ հին լեզւի միջոցով նոր ժողովուրդ լուսաւորել»: Աշխարհաբարի անհրաժեշտութիւնը շեշտւած է նոյնպէս «Վարդապետարան կրօնի» աշխատութեան մէջ (1853): Իր բոլոր կարծիքները լեզւի մասին Նազարեանն ամփոփել է մի ընդարձակ առաջնորդող յօդւածում, որ տպեց 1858 թ. «Հիւսիսափայլ» առաջին համարում հետևեալ վերնագրով՝ «Հայկական լեզւի խորհուրդը»: Դա մի լուրջ հետազօտութիւն է՝ հիմնած պատմալեզւագիտական փաստերի վրայ: Սկզբում խօսելով լեզւի նշանակութեան մասին՝ գրում է. «Հայոց ազգի տունը պիտոյ է և կարող է շինուել նորա լեզւի շնութեամբ: Լեզուն է, որ անապատները շինել է բարեկարգ քաղաքներ և կազմել մարդկային ընկերութիւններ»: Յոյց տալով աշխարհիկ լեզւի կարևորութիւնը և գրաբարն համարելով «մեռած», «պիտանի միայն գիտնական հային», Նազարեանը երկար խօսում է հայոց լեզւի հնդ-եւրոպական ծագման, նրա հրնչիւնների և օտար լեզուներից կրած ազդեցութիւնների մասին: Բացատրում է, թէ գրական լեզւի զարգացման պրօցեսում ինչ դեր ունեն կատարելու ժողովրդական բարբառները, որոնցից լաւագոյնը համարում է արաբատեանը: Գալով արևելեան և արևմբատեան բարբառներին, Նազարեանը վսաս չէ տեսնում երկու գրական լեզուների մէջ. «Եւ ի՞նչ վսաս կայ, մի ծաղկի տեղ, երկու ծաղիկ ունենալ ազգի մէջ. թող աճեն և զօրանան այդ երկու ճիւղերը նոյնարմատ ծառի, թող ծաղկին ու պտղաբերեն դոքա. այնուհետեւ կ'պատենք ամեն մինը, նայելով նորապտղների պատւականութեանը»:

Բացի գրաբարից, Նազարեանը խիստ քննադա-

տութեան էր ենթարկում և հին մատենագրութիւնը: Հին մա-«Վարդապետարան կրօնի» յառաջաբանում նա երկար տեսականգ է առնում այդ հարցի վրայ: Հին մատենագրութիւնը, ասում է, չէ կարող հոգեղին մնունդ տալ մեր ժամանակի հային. ըստ որում չունի իր մէջ այն մննդաբար նիւթը, որ կարող էր գոհացնել նրա մտաւոր պահանջները: Բարձր դասելով Մովսէս Խորենացու, Ագաթանգեղոսի, Եղիշէի և միւս հեղինակների վաստակները և համարելով նրանց հին լեզւի թանկագին յիշատակարաններ, նա այնուամենայնիւ գտնում է, որ կենդանացուցիչ նիւթեր չ'կան հին մատենագրութեան մէջ: Եթէ հայոց զաւակը, շարունակում է Նազարեանը, տեսնելով, որ իր մայրենի լեզուն անհիւթ և անծուծ է, իսկ կենդանի և զօրութիւն տւող հիւթը գտնում է օտար լեզւի մէջ և օտարի կերակրով սնունդ առած՝ ինքն էլ սկսում է օտարանալ, մի է մեղաւոր:

Նազ.

Նազարեանի յարձակումները հին լեզւի և մատենակառանագրութեան դէմ իրարանցում առաջացրին աւան-կորդները. դապահների բանակում: Առաքել Արարատեան և Յովսէփ Զէրքէզեան, որոնք աչքի էին ընկնում իրանց մոլեուանդութեամբ, վեր կացան Նազարեանի դէմ: Եւ սկսեց կատաղի պայքար: Մինչդեռ Նազարեանը յենում էր պատմա-լեզւագիտական փաստերի վրայ, վկայութիւններ էր բերում եւրոպական գիտութիւններից, նրա հակառակորդներն առաջնորդւում էին սխոլաստիկ բացատրութիւններով և հիմնում էին բիբլիական աւանդութիւնների վրայ: Նազարեանը պնդում է, որ հայոց լեզուն հնդ-եւրոպական ծագում ունի, իսկ նրանք՝ թէ դա նոյնի լեզուն է, աշխարհի ամենահին և սրբազն լեզուն: Արարատեանը կուում էր բրօշիւրներով: 1858 թ. հրատարակեց երկու գրր-

քոյկ՝ «Դիմագրաւ ընդդէմ սատան յարուցանելոց ամենապատւական լեզվիս Հայոց» և «Սխալանք գլուխն, որ կոչի Վարդապետարան կրօնի»։ Իսկ Զէրքէղեանը իր շահատակութեան ասպարէզ ընտրել էր «Մեղու Հայաստանին», որի մէջ 1860 թ. նա տպեց երկու ընդարձակ յօդւածներ Նազարեանի դէմ։ Առաջին յօդւածում նա յայտնում է իր զայլոյթը, որ Նազարեանը գրաբարին յատկացնում է անվայել ածականներ՝ «անծուծ», «անհիւթ», «ժանգոտած», «փտած», որ նա հայոց լեզուն չէ ընդունում որպէս Նոյեան լեզու։ հակառակորդին հերքելու համար հեղինակը բերում է վկայութիւններ Աստւածաշնչից և Մովսէս Խորենացուց։

Միւս յօդւածն աւելի անպատկառ էր։ Այստեղ Զէրքէղեանը նպատակ է գնում իր առաջ անւանարկել Նազարեանին, ցոյց տալ, որ նրա գործունէութիւնը նոյն իսկ վնասակար է աղջի համար։ Բայց չը բաւականանալով այդքանով, նա քըքրում է նրա անհատական կեանքը, միբաւորում է նրա անձնաւորութիւնը։

Զէրքէղեանից ետ չէր մնում իր գրաբարամոլութեամբ ոմն Աղնաուը (Տեղկահայ), որ 1862 թ. Փարիզ լրագրում գետեղեց մի յօդւած ՚ի պաշտպանութիւն գրաբարի և նոր լեզվի դէմ։

Աշխարհիկ լեզուն նա անւանում է «աղաւաղ», «խուժադուժ», «անկիրթ բարբառ», «խոտորմունք գրաբարի»։ Նա յայտնում է, որ մեծ ազգասիրական գործ կատարած կ'լինի նա, ով կ'վերցնի և ամեն տեղ, ուր գտնում են աշխարհիկ լեզուվ գրւած դպրոցական մատեաններ, բոլորը կրակի ճարակ կ'դարձնէ։ Նա միենոյն ժամանակ յոյս է տածում, որ այդ բարեգործութիւնը կ'սկսի Թէօդոսիայից, ուր այս ժա-

մանակ Գ. Վ. Այվազեանը հրատարակում էր «Մասեաց Աղաւանին» և կառավարում էր Խալիլեան ու սումնարանը։

Աշխարհաբարի վերջնականից յարցը

Չնայած այդ բոլոր հակառակութիւններին, մասնուկ աշխարհաբարը, «Հիւսիսափայլի» շնորհիւ, ճակատագրական պայքարից դուրս եկաւ յաղթանակով թանակը։ Կ ընդ միշտ հաստատեց հայոց գրականութեան մէջ։ Եթէ «Հիւսիսափայլ», յանձին Նազարեանի և Նալբանդեանի, հրապարակ չ'հանէր աշխարհիկ լեզվի հարցը և մուրճի պէս չ'ծեծէր, անտարակոյս, գրաբարը գեռ ևս երկար ժամանակ պիտի իշխէր գրականութեան մէջ, և հայի քանքարը պիտի մնար կաշկանդւած և անգործ, որովհետեւ Արարատեաններ և Զէրքէղեաններ գեռ ևս անպատկաս էին մեզանում։ Նոր գրական լեզվի յաղթանակը Նազարեանի գլխաւոր ծառայութիւններից մէկը պէտք է համարել։

Նազարեանն արծարծում էր և ուրիշ հասարակական նշանակութիւն ունեցող խնդիրներ։ Օրինակ, կական նա կոչ էր անում հիմնել «ընդհանուր հայկական ընկերութիւն», որի նպատակը լինի նպաստել աղջի մտաւոր յառաջադիմութեան։ Այդ կոչը արձագանք գտաւ և իրականացաւ մի քանի քաղաքներում (Բագու, Նոր Նախիջևան)։

Նազարեանն առաջ քաշեց և թատրոնի հարցը։ Թատրոն «Հիւսիսափայլ» մէջ տպելով Շիլերի դատողութիւնը թատրոնի նշանակութեան մասին («Թէ ի՞նչ բարոյական խորհուրդ ունի մի ազգային թատրոն»), նա իր կողմից, վերջաբանում, աւելացնում է իր կարծիքները հայ թատրոնի մասին։ Նրա կարծիքով, թատրոնը, բացի ուրիշ օգուտներից, կարող է նշանակութիւն ունենալ և հասարակական զգացումների մասին։

Թատրոնի գր. պատմ.



դաստիարակութեան համար, քանի որ «հայոց ազգը չունի հասարակական կեանք»: Միևնույն ժամանակ թատրոնը այնպիսի հիմնարկութիւն է, ուր հայ կանայք, որոնք բոլորովին «արտաքսւած» են տղամարդկանց հասարակութիւնից, հնարաւորութիւն կունենան շփւել հասարակութեան հետ:

Հայ Նազարեանին զբաղեցրել է և կանանց հարցը: Երկու սեռի մէջ նա հաւասարութիւն չէ ընդունում. նրա կարծիքով, տղամարդու մէջ ամեն բան աւելի զօրեղ է. կինը աւելի թոյլ է ֆիզիքապէս և մտաւորապէս: Բայց դրանից դուրս՝ Նազարեանը կանանց ջատագով է, նրանց իրաւունքների պաշտպան: Նայտկացնում է կանանց գործունէութեան լայն ասպարէզ: Նրանք պիտի սովորեն, երբ հարկը պահանջում է, իրանց հարցը հայթնայթել և թոյլերին օգնել: Նրանց առաջ բաց են գիտական, գեղարեսատական, վաճառականական և այլ ասպարէզներ: Կանանց թուլութիւնը Նազարեանը դժբախտութիւն չէ համարում ընտանիքի համար, որովհետեւ տղամարդը և կինը միմեանց լրացնում են:

Կինն ունի մի գեղեցիկ յատկութիւն, որից գուրկ է տղամարդը. կանանց հասարակութիւնը ազնւացնող զօրութիւն ունի. «Եւրօպացոց բարք ու վարք ազնւացնոցից եղել են միշտ կանանց ընկերութիւնք»: Կինը, Նազարեանի կարծիքով, իր ամբողջ աշխարհն իր ամուսնու մէջ պիտի գտնէ, նրա հետ կենակցէ, նրան նորիւի:

«Հիւսիս» Հրանդարակախօսութիւնը «Հիւսիսափայլի» ամենովանդանակարեւը բաժինն էր: Այնունետեւ պատկառելի տեղ կողմից, էին գրաւում նաև գիտութիւնն ու գեղարեսատական գրականութիւնը: Ամսագրի մէջ միշտ երևում էին ինքնուրոյն և թարգմանական գրաւածքներ գիտու-

թեան զանազան ճիւղերից. օրինակ, «Ինչ է դաստիարակութիւնը», «Մանկական խաղերի նշանակութեան մասին», «Ս. Թարգմանիչների դար», «Ճիւղերի շինւածքը», «Բարոյագիտական խորհրդածութիւններ» և այլն: Մեծ տեղ էր գրաւում գեղարեսատական գրականութիւնը, բայց գրեթէ բացառապէս թարգմանական էր: Տպւում էին մեծ մասամբ օտար լեզուներից թարգմանւած տրագեդիաներ, վէպեր և բանաստեղծութիւններ: Նազարեանի սեփական ճաշակը մեծ գեր էր կատարում թարգմանական գրքածքների ընարութեան մէջ: Նա համակրող էր դասական և րօմանատիկ ուղղութիւնների, մանաւանդ եթէ նրանց մէջ պարունակում էին բարոյական խրատներ: Այստեղ տպւում էին Պօնսարի, Ալֆիերիի, Կալդերոնի ողբերգութիւնները, Շատօքրիանի վէպերը, Կիկերոնի ճառերը: Նոյն իսկ Շիլլերի երկերից ընտրւած են ոչ լաւագոյնները: «Հիւսիսափայլի» մէջ բացակայում էին նոյնական ուռւունեղինակները, թէկ ուռւաց գրականութեան ծաղկած ժամանակն էր: Բացառութիւն կազմում է միայն Լերմօնտովի «Դիկ», որի գեղեցիկ թարգմանութիւնը կատարւած է վաղաթառամ երիտասարդ Սադաթեանի ձեռքով: «Հիւսիսափայլի» մէջ գրեթէ բացակայում էին ինքնուրոյն վէպեր և գրամատիկական գրւածքներ: Համեմատաբար աւելի հարուստ էր բանասաեղծական բաժինը, ուր տպւում էին Նալբանդեանի, Շահազիգեանի, Քուչուբեկեանի, Գ. Բարխուդարեանի և ուրիշ հեղինակների ոտանաւորները: «Հիւսիսափայլին» աշխատակցում էին նաև Ռ. Պատկանեան (Վայելչեան), ՄէլիքՅալիսբեան (Րաֆֆին), Մ. Միանսարեան, «Քնար Հայկական» յայտնի երգարանի խմբ, հրատարակիչը, Խորէն Ստեփանէն, «Հայկական Աշխարհի» խմբ. ևն:

Նազ. «Հիւսիսափայլը», չնայած իր մի քանի թերուժառայում թիւններին, եղել է և կմնայ միշտ ոռւսահայ մտաթիւնները. ուր վերածնութեան ամենանշանաւոր երեսյթներից մինը: Դարեշրջանի լաւագոյն իդեերը և իդէանները ամենայն հարազատութեամբ անդրադարձել են այդ ամսագրի մէջ: «Հիւսիսափայլի» քարոզած գաղափարները լուսաւորութեան, աշխարհիկ լեզվի, եկեղեցու բարեփոխութեան և ընդհանրապէս հայկական կեանքի բարելաւութեան մասին դարձան հասկացող դասակարգի սեփականութիւն և հետզհետէ սկսեցին իրականանալ: Այժմ ովկ կարող է ուրամնալ այդ օրգանի խոր ազգեցութիւնը ժամանակակից և յաջորդ սերունդների վրայ: Եւ այդ ծառայութեան համար մենք նախ և առաջ պարտական ենք Նազարեանին, որի նոյն իսկ անձնաւորութիւնը մի իրախուսիչ և մի թարական բացառութիւն էր հայկական տիսուր իրականութեան մէջ: Կայ արդեօք մի ուրիշ հայ գործիչ, որ աւելի մաքուր, ամբիծ հոգի ունենայ, աւելի շնորհ մտածողութիւն և աւելի ազնիւ ու բարի սիրտ: Եթէ Նազարեանը, իբրև մահկանացու, գործել է սիսաներ, նրանք շատ չնչին են և նսեմանում են նրա պայծառ անձնաւորութեան և ազգին մատուցած մեծամեծ ծառայութիւնների առաջ:

«Կ Ո Ռ Ն Լ»

Պահպանողական թերթերի մէջ ամենից համակրելին էր «Կոռուկ» ամսագրիրը (1860—1863 թ.):

«Հիւսիսափայլի» և «Կոռուկի» հայեացքների մէջ կար հետևեալ տարբերութիւնը: «Հիւսիսափայլը» խիստ քննադատութեան էր ենթարկում հայկական իրականութիւնը, հայի փրկութիւնը տեսնում էր եւ

րօպական լուսաւորութեան մէջ և ազգի լուսաւորութեան ղեկը յանձնում էր աշխարհականների ձեռքը: «Կոռունկը» աւելի ներողամիտ էր դէպի հայի պակասութիւնները, ոգեորւում էր ազգի անցեալով, փառաբանում էր Հայաստանեայց եկեղեցին, ազգի վըրկութիւնը տեսնում էր կրօնական—բարոյական վերածնութեան մէջ, եւրօպայի լուսաւորութիւնն ընդունում էր վերապահնումներով և ժողովրդի դաստիարակութեան գեկը յանձնում էր հոգեորականներին:

«Կոռունկը» ազգութեան հիմքը և գլխաւոր պայմանը համարում էր կրօնը, իսկ հայերի ազգութեան հիմքը Հայաստանեայց եկեղեցին: Խմբագիր Աղաբեկանն ասում է մի առաջնորդողում: «Մեր քրիստոնեայ նախնիք երբէք իրենց ազգութիւնն եկեղեցից չ'բաժանեցին. իրանց մէջ հայութիւն ու եկեղեցի նոյնանշան խօսքեր էին»: Հրատարակիչ Էնֆիաջեանը նոյնպէս կրօնի ջատագով է և ամսագրի նպատակն համարում է Հայաստանեայց եկեղեցու և լեզվի պաշտպանութիւնը: Հայ ազգը պէտք է ամուր պահէ այդ պաշտելի հաստատութիւնը, որովհետև քրիստոնէական լոյսը մեր նախահայրերի «արի նահատակութեամբ, առաքինի համբերութեամբ և մեծ իմաստութեամբ թողած ժառանգութիւն է»: Մեր ազգային միութիւնը խախտեց այն օրից, երբ ժողովրդի մի մասը բաժանեց զանազան դաւանութիւնների: Աղաբեկանը ոգեորւած է այն յուսով, որ «քրիստոնէական լոյսը պիտի վերատին ժողովի մեջ, միացնէ և մի մարմին կազմէ»:

Հակառակ «Հիւսիսափայլի» կրօնական ներողամտութեան, «Կոռունկը» լուսաւորական եկեղեցուց դուրս հայութիւն չէր ճանաչում, ինչպէս ցոյց տեց նրա վերաբերմունքը մի դէպքի առիթով, որ տեղի

ունեցաւ կ. Պօլսում: Պօլսեցի հայերը չեն թողնում
մի բողոքականի մարմինը թաղել հայոց գերեզմանու-
ցում: Ննջեցեալի տէրը գիմում է գեսպանի պաշտ-
պանութեան: Միջամտում են իշխանութիւնը և զօր-
քը: տեղի է ունենում ընդհարում, ժողովուրդը տաս-
նեալ գոհեր է տալիս,—և այս ամենը մի կտոր հո-
գի համար: Մինչդեռ փանատիկոսների այդ չար ա-
րարքը սաստիկ զայրացրեց նարարեանին, «Մեղու-
Հայաստանին» և «Կոռունկը» կեցցէներով փառաբա-
նեցին մոլեռանդ ցուցարարներին: «Փառք և պատիւ
Ստամբօլու Հայոց, որ իրանց կեանքը չեն ինայած
մահու տալ, որ հաւատուրացի մարմինը իրանց ուղ-
դափառ եկեղեցւոյ գաւակիների հետ մէկտեղ չ'թաղ-
ւի»,—ցնծութեամբ բացականչում է «Մեղու Հայաս-
տանին»: Այժմ համկանալի է, թէ «Կոռունկի» դեկա-
վարների կարծիքով ում է պատկանում ազգի լուսա-
ւորութեան դեկր: «Մեր հայոց աշխարհի որդոց
խղճալի վիճակից հանողը, փրկող, ուսում տւողը, դե-
կավարողը Հայաստանեայց եկեղեցւոյ առաքինի և
շնորհալի պաշտօնեայք պիտի լինին», — առած է
«Կոռունկի» մէջ:

Կրօնից յետոյ, «Կոռունկը» առաջին տեղը տալիս
բարոյականութեան: Բարոյականութիւնը ծագում է
կրօնից և նրա անբաժան մասն է: Երբ թուլանում է
կրօնական զգացումը, թուլանում է և բարոյականու-
թիւնը: Ազգը զօրեղ է կրօնով և բարոյականութեամբ:
Երբ ազգի մէջ թուլանում են թէ մէկը և թէ միւսը,
ազգն ընկնում է, ինչպէս յոյները և հոգովմայեցիք:
Գրական լեզուի խնդրում «Կոռունկը» աշխարհա-
բարի կողմանակից է, թէև խորին պատկառանքով է
պիսում Հայաստանեայց եկեղեցու և լեզուի մասին:
«Աշխարհաբարին կեանք» և յառաջադիմութիւն, գրա-

բարին միշտ կեանք և անմահութիւն», գրում է Գ.
Սրվանձտեանը, ցանկանալով հաշտեցնել գրաբարը
աշխարհաբարի հետ:

Գալով գեղարւեստական գրականութեան, «Կո-
ռունկի» մէջ գերադասւում էին ինքնուրոյն երկերը:
«Հիւսիսափայլը» ոյժ էր տալիս երօպական մտքի
արտագրութիւններին, իսկ «Կոռունկը» հայկական
մտքի: Այստեղ միշտ երկում էին զանազան պատ-
կերներ ժողովրդական կեանքից. հանդէս էր գալիս
երկանցոց և աշտարակեցոց կեանքը Աբովեանի և
Պոչեանի գրւածքներում, օր. «Օվաննա», «Զանգի»,
«Սոս և Վարդիթեր». Թաւրիզի և Աստապատի հայոց
կեանքից տեսարաններ Գ. Շերմազանեանի գրամա-
տիկական պատկերներում, օր. «Իմ նշանածը Արագն
այ», «Ազգային հարսանիք», թիֆլիսեցոց կեանքը
Գ. Տէր-Աղէքսանդրեանի և Սարգսի պատմւածքներում,
օր. «Ուխտագնացութիւն ՚ի Թէլէթ»:

«Կոռունկի» բանաստեղծութիւնները ևս տոգոր-
ւած էին ժողովրդական ոգով: Յովի. Ամերիկեանի
«Գարունք Հայոց» և «Մշու թոշուն օտար երկրում»
գողարիկ ժողովրդական բանաստեղծութիւններ են՝
թէև միօրինակ յանգերով:

«Կոռունկի» մէջ տպւում էին նաև Գամառ-Քա-
թիպայի բանաստեղծութիւնները՝ «Քաջ Վարդան Մա-
միկոնեանի մահը», «Ծեր այրը» և այլն:

Լեզուի նկատմամբ նոյնպէս մէծ աարքերու-
թիւն կար երկու ամսագիրների մէջ: «Հիւսիսափայ-
լի» լեզուն գրւած էր կանոնների տակ, քերականա-
կան ձևերով յիշեցնում էր գրաբարը, իսկ «Կոռուն-
կի» լեզուն մօտենում էր խօսակցականին և օգտուում

Էր ժողովրդական բարբառներից: «Կոռոնկի» մէջ գրական լեզվի հետ անխտիր գործ էին ածւում արարատեան, թիֆլիսեցոց, աստաղատցոց և տաճկահայ բարբառներ:

«Կոռոնկը», «Հիւսիսափայլի» նման, նոյնպէս տալիս էր յօգւածներ գիտութեան զանազան ճիւղերից. օքինակ, «Հինգերորդ դարու հայ կանայք», «Խաչակրաց արշաւանքը», «Եւրօպայի քաղաքակըրթութեան պատմութիւնը»—Գիղօի, «Խորհրդածութիւն դաստիարակութեան մասին»—Լոքի, «Մի քանի խօսք Արովեանի վրայ»—Տէր-Ազարեանի և այլն:




ՀԱՆԱՍԵՂԾՈՒԹԻՒՆ

Վերածնութեան հարազատ զաւակն էր և բանասեղծութիւնը: Դժւար է երեակայել աւելի սերտ կապակցութիւն կեանքի և գրականութեան մէջ: Հայկական պօյէզիան մի անդամից կանգնեց ուղիղ շաւդի վրայ և դարձաւ իրականութեան արտայայտիչ: Դարեշրջանի տիրապետող գաղափարները՝ լուսաւորութեան քարոզներ, հայրենասիրութիւն, աշխարհաբարի գատը—բոլորը արձագանք էր գտնում բանասեղծների երգերում: Բանաստեղծ և հրապարակախոս երգում էին միևնույն երգը:

Հայկական մուսան թողել էր եթերային բարձունքը և միստիկ աշխարհը, իջել էր երկիր, շրջում էր մարդկանց մէջ, զարթեցնում էր քնածներին, աւետում էր արշալոյս և ոգեսրում էր ապագայի վայոյսերով: Վերածնութեան առաջին երգը երգեց Ռ. Պատկանեան. նրան ձայնակցեցին Նալբանդեան և Շահազիզ:

Մենք կ'սկսենք Նալբանդեանից, որովհետեւ նա վերածնութեան ամենատիպիկ ներկայացուցիչն է և իր գործունէութեամբ շատ մօտ է կանգնած «Հիւսիսափայլին»:





ՆԵԼԲԸՆԹԵԸ

Նրա կեսնքը.

Միքայէլ Նալբանդեանը ծնւել է Նոր Նախիջևանում 1829 թ. նոյեմբ. 2-ին։ Նրա հայր ուստա Ղազարը՝ ծանրաբեռնւած ընտանիքով և զուրկ միջոցներից՝ անկարող էր կանոնաւոր ուսում տալ իր որդուն։ Բարեբախտաբար, այդ ժամանակ Նոր Նախիջևանում Գաբրիէլ քահ. Պատկանեանը բացել էր մի ուսումնարան, ուր նա Միքայէլին ընդունեց ձրի։ Նալբանդանդեանը գեռ ևս մանկութեան ժամանակ ցոյց էր տալիս որամտութիւն և իր երգիծական որձերը զբում էր ընկերների վրայ։ Տէր Գաբրիէլը՝ լինելով

բանաստեղծ՝ աշխատում էր իր սաների մէջ զարդացնել բանաստեղծութեան սէր և զրել էր աալիս շարադրութիւններ. նոյնպէս իբրև հոգեօրական, ներշնչում էր աշակերտներին կրօնական զգացում։ Կրօնական դաստիարակութիւնը անջինջ հետք թողեց նալբանդեանի հոգում, և նա մինչև վերջ չ'սառեց դէպի կրօնը։ Պատկանեանի ուսումնարանում զարգացաւ նրա մէջ նաև քննադատական ոգին, որ նոյնպէս պէտք է վերագրել նրա զեկավարի ագղեցութեան։

Ներսէս կաթողիկոսի հրամանով Տէր Գաբրիէլը 1846 թ. ակղքում պաշտօնով տեղափոխւեց Թիֆլիս, որից յետոյ Նալբանդեանի ուսումը վերջացած կարելի է համարել։ 1848 թ. Մատթէոս արք. Վեհապետեանը նշանակւեց Բեսարաբիայի թեմի առաջնորդ։ Նալբանդեանը գարձաւ նրա քարտուղարը, շուտով մեծ հեղինակութիւն ձեռք բերեց թեմի հոգեօր կառավարութեան մէջ և գարձաւ առաջնորդի ամենամօտ անձը։

Մի համգամանք Նալբանդեանին նետեց հասարակական ասպարէզ։ Նոր Նախիջևանի պատւաւոր քաղաքացիներից մէկը՝ Խալիպեան՝ տարիներ առաջ Ներսէս Աշտարակեցու ցանկութեամբ նշանակւել էր Եկեղեցական Եկամուտների գանձապահ։ Տարիների ընթացքում Եկամուտներից գոյացել էր բաւական մեծ գումար։ Առաջնորդը սկզբից և եթ Խալիպեանից պահանջեց Եկեղեցական հաշիւները և նրա մօտ եղած գումարը։ Որովհետև Խալիպեանը՝ զգալով իր մէջքին ոյժ՝ խուսափում էր հաշւետեռութիւնից կամ թագցնում էր իր փսկական գումարի քանակը, ուստի այդ հողի վրայ յարուցեց մի կատաղի պայքար, որ գնալով ասսակացաւ, և քաղաքը բաժանեց Երկու թշնամական քանակի՝ Խալիպեան և Հայրապետեան։

Վերջին կուսակցութեան հոգին Նալբանդեանն էր: Բայց նրա դիրքը շուտով խախտւեց, երբ Ներսէս կաթողիկոսը, տեսնելով, որ կուսակցական պայքարը սուր կերպարանք է ստանում և Նալբանդեանին համարելով խռովարար, նրան պահանջեց էջմիածին: Սակայն քերջինս հարաւ գնալու փոխարէն՝ աճապարեց դէպի հիւսիս: 1853 թ. Պետերուրդի համալսարանում ուսուցչական քննութիւն տալուց յետոյ, նըշանակւում է Լազարեան ճեմարանի հայոց լեզվի դաստու: Այս պաշտօնում նա երկար չմնաց: Էջմիածից նրան դարձեալ պահանջեցին, և այս անգամ նա ոչինչ չէր կարող անել, եթէ Ստ. Նազարեանի և Մովսէս Քահանայի միջամտութեամբ նա չ'ազատւէր հետամտութիւնից:

Մոսկվայում հաստատւելով՝ Նալբանդեանը, իբրև ազատ ունինդիր, համալսարանում լսում էր բժշկական դասախոսութիւններ: Այդ ժամանակից էլ սկսւում է նրա բարեկամութիւնը Նազարեանի հետ:

Այս տարիներում Նալբանդեանը շատ կարդում էր: Լուրջ ընթերցանութեամբ աշխատում էր լրացնել իր ուսման պակասը: Մի քանի տարւայ ընթացքում նա ուսումնամիրեց զանազան դիտութիւններ՝ օր. պատմութիւն, բնագիտութիւն. ձեռք բերեց մեծ հմտութիւն ուսաց և եւրօպական գրականութեան մէջ. ծանօթացաւ Բելինսկու գրւածքների հետ և այսպիսով ստեղծեց իր համար քննադատական լուրջ սկզբունքներ:

1858 թ. Նալբանդեանը դարձաւ «Հիւսիսափայլի» եռանդուն աշխատակիցը կոմս էմմանուէլ անունով:

Հետեւեալ տարւայ սկզբում ուղիւրւեց արտասահման՝ առողջութիւնը կազդուրելու և աշխարհ տեսնելու նպատակով: Այցելեց Եւրօպայի գլխաւոր քա-

ղաքները, ի միջի այլոց Վենետիկ: Իր ուղեգրական տպաւրութիւնները նա ուղարկում էր «Հիւսիսափայլին», ուր տպւում էին «Յիշատակարաններ» խորագրով: Իր այցելած քաղաքների մասին նա շատ սակաւ տեղեկութիւններ էր տալիս, անուշադիր էր թողնում եւրօպական կեանքի աչքի ընկնող երեսյթները: Նա տեսել է Բերլինի միւգէոնը, Լօնդօնի կենդանաբանական պարտէզը, Բրիտանական հոչակաւոր միւգէոնը, բայց ոչինչ չէ գրում նրանց մասին: Բանն այն է, որ Նալբանդեանը արտասահմանում ևս զբաղւած էր հայրենակիցների վիճակով: Պարիզում այցելում է միսիթարեանների և լուսաւորչական հայերի վարժարանները, քննադատում է նրանց մէջ տիրապետող կարգերը. գովում է «Արևմուտք» լրագրի «ազատախօս» խմբագիր Ստ. Ռոկանին. գովում է Պարիզի հայերի ազգային ոգին:

1859 թ. աշնան Նալբանդեանը վերդարձաւ մուսաստան և հետեւեալ տարին արևելեան լեզուների կանգիգատի յաջող քննութիւն տւեց: Այնուհետև նըրան տեսնում ենք նոր Նախիջեանում, ուր նա աշխատում էր առաջ քաշել հնդկական ժառանգութեան խնդիրը: Մի քանի հարուստ հնդկահայեր, որոնց թըւում և Մասեն Բաբաջանը, XVIII դ. վերջում մեծ գումարներ էին կտակել մի քանի հայաբնակ քաղաքների օգտին: Դրանցից մէկը նոր Նախիջեանն էր: Այդ հարցը յարուցւել էր և Ներսէս V օրով, բայց մնացել էր անհետաննք: Հարկաւոր էր Նալբանդեանի նման համոզւած և երկաթէ կամքի տէր մարդ, որպէսզի գործի գլուխն անցնէր և թերահաւատներին հաւատ ներշնչէր: Երեսփոխանի ընտրութեան խընդիրը գարձեալ կեանքի կոչեց նախկին կուսակցութիւնները, բայց յաղթող հանդիսացաւ Հայրապետեան

կուսակցութիւնը, որի թեկնածուն Նալբանդեանն էր, և նա էլ ընտրւեց: Այսուհետեւ նա գնաց էջմիածին, ուր մաց երկու ամիս: Մատթէոս կաթողիկոսի ձեռքով վաւերացնելով հաւատարմագիրը, 1860 թ. նոյեմբերի 1-ին ճանապարհ ընկաւ: Բայց նա դեռ վեց ամիս մնաց Եւրօպայում, որովհետեւ հարկաւոր էր տեսակցել դեսպանների հետ, լսել նրանց խորհուրդները և ձեռք բերել յանձնարարական նամակներ:

Նալբանդեանը կ. Պօլսում սիրալիք ընդունելութիւն գտաւ: Պօլսի հայերի մէջ մեծ ոգեորութիւն էր տիրում սահմանադրութեան պատճառով. նա ևս մասնակցեց ընդհանուր ցնծութեան: «Մեղու» լրագրի խմբագիր Սվաճեանն իսկոյն յայտարարեց Նալբանդեանի կ. Պօլսի ժամանելու մասին: Նա վերին աստիճանի գովասանքով էր խօսում Նալբանդեանի և Նազարեանի մասին. «Նազարեանց և Նալբանդեանց պահած էր ճշմարտութիւնը ըսելու արիութեան պատիւը»: Իսկ «Հիւսիսափայլի» մասին գրում է հետեւեալը. «Հիւսիսափայլն» էն պատական հայ օրագիրն է Ռուսիոյ մէջ ոչ թէ միայն սկզբունքներովն ու ազատամտութեամբը, այլ նաև նիւթերին ընտրութեամբն ու մէջը փայլած ամեն տեսակ գիտութիւններովը»:

Այսուհետեւ Նալբանդեանը երկու ամիս անցկացրեց Լօնդոնում, յետոյ այցելեց Պարիզ, Մարսէլ, որտեղից նաւով ճանապարհ ընկաւ դէպի Հնդկաստան, և 1861 թ. մայիսին հասաւ Կալկաթա:

Ամեն տեսակ գժւարութիւնների յաղթելով, մի քանի ամսում Նալբանդեանը գործերը վերջացրեց, ստացաւ ժառանգութեան մի մասը, 1861 թ. նոյեմբերի 20-ին հասաւ կ, Պօլսի: «Մեղու» լուր տւեց Նալբանդեանի վերադարձի մասին և գովեց նրա տա-

Կուսակցութիւն
31

ժամսակիր» աշխատանքը, որի շնորհիւ յաջողւեց ըստանալ հնդկական ժառանգութեան մի մասը: Հետեւեալ համարում «Մեղու» մէջ լոյս տեսաւ Նալբանդեանի «Մեր հայրենիքը» և մի յօդւած «Ազգային թատրոն Պօլսի մէջ» վերնագրով, որի մասին կիսումի յետոյ:

Այս անգամ ևս նա այցելեց Պարիզ, Լօնդոն, Բերլին, Մարսէլ: 1862 թ. արտասահմանից վերադարձաւ Պետերբուրգ, ուր նրա գլխաւոր հոգմն էր տպել Եւրօպայում կազմած Հին Հայաստանի քարտէզը: Բայց նախ հարկաւոր էր հաշիւ տալ Նոր Նախիջևանի հասարակութեան իր առաքելութեան մասին: Այդ նպատակով նա ուղևորւեց հայրենիք: Սակայն այսուեղ շուտով ձերբակալեց: Նա մեղադրում էր արտասահմանեան ռուս յեղափոխականների հետ ունեցած յարաբերութեան մէջ: Այդ առիթով Ստ. Նազարեանն էր բարեկամ Սայաթնովեանին գրած նամակում յայտնում է իր զայրոյթը Նալբանդեանի «ամբարդաւան» քայլի համար:

Երեք տարի Պետրօպալովսկում մնալուց յետոյ, 1865 թ. մայիսին ազատութիւն ստայաւ, բայց արգէն բոլորովին քայլայւած: Թոքախտը իր գործը տեսել էր: Բժիշկների խորհրդով նա գնաց Սարատովեան նահանգի Կամիշին քաղաքը կումիսով բժշկւելու:

Այսուեղ նա մեռաւ 1866 թ. մարտի 31-ին: Նրա մարմինը ամփոփած է Նոր Նախիջևանի Սուրբ Խաչ վանքի գավթում՝ Ալամդարեանի գերեզմանի մօտ: Դամբարանի վրայ կառուցւած է նրա կիսարձանը:

Նալբանդեանի առաջին ոտանաւորները Երևացին Նալբ. «Արարատ» մէջ 1851 թ.: Սկսնակ գրողի աշխարհագրական բար և գրաբար վարժութիւններն էին գրանք, որոնց գործուն. մէջ բաւականին յաջողւած կարելի է համարել «Յի-

Կուսակցութիւն

մարաց ուսման վրայ ունեցած կարծիքը»։ Թէհ ուտանաւորը ոչ բոլորովին ինքնուրոյն է և գրւած է ուռւ երգիծաբան Կանտեմիրի ազգեցութեամբ («հա խոլացիք սուսնեցութեամբ»), այնուամենայնիւ նրա մէջ երեւմ է ապագայ երգիծաբանը։ Լեզուն՝ ժամանակի համեմատ՝ լաւ է, մինչեւ անգամ շատ լաւ։ Դա նոր նախիջեանցոց բարբառն է՝ պարզ և հասկանալի և ազատ որ և է խառնուրդից։

1857 թ. լոյս տեսած «Մինին խօսք, միւսին հարս» ինքնուրոյն վէպը ոչ մի արժանիք չունենալով մոռացւեց։ Մինոյն ժամանակ նա թարգմանեց իշխն Սիկի «Թափառական հրէայի» Ա. հատորը և տպեց մի ընդարձակ յառաջաբանով։ Նալբանդեանի գրական գործունէութիւնը գարճաւ բեղմնաւոր 1858 թ. «Հիւսիսափայլի» հրատարակութեան օրից և տեւեց երեք տարի, որոնք կազմում են նրա գործունէութեան ամենափայլուն շրջանը։ Այս ժամանակամիջոցում նա տւեց իր լաւագոյն հրապարակախօսական յօդւածները, քննադատութիւնները և բանաստեղծական երկերը։ Երեք տարուց յետոյ դադարեց Նալբանդեանի աշխատակցութիւնը «Հիւսիսափայլին», որի պատճառը մասամբ նրա ճանապարհորդութիւնները և մասամբ գուցէ Նազարեանի հետ խանդարւած յարաբերութիւններն էին։

Այնուհետև նա գրում էր ընդհատումներով, որ շատ բնական է աստանդող մարդու համար։ Պօլսում եղած ժամանակ «Մելուի» մէջ յարձակողական յօդւածներ տպեց «Երևակի» խաւարամիտ խմբագիր Զամուռճեանի դէմ («Հրաշափառ խայտառակութիւն») և Վանի առաջնորդ Պօլսու եպիսկոպոսի կատարած մի շարք յանցանքների առիթով։ Պարիզում 1861 թ. առանձին բրոցիւրով հրատարակեց մի պամֆլետ

— արդիական — ամերիկան 133

«Երկու տող» վերնագրով, ուր նա անխնայ մարակում է «Երևակի» խմբագիր Զամուռճեանին, Գ. Վ. Այլվագեանին և ընդհանրապէս հայ հոգեորականութեանը։ «Երկրագործութիւնը» գրել է Լօնգոնում եղած ժամանակ։ Բանտում նա միսիթանութիւն էր գտնում գրական պարապմունքների մէջ, որ նրան չէին արգելում։ Այստեղ նա գրեց մի քանի հեղինակութիւններ—«Ղազար Փարպեցու թղթի» աշխարհաբար թարգմանութիւնը՝ ծանօթութիւններով օժտւած։ գրեց աշխարհաբարի քերականութիւնը, «Աղցմիք» վերնագրով գրաբար քերթւածը և այն։ Նալբանդեանը թղել է և բազմաթիւ նամակներ, որ հրատարակիչները խոստացել են լոյս ընծայել Գ. հատ. մէջ։

Նալբանդեան—իրեր հրապարակախօս։

Նալբանդեանն, անշուշտ, օժտւած էր հրապարակախօսի տաղանդով։ Բայց այդ ընդունակութեամբ նա ոչինչ չէր կարող անել, եթէ նա իրան չ'նախապատրաստէր այդ վեհ կոչման համար ինքնակրթութեամբ և լուրջ ընթերցանութեամբ։ Ի՞նչ է հարկաւոր հրապարակախօսին։ Նախ և առաջ բազմակողմանի գիտութիւն։ Նալբանդեանն այդ ձեռք բերեց անխոնջ, տոկուն աշխատանքով։ Հրապարակախօսի միւս յատկութիւններ՝ անվեհերութիւն, ճշմարտութեան որոշում, համոզիչ խօսք, հիմնաւոր փաստեր և այլն—այդ ամենը ունէր մեր հեղինակը։

Գրական ասպարէզ մանելով, Նալբանդեանն ըստ Հրապակը կը պից և եթ շեշտեց հրապարակախօսական օրգանի բակախօս։ Նշանակութիւնը։

Նա ցաւ է յայտնում, որ մեր ազգի մէջ «հրա» թիւնը.

Թօւսահայ գր. պատմ.

վրայ, նոյնքան ժամանակ է, որ կրօնը կայ: Կրօնը բաժանում է երկու ճիւղի՝ ստրկական և ազատական կամ քրիստոնէական: Օրինակ, հեթանոսները գտընում են ստրկական կրօնի ազդեցութեան տակ: Նըրանք ընկճած են մաշւած ձևերի և անխորհուրդ ծէսերի լծի տակ: Քրիստոնէութիւնն է, որ խորտակում է ամենայն բռնակալական լուծ, փարատում է խաւար, տարածում է սէր և խաղաղութիւն և աճեցընում է ազատութեան ազնիւ ծիլը, հնար է տալիս մարդուն քննել իր անձը և բնութիւնը. աղբիւր է բարոյականութեան և արդարութեան:

Նալբանդեանը մեծ դեր է յատկացնում հայոց Հայոց եկեղեցուն ազգի պատմական անցեալում և համոզ- եկեղեցի. տած է, որ ազգը պիտի պահպանէ իր գոյութիւնը եկեղեցու միջնորդութեամբ. «Համաշխարհային յեղափոխութիւնների մէջ եկեղեցու ինքնուրոյնութիւնը եղել է և է մեր ազգի ապահովութեան գրաւականը»:

Խիստ դատապարտելով հայ հոգևորականութեան Հայոց հոտղիտութիւնը և բարք ու վարքը, նա կոչ է անում գեորակ. հոգեոր իշխանութեան լաւ քահանայացուներ պատրաստել, որպէսզի կարողանան վարդապետել ժողովրդին Աստուծոյ բանը: «Երկու տողի» մէջ Նալբանդեանը վերագրում է հայ հոգևորականութեան ամենավատթար յատկութիւններ՝ գայթակղեցնող, խոռվար և այն: Ահա ինչու նա ևս իր ձայնը միացնելով նազարեանի կոչին՝ պահանջում է եկեղեցու արմատական բարեփոխութիւն. «Իրաւունք չունէր արդեօք «Հիւսիսափայլը» Հայոց եկեղեցու ոտքից մինչև գլուխ ըեփօրմ պահանջելու»:

Նալբանդեանն իր դաստիարակչական հայեացք-Դաստիաներով մօտենում է անդիմացի գիտնական Լօքի վար-րակութ. դապետութեան (tabula rasa): Մարդը չէ ճնուում չար

պարակախօս ըերան» չ'լինելով՝ պաշտպանութիւն է գտել ամեն աեսակ վատթարութիւն. ոչինչ չէ խումբ, ոչ ոք չէ ընկել զրչի դատապարտութեան տակ: Միւնոյն ժամանակ ուրախ է, որ այժմ երկացել է «Հիւսիսափայլի» նման մի օրգան, որ կոչւած է ծառայելու աղքային դատիարակութեան: Ազգը ընկած վիճակից պիտի բարձրանայ, և բարոյական յաղթանակը պիտի կատարէ բարոյական ճանապարհով: Մեզանում սկսւած է մտաւոր պատերազմ, միմեանց զարկուում են մտքերը: Օրհնեալ է պատերազմը. թող լինի նա հզօր, անխնայ, բայց ադնիւ և բարեխիղճ: Հրապարակախօսը պատրաստ պիտի լինի լսելու ամեն տեսակ հայնոյանք և բնաւ չ'վշտանայ դրա համար: «Մարդասէր վիրաբոյժը տեղիք չունի բարկանալու, եթէ մի մահառիթ խոց կամ ուռոյց կտրելու ժամանակ արիւն և թարախ էր զարկուում այս տեղից նորա երեսին: Վիրաբոյժի խորհուրդն է դուրս բերել հիւսնդի կազմւածքից այդ ապականութիւնը»:

Ի՞նչ է բարոգում հրապարակախօսը: — Լուսաւորութիւն: Բայց լուսաւորութիւնը չոր ու ցամաք գիտութիւն չէ, այլ ներքին վերածնութիւն, մտքի ըստեղծագործական զօրութիւն: Ազգի լուսաւորութիւնը պիտի կատարէ նրա սեփական մայրենի լեզով. լուսաւորութեան տաճարը պիտի կառուցէ ամբողջ ազգի ձեռքով: Լուսաւորութեան հանդիսում շատ նեղ է հոգեոր մարդկանց ասպարէզը: Բայցի ուսումնից, Նալբանդեանը կուտարական գործօններ է համարում կրօնը, դատապարակութիւնը, գրականութիւնը, թատրոնը և այլն:

Նալբանդեանը մեծ նշանակութիւն էր տալիս կրօնին: Նրա կարծիքով, մարդը չէ կարող ապրել առանց կրօնի: Որքան ժամանակ մարդ կայ աշխարհը

կամ բարի, այլ նրա բնաւորութեան որպիսութիւնը կախւած է այն միջավայրից, ուր նա ծնւռում, մեծանում է: Մանուկը, ըստ Նալբանդեանի, մի հայելի է, որի մէջ կ'յոլանայ այն, ինչ որ ցոյց կ'տաս. նա միենոյն է իրան շրջապատող աշխարհի և ընկերութեան ձեռքում, ինչպէս կաւը բրուտի ձեռքում, ուրին սա կարող է ամենայն ձեւ տալ: Իր ասածներն ապացուցանելու համար, նա բերում է օրինակներ բուսական և կենդանական աշխարհից. բերում է և կրօնական ապացոյց. Եթէ առաքինի կամ վատթար մինելը դաստիարակութիւնից կամ շրջապատից կախւած չ'մինէր, դուրս կ'գար, որ արդար չէ Աստուծոյ տնտեսութիւնը՝ մէկին առաքինի, միւսին վատթար ստեղծելով: Բայց Աստւած արդար է և հաւասար աչքով է նայում բոլոր մարդկանց վրայ:

Մայրերի Խօսելով ընտանեկան դաստիարակութեան մաս սին, Նալբանդեանը որոշում է մայրերի գերը: Մայրը պիտի ուսուցանէ իր զաւակներին ազգային լեզուն, պիտի տնկէ տղայական սրտերի մէջ ազգային սերմը: Ազգի ապագան կախւած է ընտանեկան դաստիարակութիւնից: Սակայն ինչ են տալիս մայրերը ազգին:—Կեզելով միայն հայ զաւակներ: Որովհետեւ ընտանեկան կրթութիւնը մանուկն ստանում է իր մօր ձեռքով, ուրեմն նախ և առաջ հարկաւոր է ուշադրութիւն դարձնել օրիորդների կրթութեան վրայ՝ զարգացած և առաքինի մայրեր պատրաստելու համար: Ընտանիքից յետոյ մանկան կրթութիւնը պիտի շարունակի բուն ազգային գլուխներում: Իսկ ուսումը ուարածելու համար հարկաւոր է գիւղերում և քաղաքներում հիմնել սկզբնական դպրոցներ: Մեր ազգի մէջ ոչինչ չ'կայ. ամեն բան պէտք է սկսել նորից:

Բացարելով մայրերի գերը զաւակների դաս կանանց տիարակութեան գործում, Նալբանդեանը շօշափում հարցը. է և կանանց հարցը, որի ջերմ պաշտպանն է հանդիսանում: Լի ոգերութեամբ՝ Վ դարի հայ կանանց զովասանքն անելուց յետոյ, նա դիմում է ժամանակակից հայուհիներին հետեւել կշտամբանքով. «Հայ կանայք, անցան այն ժամանակները, երբ մարդիկ նայում էին կանանց վրայ, որպէս ստրուկների: Այժմ այս մարդասէր դարում լուսաւորւած աշխարհը նայում է կանանց վրայ՝ որպէս մարդու վրայ»: Նալբանդեանը խղճում է «արտասուրի արժանի» հայ կանանց, որոնք բոլորովին անկիրթ, անդաստիարակ են և զուրկ մտաւոր հետաքրքրութիւնից: Սակայն նա դարձեալ արդարացնում է հայ կանանց. «Ինչո՞վ են մեղաւոր. ով կրթեց և դաստիարակեց նրանց»:

Նալբանդեանը զբաղել է և լեզուի խնդրով: Նո լեզու ևս Նալբարեանի նման աշխարհաբարի պաշտպան էր խնդիր. և գրաբարի հակառակորդ: Ընդունելով հանդերձ գրչաբարեանների բոլոր առարկութիւնները՝ այսինքն՝ գրաբարի գեղեցկութիւնը, հնութեան աւտօրիտետը, իր կողմից հակագրում է գրաբարին աշխարհիկ լեզուի կարիքը և օգուտը: «Նոր գրական լեզուն պիտի զարգանայ ինքնուրոյնաբար, առանց ամեննեին հին լեզուից խփնելու և առանց այս կամ այն գաւառական բարբառին ստրկանալու»: Նոր լեզուն դեռ ևս անկատար է, ագեղ է, բայց ժամանակի ընթացքում ճախարակւելով, կոկելով՝ գեղեցիկ լեզու կ'դառնայ: «Անհարին է, որ մի ակնթարթում նոր լեզու շինուի, կոկուի, փայլի և փարթամանայ. այսուղեղ հարկաւոր է համբերութիւն և յարատե արիաջան աշխատութիւն»: Ռուսանայ և տաճկահայ լեզուների վերաբերմամբ Նալբանդեանի կարծիքը տարբերում է Նազարեանի

կարծիքից։ Մինչդեռ վերջինս այդ երկու գրական լեզուների մէջ ոչինչ վատ բան չէր տեմնում և համարում էր նրանց երկու հոտաւէտ ծաղիկներ ազգի մէջ, նալբանդեանն, ընդհակառակ, գերադասում էր նրանց միութիւնը, «Այսքանը անհերքելի է, որ շատ և շատ կարող էին միանալ, այսքանը անժխտելի է, որ առանց ընդհանուր միութեան լեզվի ունայն երազ է հասարակաց ազգի առաջ գնալը»։

Թատրոն. Նալբանդեանը շատ բարձր էր գասում թատրոնը և հետաքրքրում էր նրա վիճակով։ Իր կարծիքները թատրոնի նշանակութեան մասին նա յայտնել է «Ազգային թատրոն» յօդւածում, որ տպւեց «Մեղւուի» մէջ Պոլսում կայացած մի ներկայացման առիթով։ «Թատրոնի բեմը, գրում է Նալբանդեանը, ըստոր չէ ուսումնական ամբիոնից. թատրոնի բեմն է այն աթոռը, ուր նստում է փիլիսօփայութիւնը և մարմնաւորելով բանը կենդանի, գործնական գաղափարներով և օրինակներով, ազատում է հասարակութիւնը այդ գաղափարները երևակայութեամբ միայն ըմբռնելու աշխատութիւնից. թատրոնի բեմն է այն բարոյական ահեղ դատաստանը, ուր արդարութիւնը և յանցանքը, առանց աշառութեան, ստանում են իւրեանց աարժանի հատուցումը։ Մարդկային բանականութիւնը միայն բեմին է տւել այն կախարդական մեծ զօրութիւնը, որ մի ակնթարթում ցոլացնում է. բոլոր հանգիսականների սրտի մէջ ուրախութիւն, տրտմութիւն, գարմանք, զմայլանք, ցաւ և կարեկցութիւն։ Մի խօսքով, բեմը տիրում է մարդու բոլոր հոգեբանական կարողութիւններին։ Զկայ մարդ, որի վրայ աղբեցութիւն չ'ործէ թատրոնը. չկայ մարդ, որ չկարողանայ մի օգուտ քաղել այն օրինակներից, որ մարդկային կեանքի փորձերի որպէս հետևանք՝

գրւած էին թատրոնի բեմի վերայ։ Նա ուսուցանում է գեղեցիկ հայախօսութիւն, նա մշակում է լեզուն և աննկատելի կերպով ներս է բերում ազգի մէջ ընտիր ոճեր և ազլու գարձւածներ։ Նա չէ միայն ազնացնում հասարակութեան գաղափարքը, այլ և ցոյց է տալիս առաքինութեան վսեմութիւնը, մոլութեան գաւթարութիւնը, առաջինին խրախուսելով և երկրորդից զգուշացնելով, և ոչ միայն այսչափ. Նա քըրքրում է ընտանեկան կեանքը, քննում է նորա և ամենանուրը կողմերը և մերկապարանոց գնում է հասարակութեան գատաստանի առջե»։

Նալբանդեանը ցաւում է, որ հասարակութեան մէջ սխալ կարծիք է տարածւած գերասանների պարապմունքի մասին, որի չնորհիւ ոչ ոք չէ համարձակւում ոտ զնել բեմի վրայ. միւս կողմից՝ ուրախ է, որ արհամարհելով նախապաշարութիւնները, այժմ բեմն դուրս գալիս ոչ միայն գերասաններ, այլ և գերասանուհիներ։ Արուսեակ և Աղաւնի Փափազեան օրիորդներն առաջիններն են, որ քաջութեամբ ոտ կունեցին թատերաբեմի վրայ։

Նալբանդեանն ուշագրութիւն է գարձնում և թատրերգութեան լեզվի վրայ և պահանջում է մաքրութիւն, յստակութիւն և միութիւն։ Նա մի ուրիշ ոչ պակաս կարևոր պահանջ է զնում թատրոնի վարիչների առաջ, այն է՝ խիստ ընտրութիւն ինքնուրոյն և թարգմանական բեպերտուարի վերաբերմամբ, որովհետեւ վատ պիեսները կարող են վնասաբար ազգեցութիւն ունենալ հասարակութեան բարքերի վրայ։ «Հայոց ազգի ընտանեկան կեանքը խեղճ է, ինչպէս մի ասիական ազգի կեանքը, բայց խեղճութիւնը դէպի թշւառութիւն կ'փոխւի, եթէ եւրոպական ընտանեկան բարքի զեղսութիւնքը և աւերանքը, որպէս

քաղաքակրթութեան յատկութիւնք, պատւաստին հայկական ընտանիքի վրայ։ Վերին աստիճանի քընքուշ է թատրերգութեանց ընտրութիւնը, վերին աստիճանի զգուշութեան կարօտ, մանաւանդ անցանելու ժամանակ այն ժայռերի մօտից, ուր գահավէժ ընկաւ ֆրանսիական ընտանեկան կեանքը»։

Նալբանդեանը շօշափել է և ուրիշ խնդիրներ՝ ի՞նչ է ազգ և ազգութիւն, ինչումն է կայանում ազգի հարստութիւնը, ի՞նչ է մարդկային կեանքի խորհուրդը և այլն։

Տնտեսական խնդիրների մէջ Նալբանդեանը անկան խնդր գիտնական Ադամ Մմիտի հետևող է։ Ժողովրդի հարստութեան աղբիւրը և հիմքը նա համարում է հոգը, երկրագործութիւնը։ «Այն ազգը, որ չունի հող և երկիր, երբէք չ'յուսայ, որ պիտի հարստանայ»։ Ազգատութիւնից առաջ է գալիս պանդբատութիւն իր սարսափելի հետևանքներով, ինչպէս ցոյց է տալիս տաճկահայերի օրինակը, որոնք թողնում են երկիրը և կենտրոնանում են քաղաքներում։ Նալբանդեանը կոչ է անում է հայերին օգտւել երկրի հարստութիւնից և վերագառնալ դէպի բնութիւն»։

Ազգ և ազ- Նալբանդեանը ոչ կոյր ազգաւեր էր և ոչ վերադութիւն. ցական կօսմօպօլիտ։ Ազգ նա համարում էր մարդկութեան մի մասը, որ պիտի ապահովէ Շր գոյութիւնն այնքան ժամանակ, որքան գոյութիւն կունենան ուրիշ ազգեր։ «Եւ մեր ամենիս պարտքն է մինչև այն ժամանակ մնալ ազգութեան դրօշի տակ, որքան ուրիշ կրում է իր ազգութեան դրօշը»։ Բայց ազգը և ազգութիւնը կորցնում են իրանց ազգութեան նշանակութիւնը, եթէ վերանայ ազգային խորութիւնը։ Նալբանդեանն ընդունում է ազգութիւնն իրրե մի ժամանակաւոր անհրաժշտութիւն»

Երկրագնդի վրայ մի կտոր հող ունենալու համար։ Ազգի և ազգութեան մէջ Նալբանդեանը գտնում է նոյն տարբերութիւնը, ինչ որ անձի և անձնաւորութեան մէջ։ Ազգը մարդկութեան մի մասն է, իսկ ազգութիւնը նրա կերպարանքը, նրա առանձնայատկութիւնը, որով զանազանուում է ուրիշ ազգերից։ Ազգութիւնը կարող է անհետանալ, բայց ազգը՝ ոչ, որովհետեւ ազգերը չեն կորչում, այլ իբրև մարդիկ շարունակում են ապրել ուրիշ ցեղերի անունով կամ խառնուում են ուրիշ ցեղերի հետ։ Նալբանդեանը թշնամի է աղքամոլութեան և ազգերի ձուլման։ Թողամբեան ազգ պահպանէ իր ազգութեան կերպարանքը. թող ազատ և պայծառ ծաղկի ամենայն ազգութիւն։

Նալբանդեան—իրեւ քննադատ.

Նալբանդեանը շնորհալի էր և քննադատութեան մէջ։ Նա քաջ ծանօթ էր քննադատութեան սկզբունքներին, որ ձեռք էր բերել ինքնակլթութեամբ։ Իողմնակից էր բէալ ուղղութեան, այս կամ այն գրւածքը վերլուծելիս ղեկավարում էր թէ գեղարւեստական և թէ հոգերանական—հասարակական հայեցակէտերով։

Նալբանդեանը նախ և առաջ բացատրում է, թէ ի՞նչ է ինչ նշանակութիւն ունի մի ազգի մատենագրութիւն մատենագր։ և ինչումն է կայանում նրա գերը։ «Ճշմարիտ և ըստոյգ մատենագրութիւնը, ասում է նա, մի հայելի է, որի մէջ ցոլանում է ազգի կեանքը։—Մի ազգի մատենագրութեան մէջ երկում է նորա հոգին, նորա հայեցքը, նորա ընկերական կեանքը. դա մի յիշատակարան է, մի պահարան, ուր ամփոփուում են

մարդկային հոգու բղխւածքը:—Այս մատենագրութիւնը, որ անքակաելի կապւած չէ մի ազգի հոգու հետ, այն մատենագրութիւնը, որի մէջ, իբրև հայելու մէջ, չէ երեռւմ ազգի կեանքը, նորա և ամենանուրբ գըծագրութիւնքը, այդպիսի մի մատենագրութիւն այնքան դաստիարակիչ կ'լինի ազգին, որքան մի խորթ մայր օտարի գաւակներին»:

Այսպիսի հայեացքներով է դեկավարւում Նալբանդեանը, երբ սկսում է գնահատել միսիթարեանների գործունէութիւնը «Միսիթար Սեբաստացի և միսիթարեանք» վերնագրով աշխատութեան մէջ:

Միսիթար. Նա ընդունում է, որ հայոց հնախօս, բայց բարձր թողի եղած, աւերւած և խանգարւած լեզուն շնուռել և կարգի է բերւել միսիթարեանների շնորհիւ. Նա ընդունում է, որ Միսիթարեան միաբանութիւնը երկաթի համբերութեամբ և անձանձիր աշխատանքով ուսումնասիրել է հին յիշատակարանները, մշակել և հանել է լեզուն դարաւոր փոշիների տակից, որ նըրանք տպագրել են մեծ մասամբ Վ. դ. հեղինակների գործերը, կազմել են քերականութիւն, բառարաններ, թարգմանել են զանազան գործեր հին և նոր եւրօպական լեզուներից, և այսպիսով ճոխացրել են հին հայկական մատենագրութիւնը, թէև շատ բաներ թարգմանւած են անխորհուրդ և անտպատակ: Այդ ծառայութիւնը գնահատելի է մանաւանդ այն պատճառով, որ Միսիթարի ձեռքով հիմնաւած միաբանութիւնը սկսեց իր գործունէութիւնը XVIII դ. սկզբում, այնպիսի ժամանակում, երբ ամբողջ հայութիւնը ընկըզմւած էր տղիտութեան խաւարի մէջ:

Բայց միևնոյն ժամանակ Նալբանդեանն համոզւած է, որ այդ ծառայութիւնն ուսումնական հայերի համար էր և ոչ ամբողջ ազգի: «Ապա թէ ոչ ամբողջ

ազգի համար քառասուն Միսիթար և նոյնքան միաբանութիւնը չեն կարող կենդանացնել մի մեռեալ լեզու, որ չէ ժամանակի պահանջ և ազգի կենդանութեան հոգեղին ձև ու կերպարանքը»: Միսիթարեանների մատենագրութիւնը Նալբանդեանն համարում է դանակով կարւած՝ բաժանւած ժողովրդից: «Ըստհանուր լուսաւորութիւն տարածել ազգի մէջ միսիթարեանց միշաբանութեան գործը չէր»:

Մի ակնարկ ձգելով հայոց մատենագրութեան Հին մավրայ, Նալբանդեանը զալիս է բացասական եզրակատենագրութեան: Մինչև այժմ, ասում է նա, մեր գրականութիւնը եղած է աբեղայական, միջին դարերի գրպահական (սխոլաստիկ) մատենագրութիւն. Նրա մէջ չ'կայ կեանք և կենդանութիւն, այլ սկզբից մինչև այսօր մի վհատեցուցիչ միօրինակութիւն: Եւ ահա ինչու ժողովուրդը այնքան օտարացել է զրբերից, և հին լեզուն դարձել է ժողովրդի համար եղիպասոսի մեհենական անմատչելի լեզու:

Տեղիք չունինք ուրեմն մեր ժողովրդի անգրասիրութեան վրայ զարմանալու: Տիրուր մատենագրութիւն:

Նոյնքան հիմնաւոր են Նալբանդեանի կարծիք՝ Ի՞նչ է ները քննադատութեան մասին: «Կրիտիկան, ասում քննադատէ նա, մի սուբբ և անկողմնապահ դատաստան է, որի առջեւ միևնոյն են բարեկամ և թշնամի, որ մի անտաշու դատաւորի նման քննում է մի գործի արժանաւորութիւն կամ պակասութիւն: Նա վերահասու է լինում գործին ամենայն հիմնաւորութեամբ, տեղեկանում է նրա խորհրդին և վճռում է թէ ինչ չափով և սահմանով կատարել է հեղինակը իր պարտականութիւնը»: Այսուհետեւ Նալբանդեանը պարզաբանում է քննադատի կոչումը և նշանակութիւնը: Քըն-

սիրոյ վախճանը: Պետերբուրգում հրատարակւած Գամառ-Քաթիպայի ժողովածուն համարում է «օրինաւոր երգարան»: Աւոնդ Ալիշանի մէջ գանում է բանաստեղծական քանքար, բայց չէ հաւանում նրա դժւար լեզուն և խորհուրդ է տալիս զրել աւելի համականակի լեզուվ: Գովելով Նազարեանի «Հանդէս նոր հայախօսութեան» գիրքը, նրա հարուստ բովանդակութեան համար, մատնանշում է լեզվի թերութիւնները և հեղինակի «Եւրօպէաբար» մտածելու եղանակը: Նալբանդեանի գրիչը դառնում է անխնայ և կրքու այն գէպքում, երբ խօսում է այնպիսի գրքերի մասին, որոնք, նրա կարծիքով, վնասակար են: Խիստ զայրոյթով է քննադատութիւնն այնքան ծաղկած է և դարձել է գրականութեան մի մեծ և օգտակար ճիւղ:

Ահա այսպիսի սկզբունքներով էր զեկավարուու նալբանդեանը իւրաքանչիւր գիրք քննադատելիս: Նա հետեւում էր հայոց ժամանակակից գրականութեան և լոյս տեսած գրքերի մակին յայտնում էր կարծիքներ, որոնց մէջ ցոյց էր տալիս և ճիշտ ըմբռնողութիւն և ճաշակ:

Գրքերի նալբանդեանը շատ բարձր է դասում «յաւիտեսութիւն» նաև յիշատակի արժանի» Թաղիադեանին և հիացած է նրա «Տէր կեցն» ազգային օրհներգից: Արովականի «Վէրք Հայաստանին» իր արժանի գնահատութիւնը գտաւ նալբանդեանի գրչի տակ: Նա լաւ ըմբռնել է Պոօշեանի «Սոս և Վարդիթերի» բուն խորհուրդը՝ տալ Աշտարակի կեանքի պատկերը, ուստի ներողամտութեամբ է վերաբերուում գէպի վէպի թոյլ կողմերը, անբնական համարելով Սօսի և Վարդիթերի

վերացականութեան մէջ: Բայց նա հաւանութիւն է տալիս Գամառ-Քամբիպայի ընտրութեան («Ռոբինզոն»), թէև թարգմանչի լեզուն համարում է ոչ այնքան մաքուր:

50-ական թւականներին լոյս տեսած աշուղների տաղերի մասին Նալբանդեանն աննպաստ կարծիք յայտնեց. «Նորերումս դուրս եկան ազգային երգերի անունով մի քանի անալի ոսանաւորք՝ Սայաթ-Նովա, Ադամ Աղբար, Շիրին և այն»: Մեր քննադատը չէր հաւանում մանաւանդ նրանց լեզուն, որ մի խառնուրդ է թուրք, թաթար և այլ օտար բառերի: Նալբանդեանի այդ կարծիքի մէջ զարմանալին այն է, որ նա Սայաթ-Նովայի տաղերն ևս խառնում է «անալի» ոտանաւորների հետ, մինչդեռ Սայաթ-Նովան հայ ժողովրդի ամենաերեսի երգիչներից մէկն է:

Անշուշտ, այստեղ եղած է մի թիւրիմացութիւն, որովհետև նոյն Նալբանդեանը դրանից յետոյ իր եղբօր գրած նամակում (1863 թ.) բոլորովին ուրիշ կարծիք է յայտնում Սայաթ-Նովայի մասին, անւանելով նրա երգաբանը «մի պատւական գիրք»:

Նալբանդեան—իրեն ըանաստեղծ.

Կարելի է արդեօք Նալբանդեանին դնել մեր բանաստեղծների շարքում: Նա, ինարկէ, աւելի տաղանդաւոր հրապարակախոս և քննադատ է, քան բանաստեղծ, բայց և այնպէս նա բոլորովին զուրկ չէ բանաստեղծական աւելնից, ինչպէս ոմանք տրամադրիր են կարծելու: Եթէ իրաւ է, որ սէրը կարող է մարդուն դարձնել բանաստեղծ և զայրոյթը՝ երգիծաբան, Նալբանդեանին բանաստեղծ դարձնողը եղել է նրա ներքին հուրը, նրա տաք, վառվուն զաղափարը:

Ճիշտ է, որ նրա ոտանաւորների արտաքին ձևն այնպահան մշակւած չէ, յանգերն աղքատ են, գեղարւեստական պատկերները սակաւ, բայց դրանց փոխարէն նրա երկու գլուխ գործոցները՝ «Մեր հայրենիքը» և «Ազատութիւնը» տոգորւած են համարձակ մաքերով և վառվուն զգացումներով: Ինչպէս մարտնչող էր Նալբանդեանը հասարակական ասպարիզում, նոյնպէս մարտնչող էր բանաստեղծութեան մէջ:

Նա ուրիշ կերպ էլ չէ համաստեղծի կոչումը, եթէ ոչ պատերազմ չարիքի դէմ յանուն գաղափարի, ինչպէս այդ երևում է նրա «Մանկական օրեր» ոտանաւորից:

«Ես պիտի դուրս գամ դէպի հրապարակ Առանց քնարի, անզարդ խօսքերով.
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ
Խաւարի ընդդէմ պատերազմելով»:

«Ապօլօնին» վերնագրով բանաստեղծութեան մէջ նա քնարը վերադարձնում է Ապօլօնին, որովհետև իր կեանքի գարունն անցել է, քնարն ուշացած է և նա չէ կարող տրառում սիրտը միխթարել: Սակայն ամբոխը դժգոհ է «անհանգիստ հեղինակից» («Առօրեայ աշխարհ»), որ նա ամենքին խաղալիք դարձրեց, աշխարհի առաջ խայտառակեց: Թող հեղինակը չ'ծաղրէ, այլ զրէ ծիծաղաշարժ, թեթև բաներ՝ վէպ, առակ, տաղեր: Նոյն այդ ամբոխը բանաստեղծի արդար զայրոյթը համարում է բամբասանք («Հայ մարդու հայրենիք»): Բայց այդպէս ասողները խաւարի մարդիկ են; որոնք պարձենում են իրանց հարստութեամբ, լաւ ուտում, խմում են, սիրում են ազգը լոկ խօսքով և օտարի առաջ ծածկում են նրա պակասութիւնները:

Հաւատարիմ իր ուխտին՝ այսինքն պատերազմել

չարիքի դէմ, Նալբանդեանն անինայ հարւածում էր նաև ազգի պակասութիւնները: Ի պատասխան Պատկանեանի «Հիմի էլ լունք» բանաստեղծութեան՝ նա գրում է «Հիմի էլ խօսենք», ուր նա պարսաւում է հայերի մէջ բուն դրած երկպառակութեան ողին, երկշուտութիւնը և փոխադարձ թշնամնքը: Մի այլ ոտանաւորի մէջ՝ «Յիշենք», որը նոյնպէս պատասխան է Պատկանեանի «Հայկ ու Լեռնին մոռանանք» բանաստեղծութեան, Նալբանդեանը իր զարոյթն է յայտնում այն հայերի դէմ, որոնք ազգասէր են լոկ խօսքով, իսկ եթբ պէտք է դիմել գործի, փախչում՝ ծակու ծուկ են մտնում, առանց հասկանալու, որ հայի փրկութիւնը միաբանութեան մէջ է:

Նալբանդեանը՝ պարաւելով ազգի պակասութիւնները, միևնոյն ժամանակ սիրում է ազգը, որին նւիրել է մի ոտանաւոր «Գարնանամուտ» վերնագրով և «Մեր հայրենիք» յայտնի երգը: «Գարնանամուտը» մի սիմվոլիկ պատկեր է, ուր բանաստեղծը ներկայացնում է իր ժամանակի ազգային վերածնութիւնը, նմանեցնելով գարնան, որը գալով կենդանացնում և ծաղկեցնում է Արարատեան աշխարհը: Նորեկ գարունն այնպէս ոգևորում է բանաստեղծին, այնպիսի հայրենասիրութեամբ լցնում սիրտը, որ նա պատրաստ է նոյն իսկ իր անձը գոհել ազգի փրկութեան:

Բայց հայրենասիրութիւնն համնում է բարձր ոգեսրութեան «Խտալացի աղջկայ երգի» մէջ, ուր բանաստեղծը կարծես հոգով վերանում է: Այստեղ ոտանաւորն աւելի եռանդ է ստանում, լեզուն աւելի գեղեցկանում է և զգացումները բոցավառում են: Երգը խօսում է հայի սրացից, ահա ինչու այնքան ժողովրդականացաւ: «Ազատութիւնը» նոյնպէս բղիել

է բարձր ոգեսրութիւնից: Նըա մէջ բանաստեղծը զլրել է իր ազատասէր հոգին, որ արտայայտած է ազգու շեշտերով:

Նալբանդեանը չունի խոշոր բանաստեղծական «Աղցմիք» վաստակներ, բացի «Աղցմիքից», որի ձեռագիրը կորած էր համարւում, բայց 1900 թ. գտնւեց: «Աղցմիք» խորագրով երկը մի բանաստեղծական ժողովածու է, որի բուն քերթւածը կոչւում է «Արկածք նախահօրն»: Գրւած է գրաբար, Միլտոնի «Կորուստ զրախտի» հետեղութեամբ: Նալբանդեանը նկարագրում է Աղամի և Եւայի կեանքը զրախտում, նրանց առաջին և բուն աէրը, գայթակղութիւնը և զրախտից աքսորելը: Նալբանդեանի կեանքի և զրական գործունէութեան լաւատեղեակ երւանդ Շահազիզը առանձնապէս ուսումնասիրել է «Աղցմիքը»*):

Նալբանդեանին յաջողուում էին թարգմանութիւն՝ Թարգմաներ, բայց նա թարգմանում էր շատ ազատ, շեղում նութիւն. Էր բնագրից կամ յարմարեցնում էր հայոց կեանքին: Օրինակ, Հայնէի «Երազը» վերջում ըոլորովին հայացրած է. այստեղ հանդէս են գալիս երկու քոյրեր՝ մէկը Հայաստանի հոգին, միւսը՝ Անմիաբանութիւն, որոնց ձեռքով շատ հայեր են գլորւել գերեզման: Բերանժէի «Աղքատ կինը» և «Վայր ընկնող աստղերը» քաջ ծանօթ են գալրոցական մանուկներին: Բաւականին յաջող թարգմանութիւն է ուսուերէնից «Լուսինը», իսկ «Բանաստեղծը» գրւած է հետեղութեամբ Պուշկինի «Ոօթե՞ մի:

Նալբանդեանի գրական վաստակների թւում պիւ «Մեռելատի յիշել և «Մեռելահարցուկը»: Դա երգիծական վէշ հարցուկ»

*) Խորէն արք. Գալգայեան և Նալբանդեանի «Աղցմիքը»: Թիֆլիս 1904 թ.

պի մի անյաջող փորձ է. գեղարւեստական տեսակէտից շատ թոյլ. չ'կայ ամփոփ սիւժետ, չ'կան գեղարւեստական կենդանի տիպեր, իսկ աւելորդաբանութիւններ՝ անչափ:

Մի կողմից Նալբանդեանը ցանկանում է մերկացնել հայ վաճառականների և սոհասարակ հարուստների ներքին կեանքն իր բացասական կողմերով: Նրանց արատները նա մարմնացրել է մի քանի անձնաւորութիւնների մէջ: Մարկոսը—սուտ ազգաւէր է, գովում է ազգը օտարի առաջ, բայց իսկապէս «Երեք կօպէկով իր բոլոր ազգը և հօր ոսկերքը գերեզմանից կ'հանի և կ'վաճառի»: Շաքարեանը դիւթական գրքերով է կամենում գրաւել իր սիրած աղջրկան: Մանթուխեանը մի տղէտ, ուսումնատեաց և կրօնի միայն արատքին ծէսը կատարող փարիսեցի է, ճիգ է թափում հարստանալու ալքիմիայի միջոցով: Յովնաթանեանը նախկին գործակատար է, հարստացել է կապալով և խարդախ միջոցներով, պատւաւոր դիրք ունի հասարակութեան մէջ. բայց նրա ընտանիքի մէջ մեծից մինչև փոքրը անբարոյական են:

Միւս կողմից՝ «Մեռելահարցուկը» հեղինակի ձեռքին ծառայում է որպէս միջոց հաշիւ տեսնելու իր հակառակորդների հետ: Դրանք կոմս էմմանուէլի թշնամիններն են, ատելով ատում են նրան, որովհետեւ նա ամենքի ճակատին գարկում է, աղգի պակասութիւնները մերկացնում է օտարի առաջ և չէ իրնայում ոչ ոքի: Նրանց իդէան է Ստ. ք. Մանդինեանը, նրանց սիրած լրագիրներն են՝ «Մեղու Հայստանին» և «Ճռաքաղը»: Այս անձնական հաշիւը, որ հեղինակը մտցնում է իր երգիծական վէպի մէջ, ամեն բան փչացնում է, և հերոսները գաղարում են տիպեր լինելուց: Սակայն «Մեռելահարցուկը» գուրկ

չէ մի քանի արժանաւորութիւններից: Դրանք կայանում են հեղինակի սեփական մտքերի մէջ, երբ այս կամ այն առիթով նա բերում է իր հայեցքները զանազան հարցերի մասին: Այստեղ նա խօսում է բանաստեղծութեան, երաժշտութեան մասին, կանանց դաստիարակութեան մասին. քննադատում է Թաղիադեանի, Աբովեանի, Սայաթ-Նովայի երկերը և այն: Մի խօսքով, «Մեռելահարցուկի» մէջ հետաքրքրական է ոչ թէ վիպական մասը, այլ հեղինակի շեղումները:】

Նալբանդեանը վերածնութեան պայծառ անձնա-Ընդհանուր ւորութիւններից մէկն է: Լինելով «Հիւսիսափայլի» հայեցք. եռանդուն աշխատակից, Նազարեանի հետ ձեռք ձեռքի տւած, արիաբար պաշտպանեց աշխարհիկ լեզուի դատը, մահաբեր հարւած տւեց գրաբարին, որից յետոյ գրականութեան մէջ հաստատւեց աշխարհաբարը: Իբրև հրապարակախօս, միշտ բարձր պահելով իր դըրօշը, շարունակ արծարծում էր բազմաթիւ ժամանակակից նշանակութիւն ունեցող հարցեր: Նա հանդիսանում է և իբրև առաջին հայ քննադատ, որ բացատրեց գրականութեան նշանակութիւնը և քննադատի կոչումը, և ժամանակակից գրական երևոյթների արդար գնահատութիւնը տւեց: Նա հետք թողեց և իբրև բանաստեղծ, ազգային և մարդասիրական զգացումներ զարթեցնելով մատաղ սերնդի մէջ, և կծու երգիծարանութիւններով խարազանեց ազգի պակասութիւնները:


Նալբանդեանը միենոյն ժամանակ մի արտասովոր անձնաւորութիւն է: Առանց կանոնաւոր ուսման, միայն իր ընդունակութեան և տոկուն ջանքերի շնորհիւ, ուսումնասիրեց պատմական, բնագիտական, տընտեսական և ուրիշ գիտութիւններ և զինւած ահազին մտաւոր պաշարով, կանգնեց վերածնութեան առա-

Ջին ուահվիրաների շարքում: Մի մարդ, որ ստեղծած էր հասարակութեան համար, որի խօսքը գործ էր գառնում, որը գիտէր պաշտպանել իր մաքերը համարձակ, բաց ճակատով, կուրծքը դէմ արած ամենայն պատահարի, որի խօսքը կը ակուտ էր, միտումները շիտակ: Անվեհեր, ինչպէս վայել է հասարակական գործիչին, նա բարձրացնում էր իր համարձակ ձայնը ամեն անգամ, երբ պէտք էր կշտամբել, բարել և բողոքել անիրաւութեան դէմ:

Բայց լինելով գիւրագրգիռ և տաքարիւն խառնածքի տէր՝ նա թոյլ էր տալիս իրան երբեմն յաղթահարւել սեփական կրքերից և իր հակառակորդների վրայ պարսաւներ գրելով՝ մեղանչում էր զրական էտիկայի դէմ:

9.6.ԱՅ.Բ.

ԱՅ.Բ.



ՊԵՏԿՈՆԵՍՆ

Նրա կեանքը.

Պատկանեանը ծագում է տաղանդաւոր տոհմից: Նրա պապը՝ Սերոբէ վարժապետը և հայրը՝ տէր Գաբրիէլը բանաստեղծներ էին: Նրա հօրեղբայր Միքայէլը ուսուցիչ էր, թատերագիր և հայկական թատրոնի հիմնադիրներից մէկը: Նրա հօրեղբօր որդի Քերոբէն մի քանի երգերի հեղինակ և գիտնական էր, մօր կողմից բանաստեղծ Ալամդարեանի թոռը:

Ռափայէլ Պատկանեանը ծնւել է նոր-Նախիջևանում 1830 թ. նոյեմբերի 8-ին: Գրադիտութիւն սովորեց հօր ձեռքի տակ, իսկ միջնակարգ կրթու-

թիւն ստացաւ Լազարեան ճեմարանում, ուր գիմնազիական առարկաների թւում շատ յարգի էր հայոց լեզուն: | Այդ ժամանակ ճեմարանում ուսուցիչ էր երիտասարդ գիտնական էմինը: Պատկանեանը մեծ գովասանքով է խօսում նրա մասին: «Էմինի դասախոսութիւնները, գրում է նա, մի շարք գրականական, պատմական, կրթողական քարոզներ էին, որոնք խորունկ տպաւորութիւն գործում էին մեր պատանեկան զգայուն սրտերի վրայ, որ շատերիս մէջ անջնջելի մնաց և շատերիս համար թերեւս մի տեսակ ուղեցոյց աստղ եղաւ»:

1840 թ. մտաւ Լազարեան ճեմարանը, բայց դեռ չաւարտած՝ 1849 թ. դուրս եկաւ և հետևեալ տարին ուղևորւեց Թիֆլիս, ուր հայրը վարում էր Ներսիսեան դպրոցի ժամանակաւոր տեսչութիւնը և հրատարակում էր «Արարատը»:

Պատկանեանը դարձաւ հօր օգնական շաբաթաթերթի հրատարակութեան մէջ, ուր նա տպում էր իր անդրանիկ բանաստեղծութիւնները և ուրիշ յօդւածներ, միևնոյն ժամանակ ուսուցիչ էր Ներսիսեան դպրոցում: Հազիւ երեք ամիս դասաւանդելուց յետոյ՝ 1851 թ. թողեց պաշտօնը և ուղևորւեց Դօրպատ, ուր մնաց միայն մի տարի: | Իհարկէ, այդքան կարճ միջոցում նա չէր կարող հիմնաւոր դիտութիւն ձեռք բերել, բայց դօրպատեան կեանքը իր հետքը թողեց: Նա ևս վարակւեց շրջանի գաղափարներով և ուսանողական երգերի ճաշակին առաւ:

Քիչ թէ շատ ծանօթացաւ գերմանական լեզվն և գրականութեան և իր բանաստեղծական տուրքը տւեց անակրէնեան ուղղութեան («Հայոց գինի»): 1852 թ. Սոսկւայում Պատկանեանի նախաձեռնութեամբ կազմւեց մի փոքրիկ գրական ընկերութիւն,

բաղկացած երեք անդամներից, որոնց նպատակն էր հրատարակել մի շարք գրքոյներ ժողովրդական ընթերցանութեան համար: | Դրանց գործունէութեան մասին արդէն խօսել եմ իր տեղում: Միայն նորից կ'յիշեցնեմ, որ ընկերութեան ծրագիրն իրագործւեց Պետերբուրգում, ուր տեղափոխվեց Պատկանեանը: 1855—1857 թ. լոյս տեսան ընդամենը հինգ գրքոյներ: Գամառ-Քաթիպա հաւաքական անունը յետոյ Պատկանեանն իրան վերապահեց և յայտնի դարձաւ այդ անունով: |

Պատկանեանը եռանդուն գործունէութիւն էր ցոյց տալիս 1855—1864 թ.: Բացի Գամառ-Քաթիպայի գրքոյներից, այդ տարիներում նա լոյս էր ընծայում մէկը միւսի ետևից «Նոր այբբենարան», «Ազգային երգարան», «Թօբինզօն Կրիւզօփ պատմութիւնը», «Եղովագոսի առակները», «Մեծին Պետրոսի պատմութիւնը»: Միևնոյն ժամանակ աշխատակցում էր «Հիւսիսափայլին» և «Կոունկին» Միքայէլ Վայելչեան կամ Մինասիբեան կեղծ-անուններով:)

Պատկանեանն ուսանում էր Պետերբուրգի համալսարանի Արևելեան բաժնում, որ նա աւարտեց 1860 թ.: | Նա ունէր իր սեփական տպարանը, ուր տպում էին Գամառ-Քաթիպայի գրքոյները: 1863 թ. հիմնեց «Հիւսիս» շաբաթաթերթը, բայց նա յաջողութիւն չունեցաւ, մի տարուց յետոյ դադարեց: Հետեւեալ տարին նա ամուսնացաւ համալսարանի արաբերէնի պրօֆեսոր Ամիդիի գուտար Օլգայի հետ: |

1867 թ. Պատկանեանը ծախեց իր տպարանը, վերադարձաւ հայրէնիք և իր ամուսնու աջակցութեամբ բաց արեց պանսիօն: 1873 թ. պանսիօնը տեղափոխեց Ռոստով, ուր նա մնաց երեք-չորս տարի: Դրանից յետոյ նա կարճ ժամանակով վարեց նոր

Նախիջևանի թեմական գոլոցի տեսչութիւնը, ունէր և իր մանկական պարտէզը: 1879 թ. սկսած Պատկանեանը տեսուշ էր Նոր Նախիջևանի Արհեստական գոլոցում և այդ պաշտօնում մնաց մինչև մահը, որ տեղի ունեցաւ 1892 թ.:

Նրա մարմինը թաղւած է Ա. Խոչի գաւթում, ուր հանգչում են երկու վաղաթառամ բանաստեղծներ՝ Ալամդարեան և Նալբանդեան: ।

Պատկանեանը փափագում էր թաղւած լինել էջմիածնում, բայց նրա իդը չ'կատարւեց: Դրա փոխարէն նրա կիսանդրին բարձրանում է հայոց Հոգեւոր ճեմարանի առաջնակողմեան գաւթում: ।

Ռ. Պատկանեանը գեռ ևս մանկութիւնից ենթիւններ. թարկել է զանազան ազգեցութիւնների: Առաջինը, որ անչնչելի զբոշմ թողեց նրա հոգու վրայ, ուս նրա հայրն էր:

Գարբիէլ Տէր-Գարբիէլը շատ էր սիրում բանաստեղծունեան. թիւնը և մինչև խորին ծերութիւն գրիչը վայր չէր դնում: Սկզբում դրում էր մանր ոտանաւորներ, օր. «Յուլունն Շամիրամայ», «Հայրենասէր Արամեանք», իսկ խոշոր գործեր շատ սակաւ («Շաւարշ Բ.»): Կեանի վերջին շրջանում տալիս էր ընդարձակ երկարութիւններ՝ «Անուշաւան», «Մահ Պարէտի», «Պարոյր», «Զաւէն», «Փառնակ Ա.», որոնք տպւում էին Զմիւռնիայում: Այդ ըուրոք քերթւածները, բացի «Պարոյրից», գրւած են աշխարհաբար: Հեղինակը նրանց նիւթերը վերցրել է հայոց հնագոյն անցեալից և յօրինւածքի մէջ պահպանել է դիւցազներգութիւնների մի քանի կանոնները, օրինակ՝ վիպասանական բազմունեայ չափը, դիմումը մուսալին:

«Սրինգ առ, Յաւերժաճարսն Արարատեան գաշտերու, Քաղցր ձայնով լից ծոցերը կանաչազարդ ծոցերու»:

Այժմ անկարելի է ծայրէիծայր կարդալ այս անվերջ գիւցազներգութիւնները, որոնց մէջ գըրւած են առասպեկտական պատմութիւններ, թէև տեղադրեան պատահում են գեղեցիկ կտորներ, օր. Անուշաւանի և Դերկէթի սիրախօսութիւնը.

—Անուշաւան, բաղցրիկ վնասայ, ուռ կը լսիս իմ ամուսին, ես կենակից քեզ կը լինեմ, պիտի ապրենք միասին, Բո հայրենիք ես կը սիրեմ և կ'անեմ ինձ հայրենիք, Նորա փուշը կը համարեմ անուշահոս վարդենիք:

—Իմ անըման, չընազ Դերկէթ, իրաւ ուռ ինձ կու օգնես, Իմ հայրենեաց սէրը սրտիդ մէջ ինձ հետ կու պահես. Իմ սիրական Արարատին քեզ հետ այց կու երանենք, Զիւնագագաթ լերանց վրայ ազատութիւն կու վայելինք:

Այս փոքրիկ հատւածից երեսում է, որ բանաստեղծի հայրը կարողացել էր մշակել իր քերթւածների համար սահուն հոմերեան ոտանաւոր և բաւականին պարզ և պատկերաւոր լեզու: Գարբիէլ Պատկանեանի երկերը մեծ ընդունելութիւն գտան տաճկահայերի մէջ: Նրա յարգողներից մէկն էր յայտնի Սրվանձտեանը, որ «Անուշաւանի» յառաջաբանում բերում է հեղինակի կենսագրութիւնը, գովում է նրան բանասաեղական քանքարը և նրան անւանում է «հնաստեղծուղ»:

Եերւած հատւածից կարելի է տեսնել, որ թէ հօր և թէ որդու լեզուի մէջ կայ ինչ որ հարազատութիւն՝ մի տեսակ խառնուրդ տարբեր ձեերի և բարբառների: Նոյնպէս և հօր սէրը դէպի ազգային հին աւանդութիւնները անցել է որդուն, և Ռափայէլի «Զայրմայր նահապետի մահը» և «Վարդան Մամիկոնեանի մահը» անշուշտ ա. Գարբիէլի ազգեցութեան պէտք է վերապրել: Վերջին քերթւածի վրայ թերես ազգել է Ղեղնդ Ալիշանի «Պլպուն Աւարայրի», քա-

Նի որ եկուսն էլ մշակել են միևնոյն նիւթը և երկուսն էլ սկսում են լուսնին դիմելով:

Օտար Ուսւ և եւրօպական հեղինակները նոյնպէս խոր ազգեցու հետքեր են թողել Պատկանեանի այօյէզիայի վրայ: Թիւններ. «Աղասու մօր երգը» յիշեցնում է Լերմօնտովի „Կա-
зачья կոլыбельная п'есня“: Շինականի առաւօտեան երգը» նման է Կոլցովի „Что ты спишишь, мужичок?“ բանաստեղծութեան: «Անֆաս մարդը» փոխադրւած է Նեկրասովի „Нравственный человек“ երգիծա-
նութիւնից: «Երկու քոյրը», որ մինչև այժմ համար-
ւում էր ինքնուրոյն, ոչ այլ ինչ է, եթէ ոչ թարգ-
մանութիւն մի շւեդական երգի՝ „Две сестры“ վեր-
նագրով, որ բերւած է մի ոռւսերէն ժողովածուի
մէջ: Այդ երգը գոյութիւն ունի և ոռւսաց ժողովը-
դական բանահիւսութեան մէջ: Եւ այսպէս մի շարք
բանաստեղծութիւններ՝ «Վարդը բացւել այ», «Թրշ-
նամի և բարեկամ», «Աղէն տանն է», «Փափի և Շահ-
զադա»—թարգմանւած կամ փոխադրւած են օտար
հեղինակներից: Պատկանեանի բանաստեղծութիւնը
ազատ չ'մնաց և աշուղական տաղերի ազդեցութիւ-
նից, օր. «Քեօռ-Օղին» գրւած է ժողովրդական ոգով:
Ինչպէս իւրաքանչիւր բանաստեղծ, նոյնպէս և
Պատկանեանը, ենթարկւելով այս կամ այն ազդեցու-
թեան, վերջապէս գտաւ իր իսկական ճանապարհը:
Պատկ. Պատկանեանի գրական գործունէութիւնը կարե-
գրական լի է բաժանել երկու շրջանի: Առաջին շրջանն սկըս-
ում է 1850 թ., երբ նա աշխատակցում էր «Արա-
րատ» շաբաթաթերթին, և տեսում է մինչև 1864 թ.,
երբ լոյս տեսաւ նրա բանաստեղծութիւնների առա-
ջին ժողովածուն: Այնուհետեւ նա գրիչը վայր դրեց
և երկար ժամանակ այլ ևս ոչինչ չէր գրում:
Հաղաթառամ քննադատ Եղիշէ Մադաթեանը

առաջին շրջանը բնորոշում է հետեւեալ կերպով. «Ա-
ռաջին շրջանի բանաստեղծութիւնները աչքի են ընկ-
նում մօտիւների և ձեերի բազմազանութեամբ: Այս-
տեղ դուք կ'գտնէք և օրօրոցի և մանկական երգեր,
և սիրոյ և ուրախութեան հատւածներ, և երգիծա-
բանութիւն, և բալլար, և էլէգիի: Եւ այդ բոլորը
գրւած է զանազան չափերով՝ սկսած եօթնուեան
չափից մինչև վեշտամուտեանը, մերթ գրական լեզ-
ւով, մերթ երեանի, մերթ Թիֆլիսի, մերթ նոր Նա-
խիջևանի բարբառին մօտիկ լեզւով, մերթ մի խառն
ինքնանար լեզւով, որ թէ գրական է և թէ գաւա-
ռական»:

Երկրորդ շրջանն՝ 70-ական թւականների սկզբից՝
ընդգրկում է նրա յետագայ ամբողջ կեանքը: Այս
շրջանում նա գրեց «Աղաս երգերը», երեք վէպեր՝
«Փառասէր», «Տիկինն ու նաժիշտը», «Ես նշանած էի»
և բազմաթիւ պատմւածքներ և բանաստեղծութիւններ
նոր նախիջևանցոց բարբառով:

Պատկանեանի բանաստեղծութիւններն առաջին
շրջանում աւելի բազմակողմանի էին իրանց մօտիւ-
ներով և աւելի գեղարւեստական, որովհետեւ նրանց
զրդիչը հեղինակի անկեղծ և անմիջական զգացում-
ներն էին: Երկրորդ շրջանում գերակռում են հեղի-
նակի գաղափարը և միտումները. բանաստեղծութիւ-
նը ստանում է մի տեսակ քարոզչական բնոյթ, որի
շնորհիւ ստանաւորների գեղարւեստականութիւնը
թուլանում է:

Բայց երկրորդ շրջանը նշանաւոր է մի ուրիշ
կողմով: Այդ շրջանում Պատկանեանն յայտնագործեց
իր մի ուրիշ ընդունակութիւնը, որ առաջ անյայտ
էր: Դա նրա երգիծական-վիպական տաղանդն է, որի

շնորհիւ նա կարողացաւ ներկայացնել իր հայրենաւ կիցների ներքին կեանքը, սովորութիւնները և բարք ու վարքը զարմանալի վարպետութեամբ:

Պատկանեանի ըանաստեղծութիւնները.

Ազգային. Պատկանեանի բանաստեղծութեան գլխաւոր մօտիւներն են ազգ և հայրենիք: Դրանք են նրա ուրախութեան և վշտի, սիրոյ և ատելութեան, յոյսերի և յուսահատութեան առարկաները:

Ինչու է բանաստեղծը այդքան սիրում իր հայրենիքը: Դրա պատասխանը կարելի է գանել մի շարք ոտանաւորների մէջ: Նա սիրում է նախ և առաջ իր հայրենիքի բնութիւնը («Իմ սոխակին»).

«Վարդ ես ուզում, այնտեղ է, անամպ երկինք,
մեղմ հովեր,
ձաշանչափայլ արեգակ, կարկաչանոս առուներ»:

Իսկ «Օտար օրիորդ և հայ պատանի» բանաստեղծութեան մէջ ինչպիսի հիացքով է նկարագրում իր հայրենիքի գետերը, լեռները, օդը և ջուրը.

«Նա այնտեղ է, ուր նիբատն ու Տիգրիսն են զրկւած,
Ուր Երասիլը մրմունշով յուզւած ջուրն է գլորում,
Ուր Մասիսի գակաթը ամպերից ցած է նայում,
Ուր փայլում է արեգը իր կուսական շողերով,
Ուր ջըրում է երկինքը երկիրը զով ցողերով,
Ուր որ չը կայ բորէսո, չը կայ շիմոն և խորշակ,
Օդը շունչ է հրեշտակի, ջուրը մեղր է անուշակ»:

Օտարութեան մէջ նա մաշւում, թառամում է հայրենիքի և բարեկամների կարօտից.

«Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,
Սերտ բարեկամք անջատացած ինձանից»:

Պատկանեանը սիրում է և այդ գեղեցիկ բնութեան մէջ ապրող ժողովուրդը, սիրում է նրան անցած փառքի և կրած տառապանքների համար: Միշարք ոտանաւորներում նա ապրում է անցեալի յիշարք ոտանաւորներում: Նրան ոգեսորում է Վարդան Մամիկոնեանի քաջութիւնը. նրա համար խնկելի անուններ են Եղիշէ, Մեսրոպ, Գևոնդ («Վարդան Մամիկոնեանի մահը», «Եղիշէ»):

Ազգի դարաւոր տառապանքը արտասուր է խըլում բանաստեղծի աշքերից, և նա տխուր էլեգիաների մէջ ողբում է ազգի վիճակը: Այս սերիայի բանաստեղծութիւնների պասկը կազմում է «Արաքսի արտասուրքը», որ սկզբից մինչև վերջ տոգորւած է մելամաղձոս թախիծով: Առաջին տողերից արդէն հնչում է էլեգիական տոն, որ ընթերցողին ևս համակում է բանաստեղծի տրամադրութեամբ: Այստեղ կում է բանաստեղծի տրամադրութիւնը: Այստեղ շատ յաջող է նկարագրւած Արաքսը, որպէս Հայաստանի ծնող—մայր՝ իր լաց ու կոծով, կշամբանքով և գանգատներով, երբ համեմատում է ափերի նախկին ծաղկած դրութիւնը ներկայ ամայութեան նետ: «Հիմի՞ էլ լոենք» երգի մէջ բոլորովին ուրիշ տրամադրութիւն է: Այստեղ չկայ անգօր տրտունջ և թախիծ, այլ բարեկութեան պուտկում և խոր ատելութիւն դէպի թշնամին:

Հայրենասիրական բանաստեղծութիւնների շարքին են պատկանում և այն ոտանաւորները, որոնք լոյս տեսան երկրորդ շրջանում, 1878 թ., «Ազատ երգեր» խորագրով: «Ազատ երգերի» շարժառիթը այն սարսափներն էին, որոնք տեղի ունեցան Թիւրքիայում վերջին ոռուս-տաճկական պատերազմի ժամանակ (1877 թ.) և ցնցեցին ամբողջ Եւրոպան: Պատկանեանի գիւրազգաց քնարն արձագանք տւեց անկանեանի:

Ենթարկւում են անխնայ դատապարտութեան։ «Օրօղք Հայաստանին» մի դառն հեղնութիւն է հայի անշարժութեան դէմ, միևնոյն ժամանակ պարսաւանք ազգի առաջնորդներին, որոնք ազգամոլութեամբ կուրացած՝ օրօր են ասում հայրենիքին, որ նա հանգիստ քնի յաւիտեան, և քունն անդորր դարձնելու համար, շոյում են նրան, գովելով նրա քաջութիւնը, անհամար գրքերը, աստւածախօս լեզուն և դրախտ երկիրը։ Նոյնպիսի հեղնութիւն է պարունակուում և այն երգիծական բանաստեղծութեան մէջ, ուր հանդէս են գալիս կեղծ ազգասէրներ, որոնք խօսքով ամեն բարիք ցանկանում են ազգին, իսկ երբ պէտք է գործով ապացուցանել, նրանք ժլատ և կծծի են («Հայերուս բաղձանքը»)։

«Այս, ինչպէս կուզեմ տհսնել մեր հային
Աղատ, ապահով, կրթեալ, ինքնագոհ,
Ամեն հայի տուն—լրախտ երկնային,—
Լոկ այդ բանն ինձնից չուզենար մէկ դոհ։

Կամ կեղծ ազգասէրները երբ են յիշում հային՝ երբ նստած են հիւրանոցում և թանկագին կերակուրներով պարարում են իրանց մարմինը («Ազգասէր»)։

Երբ պանդոկումն եմ, —ու իմ յանդիման կան կերակուրներ թանգ ու պատւական,
Միթէ չեմ յիշում վիճակն իմ ազգին,
Չեմ ասում. «Հայեր, օգնեցէք հային»։

Պատկանեանը ծալլանակ տաղանդաւոր կան. Երգիծարան է: Ամեն մի հակասութիւն իդէալի և իրականութեան մէջ նրան զայրացնում էր: Նրա ծաղրից և արդար բարկութիւնից չեն խուսափում ոչ ամիրա ոչ աղա, ոչ թեթևամիտ երիտասարդ, ոչ պճնասէր օրիորդ, ոչ շողոքորթ հեղինակ, ոչ արեղայ, ոչ քարոզիչ։ Որքան հայերի մէջ դարերի ընթացքում կուտակւել են արատներ և հակակրելի գծեր — բոլորը

լուր արհաւիրքներին, և այս անգամ չափազանց ուժգին։ Բանաստեղծը բաց արեց ամենքի առաջ արեան և արտասուրքի տեսարաններ։ Բոլոր վայրագութիւնները, որոնք կատարուում էին հայերի վրայ, —կոտորած, հրդեհ, առեանգում, գերութիւն և իբրև հետեւանք բարբարոսութիւնների —պանդաստութիւն և սով, այս բոլորն արձագանք էր գտնում «Աղատ երգերի» մէջ։ Միւս կողմից՝ երբէք Պատկանեանի երգիծարանութիւնն այնքան թունաւոր չէր եղել, ինչպէս «Աղատ երգերի» մէջ։ Վերցրէք, օրինակ, «Մշեցու հեկեկանքը»։ Ի՞նչ զարհուրելի խորհուրդներ է տալիս ազգին յուսահատ բանաստեղծը։ Իսկ և իսկ անդիմացի երգիծարան Սվիֆտի ողբերգական ծիծաղը։ Ահաւասիկ մի տուն։

«Թող նա մեր որդոց անմեղ արիւնով
Հաճոյքի համար սուլը լըւանայ.
Սրտերուս կոկիծն զլսպենք խընամքով, —
Խըդուկ հայ ազգիս գուցէ մեղքանայ։»

Եւ այսպէս Պատկանեանը մերթ ծիծաղում է սարկաստիկ ծիծաղով, մերթ բողոքում է Եւրօպայի անտարբերութեան դէմ («Բողոք առ Եւրօպա»), մերթ կշտամբում է հայերի անտարբերութիւնը («Զայն բարբառոյ յանապատի»), մերթ կոչ է անում դէպի վրէժինդրութիւն («Վանեցոց աղօթքը»)։

Պատկանեանը միենոյն ժամանակ տաղանդաւոր կան. Երգիծարան է։ Ամեն մի հակասութիւն իդէալի և իրականութեան մէջ նրան զայրացնում էր։ Նրա ծաղրից և արդար բարկութիւնից չեն խուսափում ոչ ամիրա ոչ աղա, ոչ թեթևամիտ երիտասարդ, ոչ պճնասէր օրիորդ, ոչ շողոքորթ հեղինակ, ոչ արեղայ, ոչ քարոզիչ։ Որքան հայերի մէջ դարերի ընթացքում կուտակւել են արատներ և հակակրելի գծեր — բոլորը

Քում կրթւած հայ երիտասարդ» և «Մայրաքաղաքում կրթւած հայ աղջկկ», որոնց մէջ հմտօրէն նկարւած են իրականութիւնից խւած կենդանի տիպեր՝ մինը զւարձասէր երիտասարդի, որ իւրացըել է եւրօպական լուսաւորութեան արտաքին փայլը — շքեղ հագուստ, վայելուչ ձևեր, ֆրանսէրէն կոտրատել, բայց որը բոլորովին օտարացել է ազգից և վարում է սրնոտի կեանք. միւսը՝ պճնասէր, թեթևամիտ օրիորդ, որի իդէան է գուսար և ուղան: Պատկանեանը հայ չէ համարում ոչ միայն այդպիսի երիտասարդներին, այլ և նրանց, որոնք անունով հայ են, խօսում են հայերէն, հետեւում են հայոց սովորութիւններին, բայց անտարբեր են դէպի ազգը և օգուտ չեն տալիս նրան: Բանաստեղծի կարծիքով, իսկական հայեր միայն նրանք են, որոնք գիտեն յարգել և սիրել ազգը և նրա օգտի համար ոչինչ չ'խնայել («Ո՞վ է հայը»): Պատկանեանն այնքան նախանձախնդիր է դէպի ազգային արժանապատռութիւնը, որ սասափի վշտանում է, տեսնելով, որ օտարները ծաղրում և հալածում են հային: («Հալածում է աղազգին ինձ իր բնիկ աշխարհից»): Միենոյն ժամանակ ազգի պակասութիւնները այնքան ցաւ են պատճառում բանաստեղծին, որ նա գառնում է բոլորովին յոռետես: Հայի ապագան նրա առջեւ սեանում է: Հոգեկան մի այդպիսի մոռայլ արամադրութիւն խլում է նրա սրբական հետեւալ խոստովանանքը «Յուսահատութիւն» խորագրով ոտանաւորի մէջ.

«Ուքան սիրեցի ես իմ հայրենին,
Այնքան էլ ջոկ ջոկ ատեցի հային.
Չի տւեց ազգիս չար աստւածութիւն
Ոչ մի ազգաշն առաքինութիւն»:

Սակայն այսպիսի յուսահատական վայրկեաններ յաճախ չեն այցելում բանաստեղծին: Արտի խորքում նա միշտ հայ է և սիրում է հայրենիքը: Նա դարձեալ հաւատում է հայի ապագային, և այդ հաւատը միշտ վառ է նրա սրտում: «Կարապի երգի» մէջ, որ զրւած է բանաստեղծի մահից առաջ, չ'նայած իր թմրած՝ մերձիման դրութեան, սթափւում է ամեն անդամ, երբ լսում է հայի անունը.

«Ե՞ր իմ թմրած աչքէս փախչում է քունը,
Երբ որ լըսում եմ հայ ազգի անունը»:

Պատկանեանի մի շարք ոտանաւորների մէջ արև Բանաստեայայտւած են նրա հայեացքները բանաստեղծի կոչ՝ կոչման ման մասին: Այդ խնդիրը վաղուց շօշափւած էր ուռւսաց գրականութեան մէջ, և Պուշկին, Լերմօնտով, Նեկրասով շատ ոտանաւորներ են նվիրել այդ թեմային: Նոյնպէս և Գօգոլը իր նշանաւոր պօէմայում համեմատութիւն է անում երկու տարբեր ուղղութեան պատկանող բանաստեղծների մէջ: Անշուշտ, այս բոլորը ծանօթ է եղել մեր բանաստեղծին, որի կարծիքները գրեթէ չեն տարբերում ուռւս հեղինակների, մանաւանդ Գօգոլի և Նեկրասովի կարծիքներից: Այդպիսի ոտանաւորներից է Պատկանեանի «Երկու բանաստեղծը»: Դրանցից մէկը աշխարհի սիրելին է, որովհետեւ շողոքորթում է մարդկանց, երգում է վարդ և ուրախութիւն.

«Լարերիդ երեք չը տըւիր գաղար,
Երբ որ գովելու ունէիր պատճառ.
Բայց երբ որ բասրել պէտք լինէր չարին,
Քընարը իսկոյն կախւում էր պատին»:

Իսկ միւսին ամենքն ատում են, որովհետեւ ոչ

ոքի չէ շողոքորթում, այլ խարազանում է մարդկանց
արատները:

«Լեզուն մահաթոյն, ասացին մարդիկ,
Ճարտար խօսւածքը չարութեան գործիք»:

Եւ այսպիսի բանաստեղծը մեռնում է մենակ և
հպարտ: Նրան սկսում են հասկանալ և գնահատել
միայն երկար տարիներից յետոյ: Մի այլ ոտանաւո-
րի մէջ («Բանաստեղծ, լաւ բանեք գրէ») Պատկանեա-
նը գրեթէ նոյն միտքն է յայտնում, այսինքն՝ որ չէ
կարելի գրւատել հայի կեանքը, երբ նրա մէջ ոչինչ
լաւ բան չ'կայ, որովհետև ուր դարձնում ես աշքդ,
— «անսփոխ պատկեր»: «Բարի խրատը» ներքին
խմաստով շատ նման է Պուշկինի „Պօէտց“ բանա-
ստեղծութեան: Պուշկինը պահանջում է ազատ ստեղ-
ծագործութիւն և հասարակաց կարծիքից անկախու-
թիւն. պօէտը ինքը պիտի լինի իր դատաւորը և չը
պէտք է սպասէ վարձատրութեան: Պատկանեանը
նոյն միտքն է յայտնում: Նա խղճում է այն բանա-
ստեղծներին, որոնք համակերպւում են հասարակաց
ճաշակին և իրանց գրիչը վաճառում են շահադիտա-
կան նպատակների և փառքի համար: Այդպիսի բա-
նաստեղծներին Պատկանեանը հետևեալ խրամն է
տալիս.

«Դու նըմանիր ազատախօս թրաչնակին,
Որ երգում է անանձնասէր յոյսեր-վ»:

Այս սերիայի բանաստեղծութիւնների մէջ ամե-
նայաջող կարելի է համարել «Նկարիչը», որի բովան-
դակութեան վաեմութիւնը, վեհ գաղափարը, լեզուն
և ոճը միասին կազմում են մի գեղարւեստական ներ-
դաշնակութիւն: Այստեղ հակադրւած են՝ մի կողմից՝
Նկարչի վերամբարձ հոգեկան տրամադրութիւնը, որի

մէջ ծնունդ է առնում այն երկելի պատկերը, որի
շուրջը մարգարիտներ պիտի շարեն, որի առաջ ծունկ
պիտի խոնարհնեն մարդիկ. միւս կողմից՝ չարախնդաց,
տգէտ ամբոխի անհասկացողութիւնը և տիմար կար-
ծիքը նկարչի վեհ արւեստի մասին: Նիւթը իր բո-
վանդակութեամբ համապատասխանում է հայ իրա-
կանութեան, մահաւանդ եթէ վերցնենք կէս դար ա-
ռաջ: Ո՞վ էր Ստեփաննոս Ներսիսեանը, եթէ ոչ մի
այդպիսի նկարիչ, որ մեռաւ ծայրայեղ կարիքի մէջ,
հիւանդանոցում և գրեթէ լքւած ամենքից:

Պատկանեանի բանաստեղծութիւնների մէջ պա-
տահում են և ժողովրդական տարրեր: Օրինակ, «Եր-
կու պատկերի» մէջ նկարագրւած է մի նահապետա-
կան ընտանիք, որ ապրում էր անդորր երջանկու-
թեան մէջ, բայց յետոյ զոհում է օսմանցոց բարբա-
րոսութեան. տղամարդիկ սպանւում են, իսկ հարս-
ները մաշշում են հարեմներում: Շատ յաջող է և
«Բոնի պսակը»: Բնդամենը երեք երեսի վրայ նա
տալիս է մի թշւառ կնոջ կեանքի համառօտ պատ-
մութիւնը: Հիմքում գրւած է անհաւասար ամուսնու-
թիւն: Բոնակալ հայրը ստիպում է իր գեղեցիկ ան-
բախտ աղջկան: Նազլուհին պսակւել մի հարուստ,
բայց վաւաշոտ ծերունու հետ: Յայտնի է այդպիսի
ամուսնութեան վերջաբանը, որ լինում է մեծ մա-
սմբ ողբերգական:

Պատկանեանը մի քանի բալլարդների հիմքում
դրել է ժողովրդական աւանդութիւններ, օրինակ,
«Ծաղկաձորը»: Երբ հայոց աշխարհում բացւում է
գարուն, հայ աղջկերքը գնում են ձոր ծաղիկ քաղելու՝
գարնան տօնը տօնելու: Բայց աւագ. նրանց ուրա-
խութիւնը շատ կարճ է տեսում: Անօրէն պարսիկները
գրոն են տալիս, բայց չեն կարողանում առևանդել.

«Հայ պարկեշտ կուսանք՝ խոստման մտերիմ,
Որ տըւել էին հայ փեսաներին,
Մահարեր սըրէն չը սարսափեցան,
Արինաթաթաւ գետին գըլորւցան»:

Այն ձորը, ուր կոյսերը նահատակւեցին, շուտով
ծածկւեց ինկահոտ ծաղիկներով, որի համար և կոչ-
ւեց «Ծաղկաձոր»: Գեղեցիկ է և «Երկու քոյրը»:
Բայց դա ինքնուրոյն բանաստեղծութիւն չէ, այլ
թարգմանութիւն շւեղական երգից: Սակայն յօդուտ
մեր բանաստեղծի պէտք է ասել, որ նա գիտէր
թարգմանութիւնը հայացնել: Նրա «Աղասու մօր եր-
գը», «Աղէն տանն է» և այդպէս բոլոր թարգմանած
ուսանաւորները տողորուած են հայկական ոգով:

Խառն մօ- Պատկանեանի բանաստեղծութիւնների մէջ կան
տիւներ: և այնպիսիները, որոնք չեն վերաբերում այս կամ
այն սերիային, այլ արտայայտում են հանրամարդ-
կային մտքեր և զգացումներ: «Մեծը» եղբայրական
սիրոյ դրւատումն է: «Քահանան» գովեստ է իդէալա-
կան քահանայի, որ կանգնած է իր կոչման բարձրու-
թեան վրայ և ազդու քարոզներով ուղղում է ժողո-
վրդի բարքերը: «Դե-Մրուսը» գրւած է միսիօնար-
ների գէմ, որոնք քրիստոնէական լոյս տարածելու
պատրւակով գայթակղութիւն են մտցնում ժողովրդի
մէջ: «Յոյսի» մէջ բանաստեղծը գտնում է այնպիսի
զօրութիւն, որ նրան չէ թողնում վհատել և մոռա-
ցնել է տալիս կեանքի տառապանքը: Դրա հակառակ՝
«Մանկան» խորագրով երգի մէջ նա յուետես է, ամ-
բիծ մանկան վաղաժամ մահը նրան խոր վիշտ է
պատճառում, և կեանքը թւում է նրան ունայն աննպատակ:

Պարդանի Պատկանեանի միակ խոշոր բանաստեղծական
մահը, երկն է «Վարդան Մամիկոնեանի մահը»: Այդ պատ-

մական պօէմայի մէջ նա ցանկացել է կենդանացնել
Վ դարի հայոց կրօնական պատերազմը պարսիկների
հետ և պատերազմի հերոսին: Սակայն այդ չէ յաջող-
ւել: Վարդանի բնականկարը դուրս է եկել անդոյն,
նկարագրութիւնները չափազանց երկար են ի մաս
գործողութեան: Թոյլ լինելով՝ իբրև գեղարւեստական
ամբողջութիւն, պօէման այնուամենայնիւ զուրկ չէ
մասնաւոր արժանաւորութիւններից, որոնք են՝ նա-
խերգանքը, վերջաբանը և «Հիմի՞ էլ լունք» միջան-
կեալ երգը:

Պատկանեանի վէպերը.

Պատկանեանի գրական գործունէութիւնը չէ սահ-
մանափակում բանաստեղծական երկերով: Մի մեծ
բաժին կազմում են նրա վէպերը գրական լեզուվ և նոր
Նախիջևանի բարբառով գրւած երկիծական պատկեր-
ները:

Պատկանեանի վէպերի մէջ լաւագոյնն է «Փայ» «Փառասէ-
ռասէրը»: Ալթմազովը, վէպի հերոսը, Երևանեան համա-
հանգի մուլքադարի որդի էր, որ բնութիւննից օժ- ոտ բո-
տւած էր բարեմասնութիւններով: Այնքան գեղեցիկ
էր, որ նրա տեսքից օրիորդների խելքը գնում էր,
այնքան ընդունակ և ջանասէր, որ գիմնազիայում ա-
ռաջին աշակերտն էր համարում: Իինելով վերին առ-
տիճանի պատւասէր և հպարտ, չէր դիմում ոչ ոքի
օգնութեան, ապրում էր դասերով, ստանում էր այն-
քան, որ հնարաւորութիւն ունէր նոյն իսկ երաժշ-
տութիւն սովորելու, որին տիրապետեց գերազա-
ցօրէն:

Գիմնազիան տւարտելուն պէս՝ ուղևորւեց Ա.
Պետերբուրգ վաղօրօք տեղաւորւելու և դասեր գըտ-

Նելու նպատակով։ Մայրաքաղաքում գտնում է նոյն յաջողութիւնները։ Գրաւում է առաջին այցելած պրօֆեսօրի համակրանքը և նրա միջնորդութեամբ տնային ուսուցչի տեղ է գտնում Իշխան Կարիլիկինի տանը ամենաձեռնառու պայմաններով՝ փառահեղ ապրուստ և հարիւր բուբլի ամսական։ Որոշ զիրք ստեղծելու համար՝ Ալթմազովը զործ էր զնում իր բոլոր խելքն ու ճարպիկութիւնը։ Առատ փարձարում էր կառապաններին և սպասաւորներին։ Հրաժարում է թոշակից, որի համար պրօֆեսօրը խոստանում էր միջնորդել։

Շուտով յայսնուում է, որ մեր հերոսը յետին միտումներով է ներս սողոսկել իշխան Կարիլիկինի տունը։ Նա որոճում էր մի գաղտնի նպատակ՝ ճարել հարուստ և ազնւատոհմ հարսնացու և պսակի միջոցով վաստակել արիստօկրատի անուն և դրա հետ միասին մի խոշոր պատառ իշխան Կարիլիկինի միլիոնաւոր կարողութիւնից։ Ահա այդ նպատակով է, որ նա իր վրայ սիրահարեցրեց իր աշակերտուհուն, գեղեցիկ Եւգոկիային։

Իշխան Կարիլիկինի տանը Ալթմազովը ծանօթանում է մի սեաչեայ, արեւելեան տիպի և չափազանց համակրելի օրիորդի հետ, որը երաժշտութիւն էր սովորեցնում Եւգոկիային, ծագումով հայուհի էր և անունը Սուսաննա կամ Շուշան։ Առաջին ծանօթութիւնից յետոյ, մանաւանդ երբ իմանում է, որ Ալթմազովը հայ է, օրիորդը լցւում է ջերմ համակրութեամբ։ Բայց աւանդ, Ալթմազովը աչք չունէր նրա վրայ նայելու, սկզբից մինչև վերջ մնում է անպատասխան և սառն, ինչպէս քար։ Ալթմազովը նպատակին չ'հասաւ, չ'նայած որ իր նամակներով հաւատացնում էր հօրը, որ արդէն վերջացած է։

Չորս տարուց յետոյ նրան հեռացրին պաշտօնից։ Եւգոկիան մերժողական նամակ գրեց, իր տւած մատանին ետ պահանջեց և շուտով ամուսնացաւ մի աստիճանաւորի հետ։

Ալթմազովը սակայն չ'յուսահատւեց։ Նա ամուսնացաւ մի պառաւ գերմանուհու հետ (օր. Մարիխէն), որի ծերունի հօրեղբայրը 8 միլիոն կարողութիւն ունէր և ինքն էլ ամուրի էր։ Սակայն այդ յոյսն էլ խորտակւեց։ Հօրեղբայրը շուտով պսակւեց մի մատաղահաս օրիորդի հետ, որից ծնւած զաւակը դարձաւ 8 միլիոնի ժառանգ։ Դրանից յետոյ անշուշտ Ալթմազովը կատարեց իր խոստումը—ատրճանակով Վերջ տւեց կեանքին։ Իսկ Սուսաննան։ Նա երջանվերջ ափերից մէկն է, այն երիտասարդութեան, որին չէին համնում վերածնութեան հովերը։ Ալթմազովը 60-ական թւականների հայ երիտասարդութեան ափերից մէկն է, այն երիտասարդութեան, որին չէին համնում վերածնութեան հովերը։ Ալթմազովը Շահազիզեանի հերոսի հակապատկերն է։ Ալթմազովը—օտարամոլ է և խորշում է հայութիւնից, կեսնը վառ հայրենասէր է։ Կեսնը պարսաւում է նիւթապաշտներին, Ալթմազովը բոլոր էութեամբ նիւթապաշտ է։ Կեսնի սէրը պլատօնական է, Ալթմազովի սէրը՝ նիւթական հաշիւ։ Կեսնը զգայուն, կրակոտ և անկեղծ երիտասարդ է, Ալթմազովը՝ բոլորովին անսիրտ, պաղարիւն և ծածկամիտ։

Ալթմազովի ընաւորութեան և հայեացքների կազմակերպութեան վրայ մեծ ազգեցութիւն է ունեցել այն միջափայրը, ուր նա ծնւել՝ մեծացել է, մանաւանդ հօր իրատները, որոնց նա հետևում էր։

Ալթմազովը զարմանալի խառնուրդ է դրական և բացասական յատկութիւնների: Դեռ ևս գիտնազիշայում նա աչքի էր ընկնում իր արտակարդ ընդունակութիւններով և տոկունութեամբ: Նրա արտաքին գեղեցկութիւնը հիացնում էր օրիորդներին: Պետերբուրգում նա մի անգամից գրաւում է պրօֆեսօրի համակրութիւնը իր խելքով և լրջութեամբ: Հիւրանոցում իր երաժշտական ծիրքով զարմացնում է այլազդի տիկիններին: Ուսանողութեան մէջ անուն է վաստակում ապահելով մի աստիճանաւորի: Ալթմազովը միևնոյն ժամանակ մի փորձւած բեպետիտօր է. Նրա սաները միշտ առաջադիմութիւն էին ցոյց տալիս: Մի խօսքով, առաջին տեսնողի վրայ հիանալի տպաւորութիւն էր գործում:

Սակայն նրա բոլոր շացուցիչ յատկութիւնները սքօղում էին նրա ներքին աշխարհը, որ խոսկան անապատ էր, առանց լոյսի և ջերմութեան: Նրա արտաքին վեհանձնութեան տակ թագնւած էր մի խրդավի հողի, ուր չկար մի հատիկ ազնիւ կայծ: Նրա կեանքի իդէալը և նշանաբանն էր—ստեղծել իր համար կարիէրա, ամուսնալով բարձր շրջանի հարուստ՝ օժիտաւոր աղջկայ հետ: Խոր, անկեղծ ոէրը խորթ էր նրա հոգուն. Նրա սէրը սառը, չոր ու ցամաք հաշիւ էր: Նոյն խակ իր բնածին ընդունակութիւնները նա ծառայեցնում էր իր շահասիրական նպատակներին: Գեղեցիկ մարմի մէջ տգեղ հոգի:

Եթէ մի բոպէ թոյլ տանք, որ Ալթմազովը իր բոլոր բարեմասնութիւններով հանդերձ ունենար իր հոգում ազնիւ կայծ և վեհ ձգտումներ, անտարակոյս, նա կ'լինէր հասարակական կամ այլ անպարիզում մի օքտակար գործիչ:

Սուսաննա. Սուսաննան օտար ոգով կրթւած, բայց հոգով

հայուհի է: Նա, իհարկէ, տիպիկ հայ օրիորդ չէ, այլ բացառիկ անձնաւորութիւն, և իբրև այդպիսին՝ շատ բնական և կենդանի գոյներով է նկարւած: Ունենալով արտաքին գեղեցկութիւն և քնքոյշ, սիրատենչ սիրտ, նա միևնոյն ժամանակ օժտւած է երաժշտական տաղանդով: Եթէ Ալթմազովը լինէր նրա արժանի կեանքի ընկերը, նրանց երջանկութեանը ոչինչ չէր հասնի: Օտար հասարակութեան մէջ պատահելով մի վայելչակազմ, վեհանձն, ազգու կերպարանքով հայ երիտասարդի, Սուսաննան իր կանացի թուլութեամբ խոկոյն հրապուրւում է, առիթ է վնարում նրա հետ խօսակցելու, որոնում է նրա հայեացքները, պատրաստ է առանց տատանւելու իր ամբողջ ապագան կապել նրա հետ: Նա սաստիկ հետաքրքրւած է Ալթմազովի անձնաւորութեամբ, մանաւանդ երբ իմանում է, որ հայ է: Նա այնպէս ուշադիր է դէպի նա, հետեւում է նրա խրաքանչիւր խօսքին, շարժման թափանցում է նրա աշքերի մէջ, որպէս զի նշմարէ այնտեղ գէթ մի նշոյլ համակրութեան: Բայց իզնւր: Սառնութիւնից բացի ուղիղ ոչինչ չէ կարգում նրա աշքերում: Սուսաննայի հանձարեղ նւազը՝ «Առիւծի աշքերումը անապատում», որ ունկնդիրների վրայ զարթնումը անապատում»), որ ունկնդիրների վրայ զօրեղ տպաւորութիւն է գործում, չ'կարողացաւ շարժել միայն Ալթմազովի սիրալ: Սուսաննան կամենալ միայն Ալթմազովի սիրալ: Սուսաննան կամենալ նրա սիրած գոյնը, որպէս զի այնուում է իմանալ նրա սիրած գոյնը, որպէս զի այնպիսի զգեստով գայ պարահանդէս: Ալթմազովը բոլորին անտարբեր պատասխաններ է տալիս: Իշխան կարիլկինի տանը, պարահանդէսի ժամանակ, երբ Ալթմազովը բարձրաստիճան անձանց և հպարտ արիստոկրատների շրջանում, պարբնկերունի չ'գտնելով, այնպէս ընկճւած և ոչնչացած էր, Սուսաննան միակ առաջն էր, որ հասկանում էր նրա դրութիւնը և աշ-

Խատում էր նրան զբաղեցնել։ Բայց աւաղ. օրիորդի քնքոյշ սէրը ընդհարւում էր ոչ թէ մարդկային սրտի, այլ—ապառաժի։

Վէպը կարդացւում է հետաքրքրութեամբ, որը
աեղ աեղ թուլանում է հեղինակի շեղումներով։ Թէ
հերոսի և թէ միւս անձանց բնաւորութիւնները նկա-
րագրւած են յաջող։ Միևնոյն ժամանակ Պատկանեա-
նը ծանօթացնում է մայրաքաղաքի արխատօկրատիայի
կենցաղավարութեան հետ, հանդէս է բերում ՅՈՒ
monde'ը իր տոհմային հպարտութեամբ, իր արհամա-
րանքով դէպի օտարները և հասարակ դասակարգը,
իր սովորական գւարճութիւններով, պարահանդէսնե-
րով և խնջոյքներով։ Բացի զբանից, մենք ծանօթա-
նում ենք հայ ուսանողութեան կենցաղի և բարք ու
վարքի հետ։

Սիւ Պատկանեանի միւս երկու վէպերը—«Ես նշանած վէպերը էի» և «Տիկինն ու նաժիշտ»—աչքի ընկնող արժանաւորութիւններ չունեն, երկուսն էլ տոգորւած են բօմանափկ ոգով, հեռու են իրականութիւնից, և դէպքերը մեծ մասամբ բացառիկ կամ ուղղակի անհաւատալի են: Օրինակ, «Ես նշանած էի» վէպի մէջ տեղի է ունենում այսպիսի գէպք: Մի աղքատ ուսանող 80 կօպէկով գնում է մի հին սեղան, որի մէջ—ով զարմանք—նա գտնում է 25 հազար արժէքաւոր իրեր: «Տիկինն ու նաժիշտ» մէջ կայ աւելի զարմանալի բան: Սօֆիան, որ աստրախանցի միլիօնատէրի գուստը է և իր սիրած սպայի հետ փախել էր արտասահման, որ Պարիզի ապականւած մթնոլորտում գեղիս կեանք վարելով՝ հասել էր անբարոյականութեան զագաթնակէտին, վերադառնում է հայրենիք բոլորովին վերածնւած և անձանաչելի: Նա մտնում է աղախին իր նախկին նաժիշտի մօտ: Նա լւացարա-

ըութեամբ վաստակում է 25 հազար ըուբնի՝ կարողութիւն։ Նա դարձել է զարգացած, առաքինի և ազգասէր կին։

«Մոնթէն մինչև վեր» խորագրով վէպիկի մէջ «Մոնթէն դուրս է բերւած մի հոգեորական։ Դա տէր Մինասն մինչև է։ Հեղինակը տալիս է նրա կեանքի պատկերը՝ ըսկըսած մանկութիւնից մինչև եպիսկոպոսական ասկըսած միենոյն ժամանակ նկարագրում է այն վընասակար աղդեցութիւնները, որոնց նա ենթարկվում է ընտանիքում, ընկերական շրջանում և այլն։ Ունենալով չար և անհանգիստ բնոյթ՝ իր անձը ատելի է դարձնում ամենքին։ Վերջ ի վերջոյ երեք հարիւր բուրփի աջահամբոյրը նրան դարձնում է տէր Մինաս։ Այնուհետև իր իսկական գերի մէջ է։ Զորս տարի ուսուցչութիւն արեց մի երկսեռ դպրոցում, և «աւելի քան հազար հայ մանուկներ զուրկ մնացին հայոց լեզվի և կրօնի գիտութիւնէն»։ Պատմում են նոյնպէս, որ նա կնունքից, հարսանիքից և թաղումից հարրած վերադառնալով ծեծում նահասակում էր հիւանդ կնոջը, որ չորս տարի նրա ձեռքից ամեն տեսակ լկանք կրելով վերջապէս մեռաւ։ Ամուսնու մահից յետոյ՝ արեղայական կարգ ստանալով, գնաց էջմիածին, ուր նշանակեց մածնառան տեսուչ։ Հինգ տարի չ'անցած՝ Մինաս վարդապետը դարձաւ երեք հազարի տէր, որից յետոյ ձեռնադրւեց եպիսկոպոս։ Պատկանեանը հաւատացնում է, որ տէր Մինասը բացառութիւն չէ կազմում, այլ նրա նման շատերը կան։ «Ամեն հայաբնակ քաղաք և գրեթէ ամեն հայ եկեղեցի ունի իր սեփական տէր Մինասը»։ Վէպիկը թէե գրւած է գրական լեզուվ, բայց իր երգիծական ոգով մօտենում է պատկանածքների այն խմբին, ոչոնք գրւած են նոր նախիջևանցոց բարբառով։

Պատմւած. Պատկանեանը գրել է մի շարք պատմւածքներ նոր նախի նոր նախիջևանցոց կեանքից: Երկար ժամանակ ապահանքից ըելով իր հայրենիքում և շվելով ժողովրդի զանազան խաւերի հետ, նա հնարաւորութիւն ունեցաւ մօտիկից ծանօթանալու իր համաքաղաքացիների ներքին կեանքի և բազմատեսակ բնաւորութիւնների հետ: Նա բնաւ կարիք չունէր դիմելու իր երեակայութեան սիւժեաներ և դէմքեր յօրինելու համար. ինքը միջավայրը տալիս էր գրեթէ պատրաստի նիւթեր, մնում էր միայն մշակել: Եւ այդպիսի գրւածքներում Պատկանեանն յայնագործում էր սուր դիտողութիւն և երգիծական տաղանդ: Բոլոր պատմւածքները գրւած են նոր նախիջևանցոց բարբառով, որը պարունակելով իր մէջ ոռւսերէն և թաթարերէն աղճաւած բառերի խառնուրդ, ամենից անմատչելի է մեր զաւառական բարբառների մէջ: Միայն տեղացիները Ըլարող են հասկանալ առանց բառարանի դիմելու: Ընդհանրութեան մատչելի դարձնելու համար, կարելի է վերածել զրական լեզվի, թէև պատմւածքներն այդպիսով կ'կորցնեն իրանց տեղական դրոշմը:

«Զախու» Ամենայաջող պատմւածքներից մէկն է «Զախուն»: Դա մի դժբախտ կեանքի պատմութիւն է: Զրկիր Մարտիրոսի վրայ կատարւում է ժողովրդական առածը՝ թէ աւելի լաւ է մարդու աչքը դուրս դայ, քան թէ անոնք: Մարտիրոսը պատանեկան հասակում վերին աստիճանի ընդունակ, խելօք տղայ էր և ծնւած էր աւելի լաւ վիճակի համար, քան թէ Զրկիրութիւնը: Մի չնչին պատահմունք նրան դարձնում է դժբախտ ամբողջ կեանքում: Եւ ահա ինչպէս: Նրա ուսուցչի չախուն (գրչահատ) կորչում է, նրան են մեղաղրում գողութեան մէջ: Նրա դաժան հայրը և «վարպետը» ֆալախայի և ճիպոտների օդ-

նութեամբ կամենում են խոստովանեցնել նրան, բայց ինկվիզիտորական դատաստանի հետևանքը լինում է այս, որ խեղճ պատանին մահւան դուռն է համում, երեք օր մնալով ուշաթափ գրութեան մէջ, իսկ յետոյ ամիսներ ծառայում է անկողնին: Կազզուրւելուց յետոյ նրա դժբախտութիւնները չեն վերջանում. Նըրան հոչակում են «չախւի գող», և այդ մականունը դառնում է նրա կեանքի չար հրեշտակը: Նրա իւրաքանչիւր քայլը հանդիպում էր ձախորդութեան: Ամեն տեղ յարուցանում էր կասկած և վոնդւում իւրեկ գող: Խեղճ մարդը՝ բոլորովին ընկճւած և ճարահատեալ, յանձն է առնում ջրկիրութիւն, որի ծանրութիւնը նա քարշ է տալիս 42 երկար ու ձիգ տարիներ: Սակայն բախտը ի՞նչեր չէ խաղում մարդկանց հետ: Երբ ջրկիր Մարտիրոսի կեանքը գրեթէ կանց հետ: Երբ ջրկիր Մարտիրոսի կեանքը գրեթէ կառակւած էր, երբ նրա հայրը և «վարպետը» վաղուց խորտակւած էր, առաջ առաջ գտնուում է կորածը: Սակայն Մարտիրոսի խորտակւած կեանքը նա էլ չի վերականգնի:

«Զախուն» մի հետաքրքրական կողմ ևս ունի. այսուեղ մեծ հմտութեամբ նկարագրւած է նախկին խալֆայական դպրոցը՝ իր չոր ու ցամաք ուսումով, ֆալախայով և ճիպոտներով:

Պատկանեանը խարազանում էր նաև հարուստ «Էսլի լէ-աղաներին: Այդ կողմից բնորոշ է «Էսլի լէվէնտը», վէնտ». որի հերոսը մի հեշտասէր և շոայլ ամուրի է: Ցանկանալով ազատ լինել ամուսնական լուծից և կեանքի բարիքը վայելել միայնակ, նա մերժում էր գեղիկ հարսնացուներին, և օրերն անց էր կացնում օրգիաների մէջ: Աստիճանաբար ընկնելով աւելի և աւելի ցած՝ վերջ ի վերջոյ զրկւեց իր բոլոր ունեցածից և առողջութիւնից—ու մտաւ անկողին: Նրա

բնակարանի միակ ամսձը—սպասուհին էր. նա էլ տանը չէր նստում: Այլ ևս ոչինչ չէր մնացել գրփելու, ուստի օրերով անհետանում էր՝ իր քէֆի ետից ընկած: Եւ հիւանդը մեռաւ լքւած և միայնակ:

Իր հայրենակիցների բարք ու վարքը Պատկանեանը ներկայացնում էր և մի շարք բանաստեղծութիւնների մէջ՝ դարձեալ նոր նախիջևանցոց բարբառով:

Պատկանեանի երգիծական գրւածքներին վերջ տալու համար, պէտք է յիշել հետեւեալը: Դժբախտաբար, նա ևս աղատ չէր կրքերից: Մի քանի պատմւածքների մէջ նա շօշափում էր այս կամ այն անձի պատիւը, որոնք իրանց պատկերը տեսնելով՝ սաստիկ վիրաւորւած էին զգում իրանց: Օրինակ, մի զրւածքում, որի նոյն իսկ վերնագիրը նողկալի էր, դուրս էր բերւած մի հոգևորական այնպէս թափանցիկ, որ ամենքը ճանաչեցին: Սակայն այս անդամ Պատկանեանի պարսաւագիրը պատճառ եղաւ Մօսկւայի մի խումբ ուսանողների բողոքագրի, որ տպւեց «Մուրճ» ամսագրում:

Թէև Պատկանեանը յայտնի է իր երգիծական տաղանդով և վիպական ընդունակութիւններով, որի ապացոյցը նրա պատմւածքներն են նոր նախիջևանի կեանքից և «Փառասէրը», բայց այնուամենայնիւ նրա նշանակութիւնը դրանց մէջ չ'պէտք է որոնել, այլ նրա քնարերգութեան մէջ:

Չ'պէտք է կարծել որ Պատկանեանի վասրի պատճառը նրա պօէզիայի գեղարւեստական արժանիքը կամ լեզուն և ոճն են: Ամենակին: Պատկանեանի լեզուն, այս, ճոխ է և հարուստ բառերով, որովհետեւ նա իր պաշարը վերցնում էր ամեն տեղից, բայց և այնպէս նրա լեզուն օրինակելի չէր՝ շնորհիւ իր խա-

որնիխուռն ձևերի: և նրա ուրոյն լեզուն մնաց եղակի՝ առանց հետեւողներ ունենալու: Ոճը թէև պարզ ու վճիտ է, բազմակողմանի և մերթ ընդ մերթ բանաստեղծական, բայց դարձեալ հեռու է կատարեալ գեղարւեստական լինելուց ընդհանրապէս: Նոյնպէս և ոտանաւորը կոկ և սահուն է, բայց կատարելութեան չէ հասցրած:

Ուրեմն Պատկանեանի ժողովրդականութեան գաղանին նրա պօէզիայի գեղարւեստական վսեմութիւնը չէ, այլ բուն ազգային ոգին, որով տոգորւած է նրա ամբողջ քնարերգութիւնը:

Պատկանեանը իգուր չէ հոչակւել որպէս ազգային բանաստեղծ կամ «ազգի երգիչ», ինչպէս նրան անւանել է Մագաթեանը: Իր ամբողջ կեանքի ընթացքում նա վայելում էր մեծ ժողովրդականութիւն: Խնդոյքներում, դպրոցական և ազգային հանդէսներում, թատերաբեմերի վրայ, ամեն տեղ՝ նոյն իսկ գիւղական խրճիթներում հնչում էին նրա երգերը: «Բաժակներ առնունք, եղբարք»—ճաշկերոյթների անհրաժեշտ երգերից մէկն էր: Սիրւած երգեր էին «Մայր Արաքսի ափերով», «Թող փշէ քամին», «Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից», «Մեզնից շատ առաջ» և այլն: Թատերաբեմից անթիւ անհամար անգամ արտասանւել են բանաստեղծութիւններից շատերը՝ «Մեծը», «Քահանան», «Նոր տարին», «Հայերու բաղձանքը», «Հայերուս թուքը», «Հիմի էլ լունք» և այլն: Այս բոլոր երգերի մէջ կար մի ինչ լունքը և այլն: Այս բոլոր երգերի մէջ կար մի ինչ որ ընդհանուր շաղկապող բան, որովհետեւ Պատկանեանը երգում էր այն, ինչ որ մօտիկ էր իւրաքանչիւր հայի սրտին:

Պատկանեանը չափազանց գիւղազգաց էր գէպի ազգի վիճակը. նոյնպէս և նրա քնարը: Էօլեան տաւ-

զի նման մըմնջում էր ամենաթեթև հովիկից անդամ և արձագանք էր տալիս ամեն մի ձայնի, որ գալիս էր հայրենիքի նոյն խակ հեռաւոր վայրերից:

Այսպիսով Պատկանեանն հանդիսանում էր որպէս թարգման ազգային տրամադրութիւնների և խոհերի:

Վերածնութեան օրերում, երբ Ռուսաց տէրութեան հովանու տակ մեզանում սկսւել էր խաղաղ կուլտուրական կեանք, Պատկանեանի պօչդիան ևս խաղաղ և մեղմ բնոյթ ունէր: Այդ ժամանակ նրան հետաքրքրում էին աւելի գեղարւեսար, «ոլորուն երգը» և «քնքոյշ ձայները», ինչպէս այդ երեսում է նրա հետեւեալ տողերից.

«Ես երգեցի երգ ոլորուն և անուշ,
իմ քնարի ձայնն էր մեղմիկ և քնքուշ»:

Ահա երիտասարդ բանաստեղծը ինչումն էր տեսնում իր կոչումը:

Բայց անցնում են տարիներ, երբ տաճկական արհաւիրքների ձայնը հասնում է և նրան, Պատկանեանը թողնում է նախկին քնարը և վերցնում է ուրիշ, որի լարերը տիսուր էին և հնչում էին աւելի խրոխտ և ուժգին:

«Մի կարծէք, որ ես...» ոտանաւորը ակնյայտնի ցոյց է տալիս, թէ Պատկանեանը վերջ ի վերջոյ ինչ բանի մէջ էր տեսնում իր կոչումը և կատարած գերը.

«Այս, իմ քնարի տիսուր ձայները
Ցնցեցին հայի հոգու լարերը.
Արիւն էլ աղնիւ սրտէ քամեցին,
Կտրինի աչքէն քունը փախցրին»:



Ճ Ե Հ Ա Զ Ի Զ Ե Ը

Նրա կեանքը.

Սմբատ Շահազեղեանը ծնւել է Աշտարակ գիւղում 1841 թ.: Վեց տարեկան զրկւելով հօրից, որը յարդ և պատիւ էր վայելում զիւղում, մանուկը իր բոլոր սէրբ կենարոնացրեց մօր վրայ: Մայրը՝ Խոսրովիդուխտը՝ վերին աստիճանի խելօք և գեղեցիկ կընող համբաւ ունէր զիւղում: Իր սեռին յատուկ քընքութեամբ նա շատ սիրում էր Սմբատին, որը վեց արու զաւակներից ամենակրտսերն էր: Օտարութեան մէջ Շահազեղեանը միշտ յիշում էր մօրը, միշտ նրա կարօտը քաշում, և միայն որդիկական խորունկ սիրոյ մէջ կարող էր յդանալ «Երազը», այդ սրտաբուղիս սքանչելի երգը:

Թաւահոյ գր. պատմ.

Սմբատը գրագիտութիւն սովորեց գիւղի քահանայի մօտ: 1852 թ. նրան ուղարկեցին Մօսկվա և տեսն Լազարեան ճեմարանը, որ այն ժամանակ բաղկացած էր վեց գիմնազիական դասարաններից և երկու լսարանից: 1862 թ. աւարտեց ուսումը և նշանակվեց այնտեղ ուսուցիչ հայոց լեզվի և գրականութեան: Այդ պաշտօնում նա մնաց մինչև 1897 թ.: Այնուհետեւ նա թողեց մանկավարժական ասպարէզը: Ծննդավայրից հեռանալուց յետոյ Շահագիզեանը ապրել է շարունակ Մօսկվայում և այդքան ժամանակամիջոցում—կէս դարից աւելի—միայն մէկ անգամ է այցելել հայրենիքը, 1873 թ., և այն էլ միամսով:

1892 թ. Մօսկվայի հայկական գաղութի նախա-
ձեռնութեամբ կատարւեց Շահազիզեանի 30-ամեայ
յորելեանը, որի առիթով բազմաթիւ շնորհաւորական
նամակներ և հեռագիրներ ստացւեցին: Երկրորդ՝ 35-
ամեայ յորելեանը կատարեցին նրա նախկին աշա-
կերաները:

Շահաղիզեանը մեռաւ 1907 թ. դեկտ. 25-ին, և
թաղումը տեղի ունեցաւ դեկտ. 30-ին հայոց գերեզ-
մանոցում՝ Նազարեանի դամբարանի մօտ:

Ծահագիզեանի հանգիստ, նստակեաց կեանքը աղքատ է արտաքին դէպքերով և այդ կողմից ներկայացնում է կատարեալ հակապատկեր՝ Նալբանդեանի փոթորկալի և աստանդական կեանքին:

Շահազիգեանի գրական գործունէութիւնը ըստ
էութեան բաժանում է երկու շրջանի: «Սռաջինը
տեսում է մինչև 1865 թ. սկիզբը, երբ լոյս տեսաւ
ժողովածուն, որի մէջ մտել էին «Լեռնի վիշտը» և
60-ի չափ բանաստեղծութիւններ: Երկրորդ շրջանը
տեսում է մինչև բանաստեղծի կեանքի վախճանը: Այս

շրջանում նաև գրում էր արձակ, մեծ մասամբ հրապարակախօսական գրւածքներ, իսկ բանաստեղծութիւններ գրել է ընդամենը 8 հատ, որոնք լոյս տեսան 1893 թ. «Յորելեանի տարեղարձ» խորագրով:

Շահագիգեանը դեռ ևս լաղարեան ճեմարանի աւ Զանազան շակերտ էր, երբ լոյս տեսաւ նրա անդրանիկ վոր-ազգեցու Ճերի ժողովածուն «Ազատութեան ժամեր» խորա-թիւններ. Գրով: Նոյն խորագիրն ունէր և մօտ կէս դար առաջ Անգլիայում լոյս տեսած երիտասարդ բանաստեղծ Բայլինի գրքոյիկը: Դա զուգադիպում չէր, այլ ակըն-յայտնի ապացոյց Բայլինի գօրեղ ազգեցութեան հայ բանաստեղծի վրայ: Միւս կողմից՝ առաջին փորձերը ցոյց են տալիս, որ Շահագիգեանը դեռ ևս վերջնա-կանապէս չէր յարել աշխարհաբարին, զրում էր թէ գրաբար և թէ աշխարհաբար: Միւնոյն ժամանակ լուրջ խնդիրներ նրան դեռ ևս չէին զբաղեցնում: Նա դեռ անհոգ երգիչ էր: Սէր և հայրենիք—ահա նրա մօտիւները:

Բայց ահա «Հիւսիսափայլի» քարոզները, որպէս
առողջ սերմեր, ընկնում են պարարտ հողի վրայ:
Նազարեանի և Նալբանդեանի համարձակ խօսքը,
լուսամիտ գաղափարները միանդամից յափշտակում
են երիտասարդ բանաստեղծին: Նրա հոգին ենթարկ-
ւում է նոր իշխանութեան: Նա սեփականում է «Հիւ-
սիսափայլի» առաջադէմ հայեացքները, ազգի տիսուր
վիճակը նրան մտածել է տալիս, նրան զբաղեցնում
է ազգի ապագան: Եւ այսպէս, Շահազիզեանի մէջ
կատարւում է արմատական յեղաշբջում: Ողջունելով
վերածնութեան արշալոյսը, նա ևս կանգնում է ա-
ռաջապահ զինորների շարքում և պաշտպանում է
միևնույն դատը:

Ծահագիրեանի բանաստեղծական տաղանդը զար-

գացել է եւրօպական և ոռուսաց հեղինակների ազդեցութեան տակ: Մազաթեանը երկար կանգ է առնում այն բոլոր ազդեցութիւնների վրայ, որոնց նաև նժամարկւել է: «Լեռնի վշտի» և բանաստեղծութիւնների մէջ կան բազմաթիւ տեղեր, որոնք վերցրւած են այս կամ այն հեղինակից, օրինակ, Շեքսպիրից, Հայնէից, Պուչինից:

Բայրօնիզմ Բայց ամենախոր հետք թողել է մեր բանաստեղծի վրայ Անգլիայի հոչակաւոր պօէտ Բայրնը, որի ազդեցութիւնը տարածւած էր XIX դ. առաջին կիսի եւրօպական պօէզիայի վրայ:

Պրօֆեսօր Ստորօժէնկոն անգլիական հանձարի այդ զօրեղ հմայքի պատճառն համարում է նախ և առաջ նրա բանաստեղծութեան համաշխարհային բընյթը. նրա համար մարդկային շահերը աւելի բարձր էին ազգային շահերից: Երկրորդ պատճառն այն էր, որ Բայրնի պօէզիան ճշգրիտ արտայայտութիւն էր այն մոայլ արամագրութեան, որի մէջ գտնւում էր եւրօպայի հասարակութիւնը, երբ յաղթանակող ըէտակցիայի չնորհիւ կորցրել էր հաւատը դէպի XVIII դ. լուսաւոր գաղափարները: Բայրնը հանդիսանում էր որպէս արտայայտիչ ընդհանուր հիմաթափութեան:

Բայրօնիզմ ընդհանրապէս հասկացւում է որպէս անհատի մաքառում հասարակական նախապաշարումների դէմ, բողոք անիրաւութեան և ճնշումների դէմ, անբաւականութիւն կեանքից, մոայլ յունետեսութիւն և այն. և այդ բոլորի հետ միասին զմայլանք բնութեան վսեմ զեղեցկութիւնների առաջ, որոնց մէջ մարդ գտնում է սակաւ հոգեկան թեթևութիւն կեանքի տանջող հակասութիւններից, վերջապէս կոչ դէպի մշտադալար բնութիւն:

Բայրնի հրապոյրը տարածւած էր ամբողջ եւ-

րօպայում: Գերմանական, ֆրանսիական և ոռուսաց ամենանշանակութիւնները իրանց գրւածքների մէջ մտցնում էին Բայրնի այս կամ այն գիծը: Հայնէ, Լեռնաու, Լամարտին, Ալֆրէդ դը Միւսէ, Ժօրժ Սանդ, Պուշկին, Լերմօնտով և այսպէս շատ հեղինակներ կրել են իրանց վրայ Բայրնի ազդեցութիւնը:

Բայրնի պօէզիան արձագանք գտաւ և հայոց գրականութեան մէջ: Անգլիական բանաստեղծի ամենաշերմ հետեւողը եղաւ Շահազիզեանը: «Լեռնի վիշտը» ամբողջապէս տոգորւած է բայրնական տրամադրութեամբ: Բայրնի հերոսների մելամաղձոտ տըրամագրութիւնը, կեանքից անբաւականութիւնը, բողոք ժամանակակից կարգերի դէմ, հեգնութիւն, զայդոյթ—այս բոլորը յատուկ է և Շահազիզեանի հերոսներին: Զայլդ Հարօլդի և Լեռնի գլխաւոր տարբերութիւնը նրանումն է, որ Բայրնի հերոսը կրում է իր հոգում համաշխարհային թափիծ, նրա վիշտը մարդկութեան վիշտն է, իսկ Լեռնի վիշտը առաջ է գալիս կողքի թշւառութիւնից: Շահազիզեանը նոյն իսկ Լեռնի նկարագրութեան մէջ հետեւում էր անգլիացի բանաստեղծին: Օրինակ,

«Թէ սկ էր Լեռն, և ինչ նորա ցեղ,
Զեղ ասելու չեմ—այդ աւելորդ բան.
Մի հին հայ տանից, և այն ոչ ցքեղ,
Ծագում էր Լեռն: Այսքան բաւական»:

Զայլդ-Հարօլդի նկարագիրը ոռուերէն թարգմանութեան մէջ այսպէս է.

«Здѣсь говорить я не хочу,
Чѣмъ предокъ Чальда занимался.
Объ этомъ просто умолчу.

Могу одно сказать: былъ знатенъ
Его почтенныхъ предковъ родъ».

Շահազիզեանը շատ տեղ կրկնում էր Բայրնի
յաջող մաքերը և ափօրիզմները: Օրինակ, «Ա տէր և
ծառայ մի հողով ծածկւած», «ախ, ես չեմ կարող
չ'գովել այս գիշեր», «կեանքը գեղեցիկ պարզե
աշխարհում»: Այդպիսի փոխառութիւններ արել է և ու-
րիշ հեղինակներից: Օրինակ, «Անիւ ընկեր» երգի
երկու տունը թարգմանութիւն է Դօքրօլիւբովի բա-
նաստեղծութիւնից:

Հայ գրող՝ Բայցի Նազարեանից, Շահազիզեանի բանաստեղ-
ների ազ- ծութիւնների վրայ որոշ ազգեցութիւն ունեցել են
դեցութիւն Նալբանդեան և Պատկանեան: Շահազիզեանը խորին
յարգանքով է խօսում Նալբանդեանի մասին: Լկոնը,
ճանապարհելով դէպի Կովկաս, իր սիրած գրքերի
հետ վերցնում է և «մեզ ծանօթ Կոմսի մի քանի
երգեր»: «Լկոնի վշտի» երրորդ գլխում գրաբարի
պաշտպաններին պարսաւելուց յետոյ, հետեւել գո-
վասանական խօսքերն է ասում Նալբանդեանի հաս-
ցէին՝

«Բայց քեզ հանում եմ այս տիսուր դասից,
Ով նոր հայախօս և ազնիւ մշակ.
Քեզ կարող էի անմահ փուշերից
Բաշ մարտիրոսի բոլորել պսակ»:

Հետեւել երեք տունը դարձեալ նորուած են
Նալբանդեանին: «Ազատութիւնը», ըստ երեսյթին,
մեծ տպաւորութիւն է գործել Շահազիզեանի վրայ.
այդ երեսում է «Ազգային վիճակ» ուսանաւորից, որ-
տեղ նա փառաբանում է ազատութիւնը Նալբանդեա-
նի հետեւողութեամբ: Գալով Պատկանեանի ազգեցու-
թեան, նրա հետքերը երեսում են գլխաւորապէս ի-

րար նման գարձւածների մէջ, օրինակ, «դու ազգ
Թորգոմեան», «Եղբարք, ի՞նչ անենք», «ախ, եթէ,
հայ ազգ, մի օր կամ մի ժամ Աստւած պարզեր...»:

Զնայած այն բոլոր ազգեցութիւններին, որոնք
անխուսափելի են իւրաքանչիւր բանաստեղծի հա-
մար, Շահազիզեանը այսուամենայնիւ ունի իր խիստ
և որոշ ինքնուրոյնութիւնը, իր սեփական մօտիւնե-
ն որոշ ինքնուրոյնութիւնը, յամենայն դէպս դատապարտելի է,
փոխառութիւնը յամենայն դէպս դատապարտելի է,
դրանում Շահազիզեանը բացառութիւն չէ կազմում.
Նազարեան, Նալբանդեան, Պատկանեան բարձր
վարակւած էին այդ ախտով:



«Լետնի վիշտը».

Շահազիզեանի ամենաշահաւոր երկը «Լեռնի Համառօտ
բովանդա-
վիշտը» պօէման է:

Նախերգանքի մէջ բանաստեղծը յայտնում է, կութիւն.
թէ ինչու աշխարհիկ լեզով է գրում.

«Ժամանակակից գրում եմ լեզով,
Որ ամենայն մարդ կարգայ, հասկանայ»:

Նա յանցանք է համարում հետեւել այն ուղղու-
թեան, որ տւել է միայն «խաւար գրւածքներ»:

Յետոյ սկսում է բուն քերթւածը: Հեղինակը
նախ և առաջ ժանօթացնում է իր հերոսի հետ: Դա
ինքը Լեռնն է, մի համալսարանական ազնիւ երի-
տասարդ, որ մեկուսի կեանք էր վարում Մօսկւա-
յում: Եթէ կայ աշխարհում մէկը, որին նա սիրում
էր, դա մայրն է: Իսկ ընկերներից վաղուց երես էր
երեքել: Առաջին սէրը թունաւորել է կասկածը: Նա
մէնակ է, նրա սիրու ուտում է վիշտը: Վշտի պատ-

ճառը ուրիշ բան չէ, եթէ ոչ ազգի տխուր վիճակը:
Բայց ցաւին դարման անելու համար, հարկաւոր է
աւեմել հիւանդին և շօշափել վէրքերը: Եւ ահա կու-
նը վճռում է այցելել հայրենիքը:

Նա վերցնում է իր սիրած գրքերը և ճանապարհ
ընկնում դէպի հարաւ: Հիւսիսային կովկասում մըտ-
նում է մի հայաբնակ քաղաք և ի՞նչ է տեսնում.
Ժողովուրդը խոռվութեան մէջ է և պախարակում է
անարժան հովւին, որ գաղթակղեցնում էր հօտը ան-
ուղայ վարքով և թիւր կարծիքներով: Լեռնը շա-
րունակում է առաջ և առաջ գնալ: Նրան հիացնում
է կովկասեան լեռների բնութիւնը: Լեռնը այցելում
է մի նոր քաղաք, որ աչքի էր ընկնում խայտաձա-
մուկ ազգաբնակութեամբ: Այստեղ նրա ուշադրու-
թիւնը գրաւում են հայ օրիորդներ, որոնց առաջ
կարող էր նսեմանալ իտալուհիների և չելլադայի կա-
նանց գեղեցկութիւնը, բայց որոնց մէջ իդուր կ'ի-
նէր վնարել հայութեան նշոյլ անգամ.

«Օտարի բարբառ, օտարի լեզուն,
Հայ օրիորդներ, ինձ չէ գրաւում.
Ինչո՞ւ չունիք հայ գատարակութիւն,
Ինչո՞ւ հայ խօսքը ձեզ չէ զարդարում»:

Հայուհիները կտրւած են ազգութիւնից: Նրանց
գրաւում է միայն փայլ և պչրանք: Բայց այդպէս
չէին Վ դարի հայ կանայք: Նրանք սիրեցին ազգու-
թեան անուն, նրանք սրբեցին մայրենի վէրքեր ան-
մեղ արիւնով և անմահացան.

«Բաղցրաձայն բամբիոն մի ձեռն առնելով,
Զինավուեցան հայոց աղջիկներ.
Եւ մատաղ կուրծքը խաչակներով
Պատերազմական հնչեցին տաղեր»:

Հայ օրիորդները սակայն մեղագրում են ծնող-
ներին, որ իրանց գաստիարակել են օտարի ոգով:
Թշւառներ, բացականչում է լեռնը, նրանք աւելի կը
թշւառանան, երբ կ'դառնան գերի բռնակալ ամու-
սինների ձեռին: Ուրեմն, եզրակացնում է լեռնը, մեզ
հարկաւոր են կրթւած մայրեր.

«Մայր մեզ տըւեցէք, որ սնուցանէք
Մեղ սուրբ կաթովը աղգաշինութեան»:

Իսկ նիւթապաշտ, հարուստ ծնողները լեռնի
կշտամբանքին պատասխանում են, որ միայն սոկով
կարելի է «գժոխք ծախել և զրախո առներ»: Լեռնի
համակրութիւնը գրաւում է միայն արհեստաւոր գա-
սակարգը, համբարը, բայց նրա մէջ ևս ամեն բան
անգիտակցական է:

Վերջապէս լեռնն համնում է բուն հայրենիք:
Ի՞նչ հրաշալի բուսականութիւն, կատարեալ գրախտ:
Բայց այս գրախտ երկրում ապրում է մի գժբախտ
ժողովուրդ, որի կեանքը միշտ վտանգի մէջ է և
կախւած է թուրքի սրից: Այստեղ տիրում է համա-
տարած խաւար և ոչ մի ճառագայթ:

«Այս Ասիան է, իրաւունք մարդի
Ոտի տակ ձգւած և վիրաւորւած.
Նորա իշխողը—խաւարը բանտի,
Նա մեռելութեան միշտ գատապարտւած»:

Այսպիսի անսախանձելի զրութեան մէջ է գլո-
նում լեռնն իր հայրենիքը: Նրա յուզւած երևակա-
յութեան առջև ներկայանում են ինկելի դէմքեր՝
Սահակ, Մերսէս Մեծ, Ղազար և այլն: Նը-
րանք պարսաւում են Հռոմը, որ երկապաւակութիւն
մտցրեց քրիստոնեաների մէջ, կշտամբում են և հայ
կրօնաւորներին, որոնք կրօնի էութիւնը չեն ըմբռ-

նում, խաչահամբոյրներով գանձեր են պիզում մեղկ կեանքի համար:

Այս պմենը տեսնելուց յետոյ, հեղինակը գալիս է հետեւալ եղբակացութեան: Չարիքի բուն պատճառը մտաւոր խաւարն է. ուստի հարկաւոր է տարածել ուսում: Դա է փրկութեան միակ ճանապարհը: Բայց ամենից առաջ ակաղեմիա:

«Ակաղեմիա Մայր էջմիածնում,
Նախագահ վանքի գաւթին ու դրան,
Ուր եռ է գալիս այս ներկայ օրում
Ընչասէր արիւն, ախտեր անարժան»:

Վերջաբանում հեղինակն ասում է, որ «Լևոնի վշտի» գրելու շարժառիթը եղել է ոչ թէ փառասիրութիւն, այլ միայն ազգի վիճակը:

«Լ. վիշտը» «Լևոնի վիշտը» թոյլ է իրեւ գեղարւեստական գեղարւես-ամբողջութիւն: Գլխաւոր պակասութիւնը՝ նրանումն տական է, որ հերոսը աւելի վերացական գաղափարի, քան տեսակէ-թէ կենդանի մարդու տալաւրութիւն է գործում: Թիցագիտեանին չէ յաջողւել մարմնացնել իր հերոսին, և նա դուրս է եկել վերին աստիճանի անգոյն: Դրա պատճառն այն է, որ հեղինակը Լևոնին չէ ներկայացրել առօրեայ կեանքում, չէ աւել նրա կեանքի մանրամասն նկարագրը: Մենք չ'գիտենք, թէ Լևոնը ինչպէս էր անցկանում օրերը, ինչ սովորութիւններ ունէր, ինչ քնաւորութեան տէր էր, ում հետ էր շփում, և այսպիսի բազմաթիւ հարցերի պատասխանը չենք գտնում պօէմայի մէջ:

Սակայն ինչու, օրինակ, Պուշկինի Օնեգինը այնպէս կենդանի կանգնած է մեր առաջ: Որովհետև նա նկարագրւած է ոտից մինչև զլուխ կենդանի, քնական գոյներով: Մենք նրան լաւ ճանաչում ենք, գիտենք նրա լաւ և վատ կողմերը: Գիտենք, թէ ինչ-

պէս էր անցկացնում օրը առաւօտից մինչև կէս գիշեր, ինչով էր պարապում, ուր էր յաճախում, ում հետ էր տեսակցում, ինչի՞ մասին էր խօսում: և այսպիսով նրա կեանքի իւրաքանչիւր վայրկեանը պարզ է մեղ համար:

Լևոնը Օնեգինի նման չէ ապրում մարդկային հասարակութեան մէջ, այլ խօսում է, քարոզում է: Մենք լսում ենք նրա վառվուն ճառերը, նրա բողոքը, նրա զայրոյթը: Մերթ դատապարտում է ազգի թերութիւնները, մերթ պախարակում է նիւթապաշտներին, մերթ ձայնը բարձրացնում է կրօնաւոր դասի ընչասիրութեան դէմ, մերթ կշտամբում է կանանց օտարամոլութիւնը: Լևոնի այս բոլոր ճառերը լսում ենք, բայց իրան չենք տեսնում. նրա վեհապանձ ճակատը, նրա վառվուն աչքերը, նրա ոգեսրւած դէմքը մենք չենք տեսնում: Կայ մի օրինորդ, որին նա սիրում է, բայց մենք գոնէ մի անգամ չենք տեսնում նրանց միասին: Լևոնը իրան հեռու է պահում ընկերներից: Ինչու գոնէ մի անգամ հեղինակը մեզ ցոյց չէ ապիսան նրան ընկերական շրջանում՝ թէ կուզ կշտամբողի դերում: Իրականութիւնից վերցըած այսպիսի տեսարանները կարող էին կեանք ներշնչել ոչ միայն Լևոնի բնաւորութեան, այլ և ամբողջ պօէմային:

Թէև «Լևոնի վիշտը», իրեւ գեղարւեստական ամբողջութիւն, անկատար է և թերի, բայց նշանաւոր է իր մասնաւոր գեղեցկութիւններով, որոնք ցիրու ցան ափուած են ամբողջ պօէմայի մէջ: Օրինակ, սքանչելի է կովկասեան լեռների նկարագիրը: Լերմօնտովի գըչով նա նկարագրում է սպիտակափառ կաղբեկը, ծաղկագարդ հովիտները և գաշտերը, մենաւոր օգապար արծիւր: Նոյնքան հարուստ գոյնե-

բով է նկարւած Տաճկահայաստանի բնութիւնը իր խնկահոտ հովիտներով, անուշ ջրերով, համեղ մրգերով և ամբրոսական ծաղիկներով։ Հիանալի են այն էջերը, որոնց մէջ բանաստեղծը դրւատում է Վ դարի հայ կանանց արիութիւնը Վարդանանց պատերազմում, նոյնպէս և խտալացոց ազատազրական շարժումը և նրան յաջորդող ազգի բարդաւաճումը։ Վառ գոյներով է պատկերացւած և հայերի վիճակը մահմեղական լծի տակ։ Հաճութեամբ կարդացւում են նոյն իսկ Լեռնի կրակոտ ճառերը և հեղինակի շեղումները ձև Բայրըն, երբ նրանք չեն երկարում մինչև ձանձրոյթ։

«Լ. վշտի» «Լեռնի վիշտը» 60-ական թւականների նշանակուտունաւոր գրական երևոյթներից մէկն է։ Նոր դարարական գլուխը իր գեղարւեստական արտայայտութիւնը զընշանակուտաւ Շահազիգեանի պօէմայի մէջ։ Այն ամենը, ինչ որ յուզում էր ժամանակակից լաւագոյն հայերին, ինչ որ ուրախացնում և վշտացնում էր, այն ամենը, ինչ որ առիթ էր տալիս տաք բանակոփեների, վէճերի, դարեշրջանի լուսաւոր մտքերը և զգացումները—բոլորը տեղ է գտել «Լեռնի վշտի» մէջ։ Ինչ որ «Հիւսիսափայլը» քարոզում էր արձակ, նոյնը քարոզում էր Շահազիգեանը բանաստեղծական ոճով։ «Հիւսիսափայլը» հարւածում էր հայի թերութիւնները՝ նիւթապաշտ ոգին, անտարբերութիւնը։ «Հիւսիսափայլը» պարսաւում էր հայ կրօնաւորների տրգիտութիւնը, ողբում էր կանանց ստրկական վիճակը, պաշտպանում էր աշխարհիկ լեզւի դատը, պահանջում էր, իբրև անյետածգելի գործ, բարձրագոյն չոգեոր Ակաղեմիա—այս բոլորը մենք գտնում ենք «Լեռնի վշտի» մէջ։

Պօէմայի հերոսը, Լեռնը, իբրև գրական տիպ

ինչպէս տեսանք, անյաջող է, բայց ըստ էութեան, այսինքն՝ իր աշխարհահայեացքով և քարոզներով կարող է համարւել 60-ական թւականների առաջադէմ հայ գործիչների ներկայացուցիչ։ Այնքան ընդհանուր գծեր կան Լեռնի և Նազարեանի, Նալբանդեանի, Շահազիգեանի և Պատկանեանի մէջ։ Նրանք բոլորեքեան մարտնչողներ էին, բոլորեքեան պաշտպանում էին միենոյն դատը, բոլորն էլ սիրում էին քարոզել։ Նրանք խօսքի մարդիկ էին։ Բացառութիւն կազմում է միայն Նալբանդեանը, որը խօսքը միացնում էր գործի հետ։ Լեռնը խօսքի մարդ է, ինչպէս հեղինակը իսքն էլ խոստվանում է.

 «Ես շատ խօսեցի, բայց քեզ գործեցի։
Գուցէ խօսքերըս ունայն գնացին։»

Բայց ոչ։ Լինում են ժամանակներ, երբ խօսքը ունայն չէ անցնում։ Երբ տիրում է մտաւոր ամայութիւն, խօսքը ամենազօր է։ Խօսքն է, որ յետոյ գործ է դառնում։ Շահազիգեանը թէկ քիչ առաջ ասում էր, թէ «Հատ խօսեցի, քիչ գործեցի», բայց նա ներքուստ, իր սրտումը հաւատացած է, որ այնուամենայնիւ մի դրական գործ կատարւած է։

«Բայց իրաւի է. ոչինչ անապատ
Զէ կարող բերել պառուղ անարատ,
Յառաջ պիտոյ է նորան բարուքել
Եւ ապա առատ հունձի սպասել։»

Եւ արդարեւ, ինչ էր հայի կեանքը—մի խոպան անապատ, որ պառուղ չէր տալիս։ Բայց Լեռնի նման մարդկանց դերը կայանում է նրանում, որ նրանք մշակում են անապատը, ցանում են սերմեր, որից յետոյ անապատը գառնում է պազարեր։

Մեր գրականութեան մէջ եղել են առարկու-

թիւներ Աւոնի վերաբերմամբ։ Մաղաթեանը նրան
համարում է ֆրազեօր, որովհետև նա խօսում է
այնպիսի մարդկանց առաջ, որոնք նրան չեն հասկա-
նում։ Դա միւնոյն պարսաւանքն է, որ յայտնում էր
Բելինսկին «Խելքից պատուհասի» հերոսին՝ Զացկուն,
եթե թէ նրա ճառերը անտեղի և ծիծաղելի էին։ Սա-
կայն Բելինսկին, ինչպէս յայտնի է, յետոյ արմա-
տապէս փոխեց իր կարծիքը Գրիգորովին կօմեդիայի
մասին։ Նա բացարձակ խոստովանեց իր սիալը,
որ առաջ բարձրից և արհամարհանքով դատապարտել
էր Զացկուն, բայց այժմ համոզւած է, որ «Խելքից
պատուհասը» մի ազնիւ և մարդամէր գործ է և ա-
ռաջին բողոք ուու իրականութեան դէմ։ Նրա խօսքե-
րը կարելի է կրկնել «Աւոնի վշտի» մասին,
այսինքն, որ դա մի ազնիւ գործ է և միւնոյն ժամա-
նակ եռանդուն բողոք աննախանձելի հայ իրականու-
թեան դէմ։

Բանաստեղծութիւններ.

1865 թ. լոյս տեսած ժողովածուի մէջ, բացի
«Աւոնի վշտից», կային 60-ից աւելի ոտանաւորներ։
Մենք կ'ծանօթանանք նրանց հետ ըստ մօտիւների։
Սէրը մեծ դեր է կատարել բանաստեղծի հոգե-
կան կեանքում։ Սէրը եղել է աղքիւր անհուն երջան-
կութեան և զմայլանքի։ Նազելի կոյսը գրաւիչ աչքե-
րով, թուխ մազերով, բարձրագեղ հասակով, անուշ
ձայնով գերել են նրա սիրտը։ Մի շարք ոտանաւոր-
ների մէջ նա թափում է իր սիրային գեղումները։
(«Առաջին սէր», «Առաջին տեսութիւն», «Սիրոյ
կեանքը»)։ Նա օրհնում է այն օրը, երբ նստած էր
սիրունու մօտ, կամ ծունը իջած լաց էր լինում եր-

ջանկութիւնից։ Բայց սէրը միայն երջանկութիւն չէ
տւել պօէտին, այլ եղել է և դառնութեան աղբիւր։
Նա տանջւել և յուսահատւել է։ Նրա տանջանքների
պատճառը եղել է մերթ սիրած օրիորդի մահը, մերթ
դաւաճանութիւնը («Սիրոյ կորուստ»)։ Սիրային բա-
նաստեղծութիւնների մէջ ամենայաջողն է «Օրիորդի
արտասուքը», մի երգ, որ այժմ էլ մոռացւած չէ։
Դրա նիւթը կազմում է անհուն սէրը, որ մնում է
անփոփոխ նոյն իսկ «անգութի» դաւաճանութեան
դէպքում։

Բանաստեղծի սիրոյ առարկան միայն կոյսը չէ։
Նա սիրում է և իր մօրը, որին նսիրել է երկու բա-
նաստեղծութիւն՝ «Երազ» և «Վերջին հրաժեշտ»։
«Երազի» մէջ որդիական սէրը և մօր կարօտը ար-
տայայտւած է խորին զգացումով, և դա մեր յայտ-
նի և սիրւած երգերից մէկն է։ «Աշտարակի» մէջ
Շահազիզեանը սիրով նկարագրել է իր հայրենիքը և
շրջապատող գեղեցիկ բնութիւնը։

Բանաստեղծի հոգում մեծ տեղ ունի և բնութիւն։
թեան սէրը, որին նսիրել է մի շարք ոտանաւորներ՝
«Խորհրդաւոր գիշեր», «Խորհրդածութիւն բանաստեղ-
ծի», «Անտառի մէջ», «Մայիս», «Գիշեր»։ Նկարա-
գրելով բնութիւնը, Շահազիզեանը միւնոյն ժամանակ
հաղորդում է և նրա գործած բարեբար աղգեցու-
թիւնը մարդու հոգու վրայ։ Բնութեան նկարագրու-
թիւններից լաւագոյնն է «Գիշերը»։

«Սիրուն պատկեր։ Պարզ գիշեր էր։
Եւ օգեղէն ովկեանում
Փայլում էին անթիւ աստղեր։
Եւ ուրախ էր սիրտս զարկում։
Ամբոսական ծաղիկներ վառ
Անուշութիւն էին բուրում,

Եւ երկնքի ցող կենարար
Բնութիւնն էր զովայնում:
Ես անխոռվ երգում էի, —
Իմ երգս իմաստ մաքուր էր.
Ազատութիւն էի երգում,
Հայրենիքի պարծանք ու սէր»:

Ազգային Շահազիգեանի բանաստեղծութիւնների մէջ կան մօտիւներ ազգային մօտիւներ: Ազգի տխուր վիճակը վշասցը-նում է նրան, բայց նա միսիմարութիւն է գանում անցեալի մէջ: V դարը նամանաւանդ ողեորիչ է Շահազիգեանի համար: Վարդանանց պատերազմը, Վարդանն իր քաջերով, տիկնայք փափկասունք հայոց աշխարհի, ոսկեզրոյկ եղիշէի—այս բոլորը ողեորում է բանաստեղծին («Երգ մեռանող հայրենասիրի»): Հայրենասիրութիւնն այնքան զօրեղ է նրա մէջ, որ մոռացնել է տալիս նոյն իսկ կոյսի սէրը: («Ինձ մի սիրիը»).

«Խաւար եմ ես, որպէս գիշեր,
Իմ չորս կողմին փոթորիկ.
Չունիմ քեզ սէր, չունիմ քեզ սէր.
Ես սիրում եմ հայրենիք»:

Նոյն իսկ բնութեան հմայքը, որից զմայլւած է բանաստեղծը, չէ կարող մոռացնել տալ հայրենիքը, և նա երգում է ազատութիւն, հայրենիքի պարծանք և սէր: («Գիշեր»):

Այստեղ հարկաւոր է յիշել նաև «Խտալացիք և խտալուհիք» խորագրով բանաստեղծութիւնը, որի շարժառիթը եղել է խտալիայի ազատագրական շարժումը: Շահազիգեանը դրւատում է խտալացոց հայրենասիրութիւնը Աւստրիայի դէմ վարած պատերազմում. միևնոյն ժամանակ գովում է քաջարի խտալուհիներին և նրանց համեմատում է V դարի հայ-

անձնուէր կանանց հետ: Դա մի վառվոռն ներբողական է, մի օրհներգ՝ գրւած բանաստեղծական ողեորութեան ըռպէին:

Շահազիգեանը ևս չէր ընդունում «արւեստ արւեստի համար» վարդապետութիւնը: Նա դաւանում էր ուրիշ վարդապետութիւն՝ «արւեստը կեանքի համար»: Նրա հայեացքները բանաստեղծի կոչման մասին արտայայտւած են մի քանի ոտանաւորներում «Կեցցէ սուրբ գործը», «Բոնաւոր սուլթան», «Պօէտ, նիւթապաշտ և քաղաքացի», «Ճշմարտախօս»:

«Բոնաւոր սուլթանի» մէջ Շահազիգեանը բերում է իր բանաստեղծական նշանաբաննը՝ «Նախ քաղաքացի և ապա պօէտ»: Նոյն միտքը յայտնւած է «Կեցցէ սուրբ գործը» ոտանաւորում: Բանաստեղծը երգում էր միայն սիրոյ քաղցրութիւն և երազներ: Բայց երբ լսեց ազգի հառաջանքը, ուխտեց ծառայել հասարակութեան: Երրորդ ոտանաւորը, որի վերնագիրն է «Պօէտ, նիւթապաշտ և քաղաքացի», աւելի ևս շեշտում է հեղինակի միտքը: Պօէտն իրան երեւակայում է գերազոյն էակ և իրան հեռու է պահում մարդկանցից. նիւթապաշտը թաղւած է չոր ուցամաք հաշիւների մէջ. միայն քաղաքացին է ծառայում հասարակութեան շահերին և բանաստեղծին ևս հրաւիրում է հասարակական առարկէզ: «Ճշմարտախօսը» գրւած է կերմօնատովի «Մարդարէի» հետեւութեամբ:

Շահազիգեանը իր բանաստեղծութեան նիւթ էր Միւս ոտագրածնում նաև փիլիսօփայական, կրօնական ինդիլ-նաւորները ներ, մարդկային կեանքի խորհուրդը և այն: Օրինակ, «Միջին Տիգրան» և «Միհրդատ» ոտանաւորներում լուսաբանւած է այն միտքը, թէ աշխարհում

ամեն ինչ—փառք, պատիւ, անուն—անցողական է և
ունայն, քանի որ ամենքը հողի տակ հաւասարւում
են. «Այս յաղթող, և տէր, և ծառայ — մի հողով
ծածկւած»:

Ժողովածուի վերջում զետեղւած է «Ազգային պիճակ» վերնագրով բանաստեղծութիւնը, որ սկսւում է հետևեալ տողերով.

«Յառաջ, հայութիւն, յառաջ ազգութիւն,
Դարսու լուսաւոր գաղափարներով»:

Ոտանաւորը գրւած է 1861 թ., երեք տարի առաջ, քան «Լևոնի վիշտը»։ Բայց դա բնորոշ է Շահազդիկեանի բանաստեղծական գարգացման համար։ Դա նրա անցողական շրջանի առաջին և լուրջ վաստակն է։ Ոտանաւորի առաջին տողերից երեսում է, որ բանաստեղծը արդէն ոյժ է զգում իր մէջ առաջադիմական կոչ անելու ազգին։ «Ազգային վիճակը» ուրիշ բան չէ, եթէ ոչ «Լևոնի վշտի» սկզբնական սաղմը։ Նրա մէջ երեսում է ապագայ պօէմայի հեղինակը։

Երբ լոյս տեսաւ Շահագիզեանի «Լեռնի վիշտը և զանագան բանաստեղծութիւններ» խորագրով զիրքը, Նազարեանը «Հիւսիսափայլի» մէջ մի գովասանական մատենախօսութիւն տպեց նրա մասին։ Նա իրան համարում էր գաղափարակից Լեռնին և հեղինակի գեղեցիկ մտքերին. գովում էր գրւածքի հայրենասիրական ողին, հարուստ բովանդակութիւնը և լեզուն։ Միայն տեղ տեղ նրա լեզվի մէջ գտնում էր ոռւսական ոճի ազդեցութիւնը։

Երկրորդ Եթէ աչքի անցկացնենք Շահազիղեանի ժողովա-
շրջանո ծուխ մէջ իւրաքանչիւր ոտանսաւորի տարեթիւր, մենք
զարմանքով կ'տեսնենք, որ բոլորն էլ, աննշան բա-

ցառութեամբ, գրւած են 1864 թ.: Ուրեմն մի մեծ
պօէմա և 60 ստանաւոր մի տարւայ ընթացքում: Ապ-
շեցնող բեղմնաւորութիւն, արդարկ, հազւագիւտ ե-
լեռյթ:

իւնչ երջանիկ տարի Շահազդիկեանի կեանքում:
Եւ մեծ մասը գրւած է բնութեան ծոցում, Բօգօ-
րօդսկ, Կուսկով և ուրիշ ամարանոցներում, բանա-
ստեղծական ներշնչումների մէջ։ Անտառային ծառե-
րի սօսաւիւնն է օրօրել նրա երազները, երկնքի ցո-
լուն աստղերն են խօսել նրա հետ։

Բայց աւազ. այդ երջանիկ տարին ճակատագը-
րական էր բանստեղծի համար: Քնարի լարերը կար-
ծես մի անդամից կտրւեցին, և երգիչը լոեց:

1865 թ. յետոյ մինչև մահը Շահազիղեանը գրել է բնդամենը 8 բանաստեղծութիւն:

Հ Ըստ մասնաւութեան կամ պատճառը Արդեօք այստեղ ար-
ինչ էր զբա պատճառը Արդեօք այստեղ ար-
դարացաւ ժողովրդական առածը, թէ աղքիւրը երբ
վարացաւ կտրւելու նշան է: Կամ Շահազիգեանի հո-
գարարեց, կտրւելու նշան է: Կամ Շահազիգեանի հո-
գին մի հրաբուխ էր, որ մի տարի ուժգնութեամբ
գործեց և հանգաւ:

Հարցը հետութեամբ կ'լուծւի, եթէ թոյլ տանք,
որ Շահազիգեանը մի տարում այնքան մեծ քանա-
կութեամբ բանաստեղծութիւններ արտադրելուց յե-
տոյ սպառւեց, և ոգերութիւնն անցաւ։ Դա; ինար-
կէ, մասամբ ճիշտ է։ Շահազիգեանը չունէր այն ըն-
դարձակ, մեծ տաղանդը և այնքան շատ նիւթեր, որ
նա բոլորովին չ'սպառւէր կամ սպառւէր շատ ուշ։
Նոյն իսկ 1864 թ. տեսդային ստեղծագործութեան
օրերում նա զգում էր, որ իր ոգերութիւնը երկա-
րատե չ'պիտի լինի, որ նա շուտով պիտի անցնի և
տեղի տայ արձակ ոճին կամ պրօզային։ «Լևոնի վըշ-
տի» III գլխի վերջումը նա գրումէ.

«Եւ կը գայ մի օր—պըսօգով յարմար,
Որ ձեզ հատ հաշւեմ, ձգելու իմ քնար»:

Շահագինեանի բանաստեղծութեան: Վրայ ճնշող
ազդեցութիւն ունեցաւ անշուշտ մի ուրիշ հանգամանք:
Բանը նրանումն է, որ 1865 թ. ճակատագրական
տարի էր նաև ոռուսակայ վերածնութեան համար: 1858 թ. սկսած մտաւոր շարժումը միանդամից կանգ
առաւ, գործիչները ասպարէզից հեռացան, բանա-
ստեղծները լուեցին, թատրոնն ընկաւ, և անկումը
կատարեալ էր: Ահա այդ ընդհանուր տարտամ զրու-
թիւնն էլ անշուշտ հանգցրեց Շահագիգեանի հոգում
մնացած բանաստեղծական աւելնը, տեղը թողնելով
միայն մի քանի կայծեր:

Երկրորդ 1893 թ. Մօնկւայում լոյս տեսաւ մի գրքոյկ
շրջանի «Յորելեանի տարեգարձ» վերնագրով: Գրքոյկի մէջ,
բանա-
ստեղծ: ի միջի այլոց, զետեղւած էին ութ բանաստեղծու-
թիւններ: Դա բոլորն էր, ինչ որ կարողացաւ տալ
Շահագիգեանի մուսան երկրորդ երկարատև շրջա-
նում, որ աևեց 42 տարի (1865—1907 թ.):

Այս փոքրիկ ժողովածուն եկաւ վկայելու, որ,
յիրաւի, «Լևոնի վշտի» հեղինակի մէջ մեծ յեղաշըր-
ջում էր կատարւել, և նախկին ոգևորութիւնից մնա-
ցել էին մի քանի կայծեր: Ոտանաւորներից բուրում
էր սառնութիւն: Նախկին վառվուն իդէալիստը այժմ
դարձել է բոլորովին անտարբեր դէպի փառք, դէպի
հոգու անմահութիւն, և «հողէ անկիւնը» նրա
համար աւելի թանկ արժէր, քան թէ հոգու անմա-
հական մասը («Երբ ցուրտ դիակդ կեանքից զրկը-
ւած...»): Շահագինեանն ինքը գիտակցում էր, որ
այլ ևս անզօր է ստեղծագործելու, որ ներքին կրա-
կը հանգաւ, և ահա ինչու իր տեղը զիջում է մա-
նուկ սերնդին.

«Մեռաւ իմ մուսան, հանգաւ և կրակ,
Անտառը լցւեց չոր տերեներով.
Երկինքը ծածկւեց, փախաւ արեգակ,
Էլ ես չեմ ապրում ուրախ երգերով:
Այժմ ինձ մնաց միայն փշտանքներ,
Մայր մտաւ ահա և նշոյլ վերջին.
Հանում եմ զրահս, և՛ զէն, և՛ զարդեր
Ցանձնում եմ գորանց մանուկ սերնդին»:

Ժողովածուի մէջ կան երկու բանաստեղծու-
թիւններ, որոնք նւիրւած են Նազարեանի յիշատա-
կին: Նազարեանը այն պատկառելի անձն է, որին,
կարելի է առել երկրպագում էր Շահագիգեանը:
«Մահարձան» խորագրով բանաստեղծութեան մէջ,
որ գրւած է Հօրացիոսի հետևողութեամբ, նա դրւա-
տում է Նազարեանի «Կոր գրիչը», «սուրբ վաստա-
կը». Նրան անւանում է «լոյս տւող Պոօմեթէոս»:
Միւս բանաստեղծութեան մէջ, որի խորագիրն է
«Պանդուխտ հոգի», հանդէս է գալիս Նազարեանի
հոգին գրախտի երանութեան մէջ: Բայց նա տխուր
է այնտեղ. Նրա ուշ ու միաքը երկրի հետ է, որով-
ք հետեւ այնտեղ կայ և՛ վիշտ, և՛ հոգս և՛ արցունք:
Նազարեանի հոգին ձգտում է դէպի երկիր.

«Եր ունիմ սրտումս, լայն այս երկնքից,
Ամփափել իր մէջ չէ կարոզ գրախտ.
Խաւար զիշեր է երկինք աստղալից.
Այնքան լուսաւոր երկրային իմ բախտ»:

Երրորդ գրւածքը, որ Շահագիգեանը նվիրեց Նա-
զարեանին, բանաստեղծութիւն չէր, այլ մի պատկա- բակախոս
ուելի հատոր, որի խորագիրն էր «Հրապարակախոս ձայն
ձայն»: Դրան առիթ տւողը Աղ. Երիցեանն էր, որ
«Փորձ» ամսագրում մանրակրկիտ քննադատութեան
էր ենթարկել Ստ. Նազարեանի ամբողջ գործունէու-

թիւնը։ Նա ճիգ էր թափել ապացուցելու, որ Նազարեանը կանգնած չէր իր կոչման բարձրութեան վըրայ, որ նա անպատրաստ էր իր դերի համար, և այսպիսով աշխատում էր իջեցնել Նազարեանին իր պատշաճ բարձրութիւնից։

Շահազիգեանը, մինչև հոգու խորքը վրդովւած Երիցեանի սանձարձակ յօդւածից, զրեց իր «Հրապարակախօս ձայնը»։ Նախ, իբրև երախտագէտ աշակերտ, իր խորին յարգանքն է մատուցանում ուսուցչին, անւանելով նրան «վերածնութեան առաքեալ», տալիս է նրա կենսագրութիւնը և դրւատում է նրա գեղեցիկ յատկութիւնները, հոգու վսեմութիւնը։ Այսուհետեւ սկսում է իր հաշիւները Երիցեանի հետ։

Շահազիգեանը քայլ առ քայլ հետևում է իր հակառակորդին և ջախջախում է նրան իւրաքանչիւր կէտում։

Երիցեանն ասում է, որ Նազարեանը չէր ճանաչում ազգը և հայրենիքը, կարծում էր, որ բոլոր հայերը վաճառականներ են։ Շահազիգեանը պատասխանում է, որ Նազարեանը ճանաչում էր իր ազգը, որքան այդ հարկաւոր էր նրա քարոզների համար։ Նա սխալում էր, երբ հարւածում էր ազգի ընդհանուր տգիտութիւնը, վաճառականների նիւթապաշտ ողին, հոգևորականների զարգացման ստոր աստիճանը, «ժանգոտած» գրաբարը և հնապաշտ ֆանատիկուններին։ Երիցեանն ասում է, որ Նազարեանը լաւ չ'գիտէր գրաբար և գիտնական չէր։ Շահազիգեանը պատասխանում է, որ Նազարեանը, յիրաւի, բառիս բուն նշանակութեամբ գիտնական չէր, բայց ունէր բազմակողմանի զարգացում, ներշնչւած էր Եւրօպայի առաջադէմ, լուսամիտ գաղափարներով, ցաւում էր ազգի ցաւով և ունէր մի լեզու, թէև ոչ այնքան

կանոնաւոր և գեղեցիկ, բայց ազդու, համոզիչ և քարոզչական, որ մուրճի հարւածի պէս կոռամ, կորփում էր հայի մտաւոր կեանքը։ Երիցեանն ասում է, որ Նազարեանը չէ ստեղծել աշխարհիկ լեզուն և նրանից առաջ էլ կային աշխարհաբար գրքեր։ Շահազիգեանը պատասխանում է. խնդիրը նրանում չէ, թէ ով է ստեղծել աշխարհաբարը. ով է ասել, թէ Նազարեանն է ստեղծել աշխարհաբարը։ Նազարեանի գերը կայանում է նրանում, որ առաջինը հրապարակով ձայն բարձրացրեց աշխարհիկ լեզուի անհրաժեշտութեան մասին և առաջին մարդն էր, որ ամենազօրեղ և մահաբեր հարւած տւեց գրաբարին, որից յետոյ աշխարհաբարն սկսեց լիազօր տիրապետել գրականութեան մէջ։

Շահազիգեանը կէտ առ կէտ հերքելով Երիցեանին, միենոյն ժամանակ կշտամբում է նրան, որ նա քրքրում է Նազարեանի գրւածքները, ինչպէս խլուրդը փորում է գետինը. փոխանակ գեղեցիկ արձանի ամբողջութեամբ զմայլելու, կարճատես աշքով ըսկում է գիտել իւրաքանչիւր մասը առանձին, աշխատելով մանը սխալներ գտնել այդ առանձին մասերում։ Երիցեանը մատի վաթաթան է շինել Նազարեանի Այբենարանը, գրաբար հոգեբանութիւնը և նման գրւածքները, մինչգեռ Նազարեանը Նազարեան է միայն «Հիւսիսափայլով», որի ծառայութեան վրայ և հարկ էր ծանրանալ։

Շահազիգեանը հաւատացած է, որ Նազարեանը, վերածնութեան այդ պայծառ առաքեալը, Երիցեանի անւանարկող յօդւածից յետոյ աւելի կ'բարձրանայ։

Շահազիգեանի Երկրորդ ընդարձակ գրւածքը Արձակ կոչում է «Ամառնային նամակներ», ուր նա շօշագրւածք փում է ժամանակակից այլ այլ խնդիրներ և ի մի-

Ջի այլոց աշխատում է պաշտպանել Մովսէս Խորենացուն այն յարձակումներից, որոնց ենթարկում էր հայոց պատմութեան նախահայրը օտար և հայ գիտնականներից: «Յիշողութիւններ Վարդանանց տօնի առթիւ» գրքոյկի մէջ Շահազիգեանը կրկին վերադառնում է դէպի իր սիրած Վ դարբ: «Մի քանի խօսք իմ ընթերցողներին» բրօշիւրի մէջ նա արծարծում է ազգութեան վերաբերեալ խնդիրներ: Ազգի պահպանութեան պայմաններ նա համարում է ուսում, կրօն, լեզու և գրականութիւն:

Հնայած, որ Շահազիգեանը խիստ ենթարկուած էր օտար ազգեցութիւնների, այնուամենայնիւ նա կարողացաւ պահպանել իր ինքնուրոյնութիւնը և իր գրւածքներին ներշնչել ազգային ողի: Իր գրական հայեացքներով նա կողմնակից էր իրական, բէալ ուղղութեան և միշտ հաւատարիմ մնաց իր յայտարարած սկզբունքին՝ «Նախ քաղաքացի և ապա պօէտ»: Ահա ինչու նրա բանաստեղծութեան շարժառիթները սերտ կապւած էին կեանքի հետ:

Շահազիգեանը այն պայծառ գէմքերից է, որոնք բաց արեցին ազգի առաջ նոր հօրիզոններ և առաջնորդ հանդիսացան լուսաւորութեան գործում. մէկն էր այն սակաւաթիւ քարոզիչներից, որոնք խորտակելով հին նախապաշարումները, յայտարարեցին նոր և փրկարար գաղափարներ: Յատկապէս Շահազիգեանին ենք պարտական, որ պօէման, բանաստեղծութեան այդ կարեոր ճիւղը, որ սաեղծեց Բայրնը և որ այնքան տարածւած էր Եւրօպայում, հաստատւեց նաև հայ գրականութեաց մէջ:

Մանաւանդ մէծ է Շահազիգեանի ծառայութիւնը գրական լեզու զարգացման պրօցեսում: 60-ական թւականների հայ գրողներից ոչ մէկը չունէր նրա

կանոնաւոր և հարուստ բառերով լեզուն: Մեր այժմեան գրական լեզուն ամենից շատ մօտենում է Շահազիգեանի լեզուն, միայն աւելի զտւած և մաքրւած է նրա հնաբանութիւններից, ինչպէս օրինակ, «մեռուանեմ», «տեսանեմ», «այպանեմ», «մեք», «պիտոյ է» և այլն: Հաստատ կարելի է ասել, որ մեր ժամանակակից բանաստեղծ Յովհաննիսեանի լեզուն կրում է իր վրայ Շահազիգեանի լեզուի գրոշմբ: Տողերիս գրողը նոյնպէս լեզուի վերաբերմամբ շատ է պարտական Շահազիգեանին: Թէև Շահազիգեանի ոտանաւորը աչքի ընկնող գեղեցկութիւններ չունի և ոչ էլ ճոխ յանգեր, բայց թեթև և սահուն է:

«Զոհեր» խորագրով բանաստեղծութեան մէջ Շահազիգեանը որոշում է իր կատարած գերը հետեւեալ տողերով.

«Բայց թող հայկական որդիքն իմանան,
Որ իմ սուզս նոցա վիճակն է եղել,
Որ երբէք վախլուկ զինւորի նման
Թշնամուս առջև վահան չիմ ձգել:

Չեմ երկրպագել հս ոսկի հորթին
Եւ ոչ կուռքերին պաշտել օտարի.
Այլ միշտ հոգեոր կարօտ ծարաւի.
Տւել եմ արժանն ամեն մի մարդին,

Չեմ տաշել գագաղ, ու մատաղ կեանքի
Կանաչ ծառի պէս ծաղկել են յոյսեր:
Սրսկել եմ զրանց ջրով կենդանի,
Որ գալոց ազգին լինին պաղարեր»:

Յ. ԹԱՏՐՈՒՆ ԵՒ ԴՐԱՄԱ

I. Թատրոն

Վերածնութեան շրջանում սկիզբն առաւ ոռուսահայ թատրոնը: Միաժամանակ սկսւեց և զարգացաւ դրաման, զրականութեան այդ կարևոր ճիւղը, որի տեղը բաց էր հայոց մատենազրութեան մէջ սկզբից մինչև XIX դարի կէսը և դեռ աւելի:

Սկզբնաւորութիւն Այս անգամ ևս ազդանշանը եկաւ հիւսիսից: Առաջին ներկայացումը տեղի ունեցաւ Մօսկվայում 1859 թ. յունւարի 27.ին: Ներկայացումը կազմակերպել էին ուսանողները, որոնք ընտրել էին Ս. Վանանդեցու «Արիստակէս» պատմական ողբերգութիւնը և ուսանող Ալարդաթեանի կատակերգութիւնը Թիֆլիսի կեանքից, «Վայ իմ կորած 50 ոսկի» վերնագրով:

Նալբանդեանն «Հիւսիսափայլի» մէջ իր կարծիքն յայտնեց ներկայացման մասին: Վողեւիլին հաւանութիւն տւեց, իսկ ողբերգութեանը՝ ոչ: Նա ցանկութիւն է յայտնում, որ Թիֆլիսում ևս սկսեն «մայրենի լեզով խաղարկութիւններ»:

Թիֆլիսի երիտասարդները՝ խրախուսւած Մօսկվայի ուսանողութեան օրինակով, ձեռնամուխ են լինում թատրոնական գործին: Նախ և առաջ ասպարեզ է գալիս Միք, Պատկանեանը, որը 1859 թ. օգոստոսի 10-ին ներկայացրեց իր ինքնուրոյն վոդեւիլը «Մօցիքուլ» վերնագրով, Թիֆլիսի կեանքից: Կարինեանը, որ նրա պաշտօնակիցն էր ներսիսեան դպրոցում, «Մեղու Հայաստանի» լրագրում խիստ պախարակեց Պատկանեանին, որ նա, իբրև նոր Տի-

մոն, կամեցել է իր կատակերգութեան մէջ արատաւորել Թիֆլիսի պատւաւոր քաղաքացիներին, կանանց և մանաւանդ օրիորդներին: Պատկանեանը չբաւականցաւ խիստ պատասխանելով նոյն լրագրում: Երեք օրում նա շարադրեց մի պասկելի — վոդել «Մէկը նշանած, միւսը՝ կին» վերնագրով, որի մէջ դուրս է բերւած կարինեանի ընտանեկան կեանքը: Վերջինիս միջնորդութեամբ և հոգևոր կառավարութեան հրամանով, Պատկանեանը ստիպւած էր ներսիսեան դպրոցի դահլիճից բեմը տեղափոխել Շերմազանեանի դարպասը, ուր նա շարունակեց մէկը միւսի ետևից բեմ հանել իր ինքնուրոյն կամ թարգմանական պիէսները:

Եւ այսպիսով մեզանում կենցազագրական կօմեղիայի սկիզբը դրւեց: Որքան էլ թոյլ լինէին առաջին փորձերը, բայց միխթարականն այն է, որ մեր նոր դրաման առաջին քայլից արդէն կանգնեց իրական հողի վրայ:

Կենցազագրական կօմեղիայի հետ գրեթէ միաժամանակ առաջ եկաւ պատմական ողբերգութիւնը, որից յետոյ երկու ուղղութիւններ սկսեցին իրար հետ մրցել: Յակոբ կարինեանը զրեց «Շուշանիկ» ողբերգութիւնը և իր նորակազմ խմբով ներկայացրեց 1860 թ. սեպտ. 8-ին ներսիսեան դպրոցի սրահում: Պիէսը, չնայած իր գրաբարախառն, ծանր լեզվին, մեծ յաջողութիւն ունեցաւ, ամբողջ թատրոնը լաց եղաւ, և ամենից բարձրածայն ինքը հեղինակը: Այսուհետեւ կարինեանի խումբը ներկայացնում էր միայն պատմական ողբերգութիւններ՝ «Միհրդատ», «Ներսէս Մեծ» և այլն:

1863 թ. թատրոնն սկսում է աւելի կենդանաւասը: Ասպարեզ են գալիս թատրոնի առաջադիմու-

թեան նախանձախնդիր անձինք, որոնք ձգտում են թատրոնական գործը դնել հասարակական հողի վրայ։ Թատրոնաէրներից կազմւում է մի խումբ, որի եռանշուն անդամներից էին Պոօշեան և Ամերիկեան։ Պատւաւոր քաղաքացի Իզմիրեանի նախագահութեամբ գումարում է ժողով։ Նորակազմ խումբը առաջին անգամ ներկայացնում է 1863 թ. յունւարի 3-ին Գալֆայեանի «Արշակ Բ» ողբերգութիւնը։ Ապագայ գլուխամտուրգներ՝ Սունդուկեան և բժ. Տէր-Գլիզորեան ներկայ էին թատրոնում և շատ հաւանում են վաղարշակ Շահիսաթունեանին Արշակի դերում։ Յաջողութիւնից խրախուսած՝ թատերասէրների ընկերութիւնը վճռում է թատրոնական գործը դնել աւելի հաստատ հիմքի վրայ։ Բազմամարդ ժողովում ընտրում են կօմիտետ և զանազան մասնաժողովներ՝ բեղերտուարի, տնտեսական, դերասանական, երաժշտական։ Կօմիտետի մէջ մտնում են այնպիսի անձնաւորութիւններ, ինչպէս՝ Իզմիրեան, Սունդուկեան, Աղաբեկան, Պոօշեան, Ամերիկեան և այլն։ Շնորհիւ Հերակլ իշխանի և իշխան Եազօն թումանեանի, կօմիտետը ճանաչւեց պաշտօնական մարմին, և իրաւունք ձեռք բերեց հայոց ներկայացումները տալ քաղաքային թատրոնում էժանացրած դնով։

Առաջին ներկայացման համար ընտրեցին «Արշակ Բ» և Փուղինեանի նոր կատակերգութիւնը՝ «Դաւալ-Ղաղօ» վերնագրով։ Դա նշանաւոր երեկոյ էր։ Նախ այս անգամ մասնակցում էին մի ափկին և երեք օրիորդ, որ չեղած բան էր թատրոնի սկզբնաւորութիւնից դէսը։ Տիկին Սօֆիա Շահինեանը, որին պատկանում է առաջին անգամ բեմ դուրս գալու պատիւը, կատարում էր Ղաղօի կնոջ դերը, իսկ օրիորդները երգելու համար էին։ Դրանցից մէկը ի-

րան նւիրեց բեմին. դա ապագայ ափկին Սաթինիկ Զմշկեանն է։ Այդ երեկոն նշանաւոր էր և նրանով, որ վճռեց մէկի ճակատագիրը։ Դա մի չինովնիկ էր, Գէորգ Զմշկեանը, որը ներկայացման ապաւորութեան տակ, դրանից յետոյ թողեց պաշտօնը և նւիրւեց բեմին։

Ներկայացումը մեծ յաջողութիւն ունեցաւ նոյն իսկ մուտքի կողմից, այնպէս որ եկամուտի կէսը, 400 ըուբլի, բաժանուեց չքաւոր համքարներին։ Պոօշեանի ասելով, ներկայացումից յետոյ բոլոր գերասանները և Իզմիրեանը համքարի որդոց ուսերի վրայ են գնացել, ջահերի լուսաւորութեամբ, թատրոնից մինչեւ զառափ Գիքօի տունը, ուր տեղի ունեցաւ երեկոյթ և ընթրիք, երգեր, պար, սրտաշարժ ճառախօսութիւններ և այլն։

Դերակատարներից մեծ յաջողութիւն է ունեցել Մատինեանը, որը «Դաւալ-Ղաղօ» մէջ շնորքով կատարել է մշեցի կիւկիւի դերը։

Զմշկեանը, կօմիտետի խմբից անկախ, կարինեանի աջակցութեամբ կազմեց նոր խումբ, որի մէջ մտան կօմիտետի խմբի դժոն անդամները՝ Ամերիկեան և Սուքիասեան։ Զմշկեանի խումբը առաջին անգամ ներկայացրեց Կարինեանի «Վարդան Մամիկոնեանը»։ Նրա խումբը հետզհետէ սկսեց ուժեղանալ։ Աւելացան սլօմեցի ֆասուլամեան ամուսինները և մի շնորհալի կանացի ոյժ, Գայիանէ անունով, որի սեռը գաղտնի էր պահուում, բայց երկու տարուց յետոյ պարզւեց, որ օր. Գայիանէն ներսիսեան դպրոցի աշակերտ է։

Երկու դերասանական խմբերն իրար հետ մըրցում էին։ Սկզբում մերձեցման մի փորձ եղաւ, բայց անյաջող։ Ապայն գործը ցոյց տաեց, որ Զմշկեանի խումբը աւելի տոկուն է։

Կօմիտեաի գործերը լաւ չէին գնում, խումբը
թուլանում և քայքայւում էր: Գործը փշացրեց մի
խայտառակ ներկայացում: Երիցեանի «Արուսեակ»
վերնագրով անջնորհ պիէսը տապալւեց հանդիսական-
ների հոմերեան ծիծաղի միջին: Պիէսի տապալման
նպաստեց և հետեւեալ հանգամմանքը: Հերոսուհի Արու-
սեակի դերակատարը, գործողութեան վերջում, երբ
բոլոր գործող անձինք սպանւած փուեցին նրա շուր-
ջը, հետևելով խմբի կառավարիչ Մ. Աղաբեկեանի խոր-
հրդին, մէկ մեղեղիանման երգ ասաց և ինքնէլ փրո-
ւեց դիակների կոյտի վրայ և մեռաւ առանց պատճա-
ռի, որից սաստիկ ծիծաղ բարձրացաւ հանդիսականնե-
րի մէջ: Խմբի կազմալուծման գլխաւոր պատճառներն
ուրիշ հանգամանքներ էին: Հայոց թատրոնի պատ-
ւաւոր դիրեկտօր Եազօն Թումանեանը, նշանակւելով
քաղաքային թատրոնի (օպերայի) կառավարիչ, հրա-
ժարւեց հայկական թատրոնի հովանաւորի դերից,
որպէս զի օպերան յաջող կարողանայ մրցել հայոց
բեմի հետ: Նրա օրինակին հետևեց իզմիրեա-
նը: Դերասանական խմբի անդամները ցրւեցին: Կօ-
միտեաի խումբը դադարեց գործելուց:

Այս ժամանակ գործի գլուխ անցան Զմշկեան և
Ամերիկեան, որոնք նոր դերասանական խումբ կազ-
մելով, սկսեցին առաջ տանել թատրոնական գործը:
Նորակազմ խումբը առաջին անդամ ներկայա-
ցրեց «Աէր և նախապաշարմունք» երեք գործ. Կօմե-
դիան, թարգմանւած անգլիերէնից: Ամերիկեանը
փայլեցրեց իր տաղանդը լորդ Գեստինգսի դերում:
Ներկայացումը յաջողութիւն ունեցաւ: Այսուհետեւ,
ասում է Զմշկեանը «մօդա ընկան թարգմանական
պիէսները»: Թասուլճեան ամուսինների շնորհիւ, ո-
րոնց ճաշակը մելօդրամայից դէնը չէր անցնում, հայ-

կական բեմը ողողւեց ֆրանսիական մելօդրամանե-
րով: «Կոյրի զաւակը» այնքան դուր է գալիս, որ
այնուհետեւ ամեն անգամ, երբ ներկայացնում էին
այդ պիէսը, կասսայում տոմսակ չէր մնում: Դրանից
յետոյ յաջորդաբար ներկայացնում էին «Լուկրեցիա
Բօրջիա», «Դօն Սէզար դը Բազան», «Կատարինէ
Հուարդ» և այլն:

Զմշկեանի խումբը 1865 թ. շրջագայեց մի քա-
նի գաւառներ: Այցելեցին Շուշի, ուր ներկայացրին
«Շուշանիկ», «Վարդան Մամիկոնեան» և «Շկոլի
վարժապետ»: Բայց յաջողութիւն չդանելով Երևա-
նում և Ալէքսանդրապոլում, վերադարձան Թիֆլիս:

Բարեբաղդաբար, ֆրանսիական մելօդրաման ու-
նէր հայոց բեմի վրայ մի զօրեղ հակակշիռ: Դա մեր
նորածին կենցաղագրական կօմեդիան էր: Նոյն տա-
րիներում, երբ հայկական բեմը ողողւում էր ֆրան-
սիական մելօդրամաներով, Սունդուկեանը և բժ.
Տէր-Գրիգորեանը մէկը միւսի ետևից բեմ էին հա-
նում իրանց կօմեդիաները Թիֆլիսի կեանքից: Եւ
միայն այդպիսի ներկայացումներն էին մեծ բազմու-
թիւն զրաւում: Ահա ինչ է զրում Զմշկեանը «Խա-
թաբալայի» առաջին ներկայացման մասին, որ տեղի
ունեցաւ 1866 թ. ապրիլի 7-ին: «Մէկ շաբաթ առաջ
այդ ներկայացումն էր դասել խօսակցութեան նիւթ:
«Խաթաբալայի» ներկայացումը այնպիսի մեծ յաջո-
ղութիւն ունեցաւ, որ ոչ մէկ պիէս զրանից առաջ
և թէ յետոյ երբէք չէ ունեցել»:

Զնայած ինքնուրոյն ըեպերտուարի թարմու- Անկում
թեան, հասարակութիւնը գնալով աւելի և աւելի սառ-
չում էր գէպի թատրոնը: 1865 թ. մինչև 1870 թւա-
կանների սկիզբը այդ սառնութիւնն այնքան զգալի
չէր, որովհետեւ Սունդուկեանը և Տէր-Գրիգորեանը

իրանց աշխոյժ պլիէսներով երբեմն կենդանացնում էին թատրոնը և Զմշկեանի խումբն էլ դեռ կանգուն էր: 70-ական թւականներին թատրոնը կատարելապէս ընկնում է, և տարտամ դրութիւնը տեսում է մինչև 1879 թ., երբ սկսում է թատրոնի պատմութեան նոր շրջանը:

1865 թ. սկսած թատրոնի անկումը կապւած էր մեր մտաւոր կեանքի ընդհանուր անկման հետ, որի մասին կ'խօսւի իր տեղում:

II. Դրամ

ՊԱՏՍԱԿԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

Կենցաղագրական կօմեդիայի հետ յաջող մըլլցում էր պատմական ողբերգութիւնը, որ այն ժամանակ դրամայի հարուստ ճիւղն էր կազմում: Պատմական ողբերգութիւններ մատակարարում էին արեմտեան հայերը: Ներկայացւում էին Հէքիմեանի «Սամէլը», «Մեծն Ներսէսը» և այլն, Թէրզեանի «Սանդուխտը», Գալֆայեանի «Արշակ Բ», Դուրեանի և Պէշիկթաշլեանի ողբերգութիւնները: Ռուսահայոց մէջ ողբերգութիւններ գրում էր կարինեանը, որի «Շուշանիկը» և «Վարդան Մամիկոնեանը» յաճախ ներկայացւում էին: Հետզհետէ ընդարձակւում էր պատմական բեպերտուարը («Խոսրով Մեծ», «Մէհրդատ», «Արա Գեղեցիկ» և այլն).

Այս բոլոր ողբերգութիւններն ունէին ընդհանուր պակասութիւններ: Թէկ նրանց մէջ չէին պահպանում կեղծ—դասական մի քանի կանոնները, օրինակ՝

երեք միութիւնը, բայց մնում էին ոյժի մէջ աւելի կարևոր թերութիւնները՝ հերոսների կեղծ և միակողմանի նկարագրութիւնը: Հերոսները կենդանի մարդկանց տպաւորութիւն չէին թողնում, այլ վերացական գաղափարներ էին: Հեղինակը խտացնում էր նըրանց այս կամ այն յատկութիւնը, և դուրս էին գալիս կամ բարի կամ չար հերոսներ: Այդպիսի ողբերգութիւնների մէջ բացակայում էր դրամատիզմը, որովհետև հերոսները տատանւել չ'գիտէին, չ'գիտէին ներքին մաքառում: Հերոսների խօսակցութիւնները նոյնպէս չէին համապատասխանում դարեշրջանի մըտաւոր աստիճանին. նրանք յայտնում էին հեղինակի ժամանակակից մտքերը: Պատմական ողբերգութիւնների մէջ մենք չենք տեսնում նաև դարեշրջանի լուսաբանութիւն իրական հարազատութեամբ:

Չնայած այս պակասութիւններին, ժողովուրդը սիրով յաճախում էր թատրոն ամեն անգամ, երբ ներկայացւում էր պատմական ողբերգութիւն: Պատմաւոր հասկանալի է. ժողովուրդը տեսնում էր թատրոնում նախկին փառքը կենդանացած, տեսնում էր իր թագաւորներին, զօրավարներին: Վարդան Մամիկոնեանի սիրագործութիւնները և մահը, Արշակ թագաւորի տառապանքը Անուշ բերգում, Շուշանիկի նահատակութիւնը Մետեխում, Սանդիխտի սպանութիւնը իր հօր՝ Սանատրուկի ձեռքով—և այսպիսի բազմաթիւ հերոսներ և անցքեր կենդանանում էին ժողովրդի առաջ: Հանդիսականներին գիւր էր գալիս և ողբերգութիւնների արտաքին փայլը՝ գոյնզգոյն հանդերձը, փայլուն սաղաւարանները, զէնք ու զրահը, կոփէն ու աղմուկը:

Պատահայ գր. պատմ.

ԿԵՆՑԱՂԱԳՐԱԿԱՆ ԿՕՄԵԴԻՅՈ

60-ական թւականներին գրեթէ բոլոր թատերագիրները՝ սկսած Ալաղաթեանից մինչև Սունդուկեանը՝ իրանց պիհուների նիւթերը վերցնում էին Թիֆլիսի կեանքից և գրում էին Թիֆլիսի բարբառով։ Դա առանց պատճառի չէր։ Նախ՝ Թիֆլիսեցոց բարբառը կարծես ստեղծւած էր կօմեդիայի համար, այնքան սրամտութիւն և հեգնանք է պարունակում իր մէջ։ Միւս կողմից՝ Թիֆլիսի հայ ազգաբնակութեան կեանքը իր բացասական, ծիծաղելի կողմերով անսպառ նիւթեր էր մատակարարում թատերագիրներին։ Թիֆլիսի գրեթէ բոլոր դասակարգերի կենցաղը, բարք ու վարքը գուրս է բերւած կենցաղագրական կօմեդիայում։ այստեղ ներկայ են և վաճառական և արհեստաւոր և աստիճանաւոր և ժողովրդի ստորին խաւերից դուրս եկած անձինք, և հին և նոր սերունդ։ Փողի պաշտամունք, բռնակալութիւն ընտանիքում, խարդախութիւն վաճառականութեան մէջ, հաշւով ամուսնութիւն, նորասիրութիւն, գժտութիւն ծնողների և գաւակների մէջ և այսպիսի բազմաթիւ աշխատներ կատակերգուների ձեռքին ծառայում էին իրեւ ծաղրելու առարկաներ։

Կենցաղագրական կօմեդիայի տաղանդաւոր ներկայացուցիչը Սունդուկեանն է։ Սակայն հարկաւոր է նախ ծանօթանալ նրա նախորդների հետ, որոնք կօմեդիայի զարգացման համար ճանապարհ հարթեցին։

ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ ՆԱԽՈՐԴՆԵՐԸ

Կենցաղագրական կօմեդիան իր սկզբնական շրջանում ուրիշ նպատակ չունէր, եթէ ոչ աշխայժ ծիծաղ յարուցանել հանդիսականների մէջ։ Հեղինակները գրան հասնում էին ծիծաղաշարժ դրութիւններ ստեղծելով և սրամիտ խօսքերով։ Նրանք չէին որոնում չարիքի արմատը։

Թատերագիրների շարքն սկսում է Նիկողայոս Ալաղաթեանը։ Նրա «Վայ իմ՝ կորած 50 ոսկին» աւթեան ուաշին կատակերգութիւնն է Թիֆլիսի կեանքից և առաջին անգամ տեսաւ հայկական բամպայի լոյսը։ Այստեղ կօմիկական դրութեան մէջ դրւած է մի խանդու ամուսին (*Կարապետ*), որ իր կնոջ անհաւատարմութեան մասին ունեցած կասկածը փարատելու համար, 50 ոսկով գնում է մի կախարդական գոլխարկ, որի ծածկողը աներևոյթանում է։ Վերջի վերջոյ խանդու մարդուն խելքի են բերում լաւ ծեծելուց յետոյ։

Ալաղաթեանից յետոյ Միք։ Պատկանեանը սկսեց Պատկանի վրայ ներկայացնել Թիֆլիսեցոց կեանքը։ Ինք՝ նեան, նուրոյն գրւածքների հետ տալիս էր և թարգմանութիւն կամ փոխադրութիւններ, օրինակ, «Թուղթի խաղացողի կեանքը», «Շկօլի վարժապետ», որոնք երկար ժամանակ մնացին հայկական բեպերտուարում։ Պատկանեանն առհասարակ բեղմնաւոր էր և գրում էր արագ։ Երիցեանի ասելով, նա նկարագրում էր մերթ թիֆլիսեցոց կեանքը, մերթ հսդիկների կենցաղը, մերթ սպանացի բանդիսներին։ Պատկանեանի ինքնուրոյն պիհուներից տպւած է միայն մէկը՝ «Մօցիքով» վերնագրով, որի մէջ դուրս է բերւած

մի նորեկ սպայ. Նա կամենում է պսակւել հարուստ աղջկայ հետ, որպէս զի նրա օգնութեամբ կարողանայ վճարել իր վատնած արքունական փողերը, և դիմում է միջնորդի օգնութեան: Մեծ դժւարութեամբ համաձայնութիւն է կայանում (սկզբում աղջկայ հայրը դէմ էր), բայց հարսանիքի ուրախութեան հանդիսին փեսացուն ձերբակալում է իբրև արքունական փողերի վատնիչ:

Միւս կատակերգութեան վերնազիրն է «ՄԵԿԸ նշանած, ՄԻԱԸ կին»: Բովանդակութիւնը Սունդուկեանի «Խաթաբալային» նման է: Երկու քոյրերից մէկը գեղեցիկ է (Անանի), միւսը տղեղ (Սօփօ): Ծնողները գեղեցիկ աղջկայ համար վարձում են ուսուցիչ, որի վրայ աշակերտուհին միրահարւում է, և նրանք ծածուկ նշանում են: Ծնողներն այդ իմաստով, խղճում են Սօփօին, որ մէծը փոքրից յետընկաւ, և աշխատում են նրա համար ևս փեսացուգոնել: Եւ գտնում են: Դա մի անփորձ զաւառացի տղայ էր, որին և թակարդ են ձգում: Ցոյց են տալիս գեղեցին, պսակում տղեղի հետ:

Կատակերգութիւնը երգախառն էր, ինչպէս ընդունւած էր այն ժամանակ: Այստեղ երգում էին. «Դուն տեհնում իս, դիմ փոխւիլ ին՝ քաղքի աղաթին ու փարքը»:

Պատկանեանից յետոյ ասպարէզ եկաւ բժ. Ն. Փուղինեանը: Նրա երկու գործողութեամբ կատակերգութեան վերնազիրն է «Դալալ-Ղաղօ»: Միւժեարայնքան էլ հետաքրքրական չէ: Դալալ-Ղաղօն միջնորդ է, բայց շատ անբաւական է իր պարապմունքից, որովհետեւ չէր կարողանում այնքան փող վաստակել որ իր ուղածի պէս ապրի: Ամուսինը նոյնպէս դժգոհ էր, որ չէր կարող ուրիշ կանանց պէս

«վեչերներ» սարքել: Վերջ ի վերջոյ Ղաղօն վճռում է կապալով վերցնել բաղնիմները և այդ միջոցով հարստանալ:

Այս պիէսի արժանիքը բովանդակութիւնը չէ, այլ միջանկեալ տեսարանները և յաջող գծագրւած տիպերը: Այստեղ երեսում է մի պօլսեցի, որ մեծ ախորժակ ունի կապալի միջոցով հարստանալու. կայ մշեցի պանդուխո՞ կիւկիւ, որ մաշւում է հայրենիքի կարօտից, յիշելով վաթանը և զաւակներին: Կայ և մի ստահակ, թեթևոլիկ ժան-Ղուլ, որ կրում է լոռնետ, կոտրատում է ֆրանսերէն և ցանկանում է ամուսնանալ դալալ Ղաղօի միջոցով: Այստեղ է և մի զւարձասէր վրացի՝ Ցքւիտաձէ անունով, որը պարապում է որսորդութեամբ. ուղում է գնել որսի շուն և բաղէ, միայն փող չունի, ուստի դիմում է դալալ Ղաղօին: Այս կօմեզիայում լեզուների կատարեալ խառնակութիւն է տիրում: Ղաղօն խօսում է Թիֆլիսի բարբառով, կիւկիւը Մշի, ժան-Ղուլ՝ գրական լեզուով, վրացի Ցքւիտաձէն՝ վրացերէն:

Բացի յաջող նկարւած դէմքերից, կատակերգութեան մէջ կայ և մի սրտաշարժ տեսարան. դա այն նամակի ընթերցումն է, որ մշեցի կիւկիւի համար վաթանից բերել է նրա երկրացին: Պանդուխանների կարօտը արտայայւած է վերին աստիճանի բնական և շատ յաջող կերպով:

Փուղինեանի պիէսով կենցազագրական կօմեզիան, կարելի է ասել, մի քայլ առաջ գնաց: Պուշեանի վկայութեամբ՝ «Դալալ-Ղաղօն» վառ ընդունելութիւն է գտել:

Փուղինեանն ունի և մի ուրիշ կատակերգութիւն, որի խորագիրն է «Վոլք տրաքվս, պիտի պսակվիս»: Դա փոխազրութիւն է Մոլիերի «Բոնի ամուսնութեան»:

Տէր-Գրիգորեանը Բժ. Միք. Տէր-Գրիգորեանը գործում էր զրա-
կան ասպարիզում Սունդուկեանի հետ միաժամանակ,
սակայն նրա ժանրը լուրջ կօմեղիա չէր, այլ թեթև
կատակերգութիւնը: Նա զրում էր արագ. երկու օ-
րում կարող էր զրել մի պիէս, բայց չէր աշխատում
խնամքով մշակել զրածը. ուստի նրա պիէսները շօ-
շափում էին կեանքի մակերեսոյթային կողմը միայն:
Նա սիրում էր ծիծաղել կեանքի տղեղ երեսյների
վրայ, իսկ չարիքի և նրա բուն արմատի հետ գործ շունէր:

Ծանօթանանք նրա մի քանի կատակերգութիւն-
ների հետ, որոնք երկար ժամանակ ներկայացւել են
հայ բեմերի վրայ, և այժմ էլ չեն մոռացւել:

Վերցնենք «Վ՞րյ քի իմ վեշերգ» կատակերգու-
թիւնը: Սրա հետաքրքրական կողմն այս է, որ ցոյց
է տալիս, թէ ինչպէս մեծածախս հրաւերները
և շուայլութիւնը հարուստ դասակարգից անցնում է-
ին ժողովրդի ստորին խաւերը և երբեմն կործանիչ
հետևանքներ էին ունենում: Ներկայ պիէսի մէջ դուրս
է բերւած երեկոյթ կամ «վեչեր» սարքելու մօ-
դան: Կէկէլը, որ մի խանութպանի ամուսին է, չէ
կամենում յետ մնալ ուրիշ կանանցից և ինքն էլ
սարքում է վեչեր և հրաւերում է հիւրեր: Բայց ա-
մուսինը նրա եղբօր հետ խօսքը մէկ արած՝ խան-
գարում են երեկոյթը. եկողին հայհոյելով յետ են
տալիս, մինչև անգամ երբեմն դիմում են գաւաղանի
օգնութեան: Կարելի է երևակայել կէկէլի բարկու-
թիւնը, երբ «վեչերը» չէ կայանում: «Պէտօի տի՛՛նու-
թի» մէջ հեղինակը ծաղրում է ժողովրդական սնա-
պաշտութիւնը: Մի ընտանիք պիտի գնայ ուխտատե-
ղի: Գերմանացի կատապանը, հայերէն կոտրատելով,
փողոցում կանգնած դուգուում է, որ շուտ անեն,
դուրս գան, որովհետեւ «ձիաները կոտորւում են»:

Պէտօք է ասել, որ տան ծառան՝ Պէտօն քիչ առաջ
կառապանի հետ լաւ կոնծել էին տկի գինուց, ինքը
փռւել էր զետնին, իսկ կառապանը գոռզոռում էր:
Երբ տանեցիք տեսնում են Պէտօին գետնին փռւած,
սկսում են անհանգստանալ. այս ու այն կողմից լու-
սում են ձայներ. «խեչիցը գժւել է», «չար հրեշտակ
կուլի խփած»: Բայց տան միակ անձը, որը խելքը
գլխին մարդ էր, բացատրում է ամենքին, որ Պէտօն
խաչից չէ գժւել, այլ հարբել է, «չարլամիշ է եղել»:



«Ես էլ քի մօցիքլովթիւն» վերնագրով վոգեվիլի
մէջ դուրս է բերւած անհաւասար ամուսնութիւնն
իր վատ հետևանքներով: Մինչդեռ այս նիւթի վրայ
կարելի էր հիմնել մի ուժեղ զրամա ողբերգական
վախճանով, Տէր-Գրիգորեանը վերցրել է ամուսնու-
թեան զաւեշտական կողմը: Յօ տարեկան ծերունին,
որ ամուսնացած է ջահիլ աղջկայ հետ, ապրում է
շարունակ կասկածների մէջ և հայհոյում է մօցիքուլ
եսայուն, որ նա է անպիտան կին ճարել իր հա-
մար: Բայց կինը նրան շուտով խելքի է բերում՝ մի
այսպիսի խաղ սարքելով: Կողմանի կերպով խանդոտ
ամուսնուն իմաց են տալիս, որ շուտով մի երիտա-
սարդ պիտի գայ նրա կնոջ հետ տեսակցելու: Նա
վճռում է թակարդ ձգել ստահակին. կանացի շոր է
հագնում և մութ սենեակում նստած սպասում է:
Գալիս է երիտասարդը, և մկանում է սիրահարական
տեսարան: Ծերունին բարկացած յարձակւում է երի-
տասարդի վրայ և սկսում է ծեծել, երբ յանկարծ
ներս է մտնում ամուսինը շամագանը ձեռքին. ամեն
ինչ պարզում է, և խանդու ծերուկը յիմարացած է:

«Խոտորնակին խոտորնակ»-ի մէջ նկարագրւած
է մի անպիտան զոքանչ: Նա իր աղջկան (կէկէլ)
տւել է մի պառաւ ծերունու այն յուսով, որ նա իր

հարստութիւնը կ'կտակէ կնոջը, ապա թէ ոչ նա իր շահիլ աղջկան չէր տայ մի «քօփակ ու քաւտառ» ծերուկի: Մայրը միշտ խրատում է աղջկան. «Սիրել տու գլուխդ, վուրդի, ու կ'տեսնիս, թէ դիփ քիզ վրայ չի հաստատի»: Միւնոյն ժամանակ մայր և աղջկա աշխատում են զինել ծերունուն որդու դէմ, հաւատացնելով, որ նա շոայլ է, «պաժարնի» է և ցանկանում է նրա մահը: Հայրն ընկնում է ջադուների գոները, տանջւում, հալ ու մաշ է լինում, բայց վերջ ի վերջոյ համոզւում է, որ որդին անմեղ է, ու սկսում է անիծել իր «օձ» ամուսնուն:

Բայց այս կատակերգութիւններից, Տէր-Գրիգորեանը գրել է մի քանի ուրիշ պիեմներ՝ «Նինօի նշնուիլը», «Պառաւներուն խրատ», «Ո՞վ է մեղաւոր», «Ժլատ»:

Կենցաղագրական կօմեդիան իր սաղմային գրութեան մէջ էր, երբ եկաւ Սունդուկեանը և գրեց նրան իր արժանի բարձրութեան վրայ:



ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ

Նրա կեանքը.

Գաբրիէլ Սունդուկեանը ծնւել է Թիֆլիսում 1825 թ. յունիսի 29-ին: Նրա հայրը վաճառական էր, մի քանի անգամ Եւրօպա այցելած: Գաբրիէլը վեց տարեկան էր, երբ հայրը մեռաւ: Մայրը նրա ըսկզբնական կրթութիւնը գրեց գեղեցիկ պայմանների մէջ: Այդ ժամանակ Թիֆլիսում բնակւում էր հայ գիւնական Շահան—Զրպեար, որին հրաւիրել էր Ներսէս Աշտարակեցին նորաբաց Ներսիսեան դպրոցում գրանսերէնի դասաւանդութեան համար: Սունդուկեանի հետ պարապում էին՝ Զրպետեանը հայերէնից, նրա գրանսունի ամուսինը՝ Գրանսերէնից, ոուսաց լեզուն աւանդում էր Առ. Արարատեանը, որ

յետոյ գարձաւ գրաբարի ջերմ պաշտպաններից մէկը:

Զրպետեան ամուսինների ազդեցութիւնը, ինչ-
պէս գրում է Զմշկեանը, շատ խոր տպաւորութիւն
է թողել Սունդուկեանի սրտի վրայ, և նա սիրել,
կապւել է նրանց հետ, ինչպէս երկրորդ ծնողների
հետ:

Երբ 1833 թ. մեռաւ Զրպետեանը, Սունդուկեանի
ուսումը շարունակւեց Արգանեան եղբայրների պանսիօ-
նում, որ այդ ժամանակ բարի համբաւ ուներ Թիֆ-
լիսում: Պանսիօնն աւարտելով՝ տեղափոխւեց գիմ-
նազիա, որ աւարտեց 1846 թ.: Այսուհետեւ չորս տա-
րի ուսանում էր Պետերբուրգի համալսարանի պատ-
մաշեզւագիտական բաժնում:

Ուսանողական տարիներն, ինարկէ, մեծապէս
նպաստեցին նրա մտաւոր զարգացման: Բայց Պե-
տերբուրգում նա մի ուրիշ օգուտ ստացաւ, որ շատ
կարեր էր նրա ապագայի համար: Այստեղ զարգա-
ցաւ նրա մէջ թատրոնի սէրը և էսթետիկական ճա-
շակը: Նա յաճախում էր թատրոն, ուր այդ ժամա-
նակ ներկայացումներ էր տալիս ֆրանսիական խում-
բը, որ կազմւած էր յայտնի ոյժերից՝ Պիեսի, Բեր-
տոն, Ալան:

1850 թ. Սունդուկեանն աւարտեց համալսարանը,
վերադարձաւ Թիֆլիս, ուր սկսւեց նրա պետական ծառա-
յութիւնը: Նախ պաշտօն ստացաւ փոխարքայ Վօրօն-
ցովի գիւտանատանը, յետոյ տեղափոխւեց Դերբէնտ:
1858 թ. վերադարձաւ և վերջնականապէս հաստատ-
ւեց Թիֆլիսում: Այսուհետեւ Սունդուկեանին յանձ-
նարարում էին աւելի և աւելի բարձր պաշտօններ, և
նա իր ստանձնած պարտականութիւնները կատարում
էր ամենայն բարեխղճութեամբ և իր աշխատանքնե-
րի մէջ ցոյց էր տալիս մեծ տոկունութիւն: Այդպէս

էլ նա յայտնի էր բարձրաստիճան անձանց շրջանում:
1863 թ. Սունդուկեանն ամուսնացաւ օրիորդ
Սօֆիա Միլիմաննեանի հետ, որը կրթւած էր հայ-
կական ոգով: Նա գարձաւ իր ամուսնու կեանքի
իսկական ընկերը և օգնականը նրա գրական աշխա-
տանքների մէջ:

1888 թ. կատարւեց Սունդուկեանի 25-ամեայ
յորելեանը, որի առիթով բանաստեղծ Պատկանեանը
զրեց հետևեալ տողերը.

«Ազգի շարաւոտ վէրքը լըւանալ,
Լիրը մեծատունին անվախ ապտակել,
Գոհարով ծածկւած կեզտերը բանալ,
Կեղծաւորութեան գիմակը պոկել
Ու իսեղ կինտօին զընել մարդու շար—
Այս ամենը զօրեց միայն քո հանձար»:

Երբ 1863 թ. սկզբում ներկայացնում էին «Ար- Սունդ-
շակ Բ» և «Դալալ-Ղազօ», Սունդուկեանը թատրո- գրական
նումն էր: Նրան դիւր է գալիս կատակերգութիւնը, գործու-
որի մէջ դուրս էր բերւած Թիֆլիսի կեանքից պատ-
կեր. դիւր է գալիս և Սուքիասեանի խաղը Ղազօի
դերում: Դա առիթ է տալիս Սունդուկեանին զրելու
իր անդրանիկ կատակերգ. «Գիշերւայ սաբրը խէր է»
վերնազրով, որի ներկայացնումը տեղի ունեցաւ 1863
թ. հոկտեմբ. 23-ին: Դրանից յետոյ նա զրեց «Խա-
թաբալան», երկու գործ., և ներկայացնումը կայացաւ
1866 թ. ազրիլին: Պիէսի մէջ առաջին անգամ փայ-
լել է Ամերիկեանի ուժեղ տաղանդը Գարասիմ Եա-
կուլիչի գերում: Երկար տարիներից յետոյ Սունդու-
կեանն ընդարձակեց պիէսը, այնպէս որ իր վերջնա-
կանամբ ձեռվ «Խաթաբալան» ուներ չորս գործ. և
վեց պատկեր, և այդ ձեռվ ներկայացւեց 1879 թ.
հոկտ. 22-ին: Այդ կօմեդիայի շարժառիթը, Զմշկեանի

ասելով, եղել է հետևեալլը։ Սունդուկեանի գրասեզա-
նի գիմաց կախւած է եղել մի պատկեր։ Պատկերը
ներկայացնում էր մի տան ֆասադ, որի պատուհա-
նից երեսում էր մի փոքրիկ, սիրուն աղջկայ զյուխ՝
ժպիտը շրթունքին։ Պատուհանի տակ նկարւած էր
մի տակառ, որի վրայ կանգնած էր մի երիտասարդ
և առաջարկում էր սիրուն աղջկան ընդունել իր ձեռ-
քի ծաղկափունջը։

Սունդուկեանի հետևեալ կատակերգութիւնն էր
«Օսկան Պետրովիչը էրազումը», որ ներկայացւեց 1866
թ.։ Յետոյ նա գրեց «Մախլաս» վերնագրով կօմե-
դիա երեք գործ., որ այդ ձեռվ ներկայացւեց մի
քանի անգամ, մինչև որ ստացաւ իր վերջնական ձեռ,
այսինքն գարձաւ հինգ գործ. կօմեդիա և նոր անուն
ընդունեց—«Էլի մէկ զոհ»։ Նոր ձեռվ առաջին ան-
գամ ներկայացւեց 1870 թ. մայիսի 4-ին։ Զմշկեանի
ասելով, հարուստ վաճառական Սարգսի գերում «Ա-
մերիկեանը հասաւ իր ապօգէին աննման խաղով»։
Սունդուկեանն այն հեղինակներից չէ, որոնք բաւա-
կանանում են իրանց ձեռք բերած մտաւոր պաշա-
րով և վայելած փառքով։ Նա աշխատում էր աւելի
կատարելագործւել և իր տաղանդն հասցնել իր պատ-
շաճ բարձրութեան։ Կարծես նա զգում էր, որ գեռ
չէ տւել իր զյուխ-գործոցը, և անձնատուր է լինում
լուրջ ընթերցանութեան։ Կարդում, ուսումնասիրում
է եւրօպական և ոռւսաց գրամատուրգների երկերը՝
Շեքսպիրի, Շիլբերի, Գրիբոեդովի, Սկրիբի։ Սունդու-
կեանի տաղանդն հասաւ իր գաղաթնակէտին այն ժա-
մանակ, երբ նա գրեց իր զյուխ-գործոցը՝ աննման
«Պէպօն»։

Հետաքրքրական է այդ նշանաւոր կօմեդիայի
շարժառիթը։ Ներկայացնում էին Փուղինեանի կա-

տակերգութիւնը՝ «Վուր տրաքւիս, պիտի պասկւիս»։
Զմշկեանը Շամիրի գերում շատ զիւր է գալիս Սուն-
դուկեանին, և նրա մէջ ծագում է այսպիսի միտք.
Բնչպէս կ'վարւէր Շամիրի նման մարդը այնպիսի
դէպքում, երբ նրան մեր հարուստներից մէկը փող
պարտ լինէր և չ'կամենար ճանաչել իր պարտքը։
«Պէպօն» հիմքը գրւեցաւ, ասում է Սունդուկեանը,
մնայածը ինքն ըստ ինքեան եկաւ։ Միենոյն ժամա-
նակ հեղինակը բերում է իր սեփական անձի վրայ
փորձած մի դէպք. մի հարուստ մարդ ուրացել էր
իր տւած խօսքը։ Բացի զրանից, Թիֆլիսի իրակա-
նութիւնն էլ շատ նիւթեր էր տալիս Սունդուկեանին։
Ինչպէս նա ասում է, շատ համակրելի գծեր է նկա-
տել, օրինակ՝ մեծահոգութիւն, վեհանձնութիւն՝ ժո-
ղովրդի այն խաւի մէջ, որին պատկանող մարդկանց
անւանում են «պաժարնի», «Լօթի», «կինտօ», որոնք,
սակայն, իրանց մի քանի յատկութիւններով հարուստ
դասակարգի մարդկանցից բարձր են կանգնած։

1870 թ. սկզբում Սունդուկեանը սկսում է թե-
լազրել «Պէպօն», և Զմշկեանը գրում է։ Ամառը տե-
ղափոխում են կրծանիս, որ Թիֆլիսի արւարձան-
ներից մէկն է, և այսուեղ աւարտում է երկելի կօմե-
դիան։

«Պէպօն» ամենաբարձր ոգեսրութեան և երջա-
նիկ օրերի ծնունդ է։ Նա ստեղծւել է քաղաքի ժխո-
րից հեռու, ծառերով հովանաւորւած տան բարձր
պատշպամբում, կանաչագարդ լերան և ձորում փլու-
ած այգիների առաջ, մաքուր և անապական օդի
մէջ։

Հեղինակը ահապին աշխատանք էր գործ դնում
«Պէպօն» մշակութեան վրայ։ Մօլիերի նման, իր բա-
րիքը վերցնում էր ամեն աեղից։ Բարեկամնիրի խոր-

հուրդները և կեանքից ստացած նոր տպաւորութիւնները գալիս էին լրացնելու այն ամենը, ինչ որ դեռ ևս թերի և անկատար էր: Զարմանալի խնամքով էր նա մշակում իր աշխատութիւնը: Իւրաքանչիւր բառի և դարձւածի վրայ կանգ էր առնում, մտածում, փոխում, նորից գրում:

«Պէտօի» ներկայացումը տեղի ունեցաւ 1871 թ. ապրիլի 30-ին մեծ յաջողութեամբ:

«Մշակը» և «Մեղու Հայաստանին» ըստ արժանույն գնահատեցին Սունդուկեանի նոր աշխատութիւնը: Զմշկեանի ասելով, «Պէտօն» այնպիսի ժողովը դականութիւն ստացաւ, որ նոյն իսկ վրացիք «Պէտօյով» կենդանացրին իրանց թատրոնը, որ վաղուց դադարել էր գոյութիւն ունենալուց: «Պէտօն» յետոյ թարգմանւեց ոուսերէն և ներկայացւեց ոուսաց բեմի վրայ:

Նոյն տարւայ վերջում Սունդուկեանը գրեց «Քանդւած օջախը», որի ներկայացումը տեղի ունեցաւ 1873 թ. ապրիլին: Այսուհետեւ նա տւեց մի խոշոր գործ «Ամուսիններ» վերնագրով, որը ներկայացւեց 1890 թ. յունւարի 29-ին:

Դրանից յետոյ անցան երկար տարիներ, և Սունդուկեանը ոչինչ չ'գրեց: Միայն խորին ծերութեան մէջ Սունդուկեանը, նորից եռանդ ստանալով, գրեց «Բաղնիսի բողչան» խորագրով կատակերգութիւնը, «Եւ այլն», թարգմանեց Մօլիերի «Ժօրժ Դանդէն»: 1909 թ. աշնան սեզօնին ներկայացւեց Սունդուկեանի նոր կօմեդիան հինգ գործ. «Սէր և ազատութիւն» խորագրով:

Սունդուկեանի կօմեդիաները.

Մի կողմ թողնելով առայժմ մանր կատակերգութիւնները, մենք կ'դիմենք խոշոր կօմեդիաների քննութեան, և կ'սկսենք այն կարգով, ինչպէս զրել է հեղինակը:

«Խաթարալայի» հիմքում դրւած է հետեւալ գէպը: Հարուստ Զամբախովի տան մօտ երիտասարդ Մասիսեանը պատահում է մի գեղեցիկ կնոջ, որը նրա ծանօթ եսայու ամուսինն էր. սակայն ինքը չը ճանաչելով նրան՝ զրեթէ սիրահարւում է և այդ մասին յայտնում է եսայուն և խնդրում նրա աջակցութիւնը: Վերջինս, կարծելով, որ Մասիսեանի տեսածը Զամբախովի աղջիկն է, խոստանում է գործը գըլուխ բերել: Եսայու և միջնորդ Խամփերու ջանքերով փոխադարձ համաձայնութիւնը կայանում է, և Զամբախովի տանը պատրաստութիւններ են տեսնում փեսացուին ընդունելու: Մասիսեանը կանգնած է փառահեղ դահլիճում և առաջին անգամ ծանօթանում է հարսնացուի հետ: Բայց ո՞հ զարմանք. գանրա տեսած օրիորդը չէ: Նրա առաջ կանգնած է մի տգեղ, բայց զարդարւած և երեսը շպարած աղջիկ: Նա իսկոյն հասկանում է, որ ինքը խաբւած է, և իրան թակարդ են ձգել: Հոգու խորքից վրդովւած՝ նա սկսում է յանդիմանել հօրը և ճակատին զարկել նրա խայտառակ արարքը և ապա, դիմելով օրիորդին և իր ցաւակցութիւնն յայտնելով, հեռանում է: «Խաթարալայի» մէջ գուրս են բերւած մի շարք յաջող տիպեր, որոնց մէջ աչքի է ընկնում նախ և աշամբառաջ Գարասիմ Եսկուլիչ Զամբախովը: Նրա բնաւու խով

ըռութիւնը, աշխարհայեացքը, ամբողջ ներքին աշխարհը կրում է իր վրայ ըրջապատող միջավայրի խոր դրոշմբ: Նա տեսել է չորս կողմում գոյութեան կոփւ, ինչպէս կենդանիների մէջ, տեսել է փողի պաշտամունք, խարեբայութիւն, բայց բարոյական սկզբունք ոչ մէկի մօտ: Եւ ահա կեանքի բազմաթիւ փորձերից նա ստեղծել է իր համար որոշ նշանաբան: Դա է ուժեղի մեծարնքը: Այս աշխարհում, Զամբախովի փիլիսօփայութեամբ, ով ում յաղթում է, զօշաղը նա է, խելօքը նա է: Դիփի մէկ մէկու ուտելու են ըստեղծւած: Անասունը ուտում է անասունին, թռչունը թռչունին, մարդն էլ ուտում է թէ թռչունին, թէ անասունին: Ի՞նչ արած. ապրել է պէտք: Սարդը բնչով է վատ մարդուց, որ ապրելու համար ծըծում է ճանձի արիւնը: Գոյութեան կոփւն է, նրա կարծիքով, որ մարդուն դարձնում է խարեբայ և գող: Այդ հիման վրայ նա արդարացնում է գողութիւնը և խարեբայութիւնը: Եթէ խեղճ մարդը հաց գողանայ ուտելու, մեղք չէ: Եթէ մեր քաղաքումը մէկը միւսին չ'խարեն, մի օր կարսող է մարդ ապրել: Այս քաղաքում «գրաւութիւնով» բան չի՞ չինւի, եթէ երկնքիցը հրեշտակ էլ վեր գայ: Ահա Գարտսիմ եակուիչի փիլիսօփայութիւնը: Այդ հիման վրայ նա իրան բոլորովին վատ մարդ չէ համարում: «Աստւած գիտենայ, փիս մարդ չեմ: Դու լաւ գիտես, որ աղքատին էլ եմ փող տալիս, խեղճին էլ եմ օգնում, պաս էլ չեմ կոտրում, ժամից էլ յետ չեմ մնում օրում»: Նա իրան ամենախին մեղաւոր չէ համարում, որ ստիպւած է իր աղջկան մարդու տալ խարեական միջոցով. «Ճօ, հիմի ես բնչով եմ մեղաւոր, որ աղջկու տղեղ է, բայց հալալ որ շարժւում եմ, ոչ որ չէ ուղում, ինչ անեմ»: Լինելով ոյժի և խարեբայութեան

կողմնակից, Զամբախովը միենոյն ժամանակ սիրող հայր է և աղջկայ համար է յանձն առնում այն խարդախութիւնը: Նրա բոլոր հոգաբ—Մարգրտի երջանկութիւնն է: Նա վախենում է, որ աղջիկը, տղեղութեան պատճառով, կ'մնայ տանը և կ'պառաւի: Իսկ դա մեծ դժբախտութիւն էր համարւում թէ ծնողների և թէ աղջկայ համար:

Եսային համեմատաբար տւելի համակրելի է: Եսայի. Նա օգնում է Զամբախովին նրա վատթար արարքի մէջ ոչ չար մտքով, այլ միամտութիւնից: Իսկ երբ տեսնում է, որ նա իրան էլ խարել է, սաստիկ բարկանում է: Եսային հին սերնդի մարդ է. «Վաղուցւայ մարդիկ աւելի խելօք ու արդար էին». այժմ «անօրէնութիւնն ու խարելը շատացաւ»: Նա հասկանում է լուսաւորութեան միայն արտաքին կողմը, օրինակ, մօգան: Մօգաների վնասը նա վերագրում է լուսաւորութեան. «Մինչև հիմա մի ճրագու մոմով եօլա էի գնում, ախալէր. հիմի գիշերով մի գրւանքա կարտոֆիլի մոմն էլ հերիք չէ անում: Էս էլ քեզ լուսաւորութիւն»: Եսային ապագայ Օսէփի նախատիպն է:

Մասիսեանը, ընդհակառակ, պատկանում է նոր Մասիսեան սերնդին, բայց ամբողջացրած տիպ չէ: Մենք նրան ճանաչում ենք գլխաւորապէս սիրային ինդրում: Նրա կրթութեան աստիճանը, նրա պարագմունքը, աշխարհայեացքը և իդէալները մեզ անյայտ են: Այսքանա գիտենք, որ Գէորգ Մասիսեանը զուրկ չէ մի քանի համակրելի գծերից: Զգայուն, ազնիւ երիտասարդ է, շրջապատող աղականութիւնը դայրացնում է նրան: Բայց նա դեռ ևս անփորձ է. մի զեղեցիկ կին տեսնելով, իսկոյն հրապուրւում է և սկսում է

մտածել ամուսնանալու մասին։ Բայց նա խելքը գերխին երիտասարդ է։ ցանկանում է նախ ծանօթանալ օրիորդի հետ և ապա միայն խօսք տալ։ Ամուսնութիւնը նրա համար կեանքի խնդիր է։ Ամուսնական խնդրում նա չէ զեկավարում նիւթական հաշիւներով, այլ ցանկանում է ունենալ միայն գեղեցիկ և բարեկիբն ամուսին։ Վերջին գործողութեան մէջ Մասիսեանը ցոյց է տալիս իր երիտասարդական աղնիւ խանդը, երբ տեսնելով՝ թէ Զամբախովը ինչպիսի ոստայն է պատրաստել փեսայ բռնելու համար և որ աստիճանի ստորութեան է հասցըել իր խեղճ աղջրկան, նա բռնկում, կրակ ու բոց է գառնում։ Նրա ազնիւ բարկութեան առաջ Գարասիմ Եակուլիչը բարոյապէս ոչնչանում է։

Կանանց դէմքերի մէջ իրանց բնական նկարագրութեամբ աչքի են ընկնում երկուսը՝ Մարգրիտը և Խաչիկերին։

Մարգրիտ Ընաւանեկան նեղ շրջանում մեծացած՝ Մարգրիտը բոլորովին զուրկ է ինքնուրոյնութիւնից։ Բնութիւնը զրկել է նրան գեղեցկութիւնից, որ կանանց ամենամեծ զարդն է, և այդ գիտակցութիւնը նրան բոլորովին ընկճել և դարձրել է մի թշւառ արարած։ Մարգրիտը իր բախտի տէրը չէ։ Նրա ամբողջ ապագան տնօրինում են ծնողները։ Իր հարազատ գերդաստանում նա ձայն չունի։ Նա գիտէ, որ մի խայտառակ գործ է կատարում, որ ուզում են մի երիտասարդի խաթել։ Նա հասկանում է, որ Մասիսեանը անկարող է իրան սիրել, բայց և այնպէս ոչ կամքունի, ոչ ոյժ, որպէս զի զիմաղոք անարդ վաճառքին։ Նա ուրախ կ'լինէր չ'ամուսնանալ, նա կուզէր մտնել կուսանոց, նրա համար մահը հազար անգամ աւելի լաւ է, բայց ինչ անէ, որ լեզուն կարճ է,

հօրից դողում է։ Եւ ահա ինչու նա թոյլ է տալիս, որ իրան տիկնիկի պէս զարդարեն, շպարեն և կրոնկներով հասակը բարձրացնեն։ Թէկ Մարգրիտը մեծ ուսում չունի, բայց բնական խելք ունի, հասկանում է, որ լաւ մարդը առանց ճանաչելու աղջիկ չի ուզգի։ «Ասում են, լաւ տղայ է. ամա խելքս չէ կըտրում։ լաւը որ լինի, առանց անտղելու աղջիկ կուզէ։ Երկի, փողի համար է ուզում»։

60-ական թւականների կատակերգութեան մէջ Խամֆերի միջնորդը կամ մօցիքուլը մեծ դեր էր կատարում և ամենայաջող տիպն էր։ Միջնորդ կարող էր լինել կամ տղամարդ կամ կին։ «Խաթաբալայի» մէջ միջնորդի դեր կատարում է Խամֆերին։ Մի փողապաշտ կին, վերին աստիճանի համարձակ և յանդուզն, տղամարդկանց ներկայութեամբ ոչնչից չ'քաշւող, սրախօս, լեզւանի և ինքնասած—ահա Խամֆերին։ Ոչ ոք չէ կարող նրա պէս գովել վատը և պախարակել լաւը, նայած թէ իր օգուան ինչ է թելազրում։ 50 բուբլու համար նա պատրաստ է անբախտացնել Մասիսեանին, որը նրա քրոջ որդին էր։ Թէ ինչպիսի քամելէոն է Խամֆերին, այդ երեսում է հետեւալից։ Երբ իմանում է, որ Մասիսեանի հաւանածը Զամբախովի աղջիկն է, նա սկսում է սեացնել Մարգրիտին, բայց Եսայու մի հատ ակնարկից նա հասկանում է բանի էութիւնը, որից յետոյ իր լեզուն փոխում է և ըսկում է խօսել հակառակը։

«Խաթաբալայն» շատ աշխոյժ պիէս է և բեմի վրայ լաւ տպաւորութիւն է թողնում։ Մանաւանդ մի տեսարան առանձնապէս գրաւիչ է և բանաւուեղծական՝ այն տեղը, երբ պատուհանի մօտ նստած Նատալիան անուշ երգում է, իսկ Մասիսեանը ծածուկ ականջ է դնում։

«Խաթաբալայի» միւս արժանաւորութիւնը այն մի շաբք գեղարքեստական տիպերն են, որոնց վրայ Սունդուկեանը դրել է իր ուժեղ տաղանդի դրոշմը: Բայց իր ներքին իմաստով, իր շօշափած խնդիրներով «Խաթաբալան» այն նշանակութիւնը չունի, ինչ որ նոյն իսկ «Քանդած օջախը»: Այն գէպքը, որի շուրջը պտաւում են կօմեդիայի գործողութիւնները, մեծ հասրակական չարեք չէ պարունակում իր մէջ և աւելի բացառիկ երևոյթ է, քան սովորական:

«Խաթաբալայի» մէջ նկատելի են Գրիքօէդովի ազդեցութեան հետքեր: Երբ Եսային և Մասիսեանը խօսում են Թիֆլիսի մասին, որ նա շատ փոխւել է և լուսաւոր քաղաքների է նմանում, վերջինը նկատում է. «Այսպիսի էլ ժողովուրդ կ'լինի աշխարհիս երեսին. հագուստը նոր, շինութիւնները նոր, իսկ հակացողութիւնները էլի էն է, էլի էն, էլի էն»: «Խելից պատուհասի» մէջ Ֆամուսովը ասում է. „Съ тѣхъ поръ дороги, тротуары, дома и все на новый ладъ“. Զացկին պատասխանում է. „Дома новы, но предразсудки стары“.

Էլի մէկ Այսեղ Սունդուկեանը միմէանց հանդէպ կանգունում է երկու սերունդներ: Նոր սերնդի ներկայացուցիչներն են՝ Միքայէլ, Անանի, իսկ նոր ներկայացուցիչները՝ հարուստ վաճառականներ՝ Սարգիս, Բրիլիանտով և այլն: Այդ երկու սերունդների հայեցքների մէջ կայ մեծ տարբերութիւն, և այդ հողի վրայ տեղի է ունենում ընդհարում, որից յաղթանակով գուրս է գալիս նին սերունդը:

Եւ ահա ինչպէս է պատահում այդ:

Մի համալսարանական երիտասարդ (Միքայէլ) և բարեկիրթ օրիորդ (Անանի) փոխադաբար սիրում են իրար և մտածում են ամուսնակալ: Սակայն ե-

րիտասարդի հայրը (Սարգիս), որ հարուստ վաճառական է, հակառակ է նրանց ամուսնութեան. նա իր որդու համար աչքի առաջ ունի հարուստ Բրիլիանտովի աղջկան: Միքայէլի ճանապարհը փակելու համար, նա գնում է Անանու ծնողների մօտ և համոզում է, որ իրանց աղջկան տան Բրիլիանտովի որդուն: Միքայէլը, երբ իմանում է հօր վատթար արարքը, զայրացած հեռանում է հայրական տանից: Միենոյն ժամանակ առաջարկում է Անանուն պսակւել կամ փախչել իր հետ: Սակայն օրիորդը այնքան ոյժ չունի, որ գնայ սիրածի ետևից, և հնագանդում է ծնողներին:

Միքայէլը բարձրագոյն ուսման տէր և լուսամիտ Միքայէլ երիտասարդ է, անկեղծ և սիրոյ մէջ հաստատուն: Ատելով ատում է փողային հաշիւները այնպիսի նուրբ խնդրում, որպիսին սէրն է: Հարստութիւնը և հարուստ օժիալ նրան չեն հետաքրքրում: Հօր սպառնալիքը՝ զրկել ժառանգութիւնից՝ նրան ամենախն չէ վշտացնում, որովհետև նա կարող է ապրել իր սեփական աշխատանքով: Միքայէլը անհամեմատ բարձր է կանգնած նին սերնդի մտաւոր մակերևոյթից, բայց չունի զօրեղ կամք և հոգեկան ոյժ, որ կարողանայ հեռացնել խոչնդուները և իր սէրը պսակել յաղթանակով:

Անանին ստացել է որոշ կրթութիւն, լուրջ, մըտախոն աղջիկ է, գիտէ նւազել, սիրում է կարդալ: Մի խօսքով, չորս պատի մէջ մեծացած աղջիկներից չէ. լինում է ժողովարանում, այնտեղ պարում է, երիտասարդների հետ ծանօթանում, խօսում, վիճում է: Բայց նա գեղ ևս չէ թօթափել իրանից նին նաև խաղաշարումները, դեռ ևս այնքան բարոյական ոյժ և կամք չունի, որ կարողանայ պաշտպանել իր կա-

նացի իրաւունքները և իր բախտի տէրը լինել։ Անանին այնքան թոյլ կամք ունի, որ մօր արտասուքների առաջ բոլորովին ընկճռում է։ Նա իր երջանկութիւնը, մինչև անգամ կեանքը զոհ է բերում իր մօր քմահաճոյքին։ Նա դեռ ևս չէ հասունացել այն աստիճան, որ կարողանայ լինել Միքայէլի նման ամուսնու կեանքի ընկերը։ Այն ժամանակի համար, երբ հայ աղջիկը նոր էր ազատւել ընտանեկան նեղ շըրջանից և նոր էր սկսել շփւել դրսի աշխարհի հետ, Անանին, իբրև իրականութիւնից վերցրած հայ օրիորդի տիպ, կարելի է համարել բնական և յաջող։ Անանիները իրանց անհատական նւաճումների մէջ մի քայլ առաջ են գնացել, և հայ օրիորդի՝ նոր տիպը այժմ դուրս է բերւած մեր նորագոյն դրամատուրգիայի մէջ։

Սարգիսը Սարգիսը փողապաշտ վաճառական է։ Փողասիրութիւնը նրա մէջ մեոցրել է ամեն մի ազնիւ զգացում, նոյն իսկ ծնողական սէրը։ Նրա ամենամեծ իդէալը փողը և հարստութիւնն է։ Որդու ամուսնութեան մէջ նա տեսնում է դարձեալ հարստանալու միջոց, և այդ նպատակին համնելու համար, նա ոչ մի բանի առաջ կանգ չէ առնում։ Նա սովոր չէ ուղիղ գործ բռնել, այլ միշտ ոլոր մոլոր ճանապարհներով է հասնում նպատակին։ Ոչ ոք չէ կարող Սարգսի նման համակերպւել բոպէին։ Նա գիտէ, երբ պէտք է խնդրել, երբ ծիծաղել, երբ սպառնալ։ Լինելով ուժեղ կամքի տէր, նա գիտէ իր խօսքը տեղ հասցնել։

Սուրաթովը—Սարգսի հակապատկերն է։ Որքան մէկը չար է, ուժեղ է, նոյնքան միւսը բարի է և կամքից զուրկ։ Սուրաթովը իր կնոջ գերին և ըստրուկն է։

Իրիլիանտովի դաւակները արտանկարւած են ուղղակի հայ իրականութիւնից, վերին աստիճանի կենդանի տիպեր են թէ քոյրը, թէ եղբայրը, պճնասէր նատօն և թեթևամիտ Վանօն։

«Էլի մէկ զոհը» բեմական տեսակէտից չունի այն յարմարութիւնները, որ ունեն միւս կօմեղիաները։ Այստեղ խօսակցութիւնները տեղ տեղ չափազանց երկար են և դանդաղեցնում են գործողութիւնը։ Սակայն մի քանի տեղեր շատ աշխոյժ են անցնը, օրինակ, այն տեսարանը, ուր Վանօն և Նատօն զուգւում, զարդարւում են, պարում, թոշկուում և կատակներ անում։

«Պէպօն» Սունդուկեանի գլուխ գործոցն է և, «Պէպօ» իբրև կենցաղպրական կօմեղիա, անզուզական է հայ թատերագրութեան մէջ։

Զինորա Պէպօն, վերադառնալով տուն, իմանում չամառօտ է, որ Արութին Զիմզիմովին պահ տւած գումարիբովանդակ, մուրհակը կորել է. մինոյն ժամանակ քրոջ նշանածը պահանջում է խոստացած օժիաը, հակառակ գէպծը ուրիշին պիտի խօսք տայ։ Պէպօն շատապում է Զիմզիմովի մօտ հօր աւանդը ստանալու նպատակով։

Իմանալով, որ մուրհակը կորած է, բացարձակ ուրանում է պարտքը, բայց, իբրև ողորմութիւն, նրան տալիս է մի չնչին զումար, որ Պէպօն արհամարհանքով զարկում է նրա երեսին։ Անպատւած վաճառականը գիմում է դատարանին, որի վճով համաձայն Պէպօն պիտի բանտարկւէր։ Սակայն հէնց միջոցին մուրհակը գտնելում է, և այդ հանգամայքը մեծ հոգս և մտատանջութիւն է պատճառում Զիմզիմովին. այդ հպարտ վաճառականին ստիպում է գնալ Պէպօի անշուք խրճիթը, զլուխը խոնարհել նրա ըստաջ և պաղատական խօսքերով հաշտութիւն հայցել։

Այժմ նա պատրաստ էր ամեն տեսակ զիջումների՝ վերադարձնել պարտքն ամբողջովին, աւելացնել դրան և մի պատկառելի գումար, յետ վերցնել գանգատը և Պէտօին ազատել պատժից: Բայց ունայն խոստումներ էին դրանք:

Պէտօն անդրդւելի էր: Նա վճռել էր իր անւանարկւած քրոջ վրէժն հանել Զիմզիմովից, և այլ ևս ոչինչ չէր կարող շարժել նրա գութը՝ ոչ մօր, ոչ քրոջ արտասուքը, ոչ ծեր Գիքօի, ոչ ընկեր Կակուլիի աղերսանքը: Պէտօն կ'զնայ բանտ, բայց յետոյ աշխարհի առաջ երևան կ'հանէ Զիմզիմովի բոլոր խայտառակութիւնը, նրա զագրելի արարքները:

Պէտօ

Սունդուկեանը մեծ խնամքով է նկարագրել Պէտօին, որը նախ և առաջ մի համեստ աշխատաւոր է և մեծ բաւականութիւն է գտնում իր ձկնորսական պարապմունքի մէջ. «Թէ մութ գիշեր է, հիանալով առում է Պէտօն, հէնց զիտենաս, աստղերը հետդ մասլահաթ են անում, ու թէ լուռ է խօմ, լուսինը զիմսիդ փարւանի պէս կանգնած է լոթին»: Պէտօն իր անձը դրել է ընտանիքի համար: Նա օրն ի բուն աշխատում է կուր գետի եզերքում, առանց ուշ դարձնելու բնութեան պատահարներին, և իր քրանաշան վաստակը բերում միացնում է մօր և քրոջ աշխատանքին: Երբ քրոջ պատիւը, փեսացուի շնորհիւ, վտանգի է ենթարկւում, Պէտօն այլ ևս հանգիստ չունի. հացը բկից կուլ չէ գնում: Ասող զատողութիւնը և խելքը նրա մէջ միացել էին ուժեղ կամքի հետ: Երբ նշանածը պահանջում է օժիալ, իրքի նրա քրոջ հետ ամուսնանալու վերջնական պայման, Պէտօն կարողանում է իրան զալել և ամենեին չէ մեղադրում նրան, որովհետեւ օժիալ խոստացել էին և պէտք էր տալ: Պէտօի գեղեցիկ յատկութիւններից

մէկն էլ մարդկային արժանապատռութեան զգացումն է, որ այնպէս զարգացած էր նրա մէջ, չնայած, որ նա պատկանում էր ժողովրդի ստորին խաւին: Զիմզիմովի տւած ողորմութիւնը նա զայրոյթով շպրտում է նրա երեսին, առանց վախենալու դրա հետևանքից, և այդ վարմունքով միենոյն ժամանակ յայտնագործում է իր ազնիւ և անվեհեր հոգին: Մի այնպիսի միջավայրում, ուր փողն ունէր իր պաշտամունքը, ուր չորս կողմում տիրում էր խարերայութիւն, Պէտօն ստեղծել է իր համար համեստ և աշխատաւոր կեանքի իդէալ և, կուելով յանուն այդ իդէալի, բարձրացնում է ոչ միայն իր անձը, այլ և այն դասակարգը, որին պատկանում էր: Հասարակ ձկնորսը դառնում է հերոս և, բարոյական յաղթանակ տանելու համար, յանձն է առնում նստել բանտ, չնայած մօր և քրոջ աղերսանքին և արցունքներին:

Սրութին Զիմզիմովը Սունդուկեանի ամենամեծ Զիմզիմով վարպետութեամբ նկարւած բացասական տիպերից մէկն է, որ սկզբից մինչև վերջ իրան մնում է հաւատարիմ: Դա հարուստ վաճառական է, քաղաքում ունի յայտնի անուն, ամենքը նրան զլուխ են տալիս, յարգում—պատւում են, բայց միենոյն ժամանակ դա այն մարդն է, որի համար, ինչպէս առում է Պէտօն, սուրբ բան չկայ աշխարհում: Զքաւոր գերգաստանի գլուխը իր երկարամեայ վաստակը, որպէս իր աղջրկայ օժիտ, պահ է տալիս այդ մարդուն: Անցնում են տարիներ, մուրհակը կորչում է, և Զիմզիմովը հրաժարւում է վերադարձնել Պէտօի հօր աւանդը, որից կախւած էր նրա աղջկայ բախտը: Աւրանալով պարագը, նա ոչ միայն խորտակում է մի անմեղ էտակի կեանքը, այլ և դրա հետ միասին դժբախտութիւն է մացնում նրա հարազատ գերդաստանի մէջ:

Բայց այդ գերդաստանը Զիմզիմովի առաջին և վերաշխն զոհը չէ անշուշտ: Առմ շնորհիւ է նա կառուցել իր շքեղ ապարանքը, ում շնորհիւ է նա զարդարել իր փառահեղ դահլիճները, ում շնորհիւ է նրա ահապին հարստութիւնը—յամենայն դէպս ոչ Զիմզիմովի հալալ աշխատանքի շնորհիւ: Մարդկային արժանապատութեան զգացումը օտար է նրա հոգուն: Զիմզիմովը, որ այնպէս բարձրից էր նայում՝ Պէտօի նըման չնշին արարածների վրայ, որ զարմանում էր, թէ ինչպէս մի «կինո» իր ներկայութեամբ յանդրգնում է նստել թանկագին բազկաթոռի վրայ, Զիմզիմովը ստորացնում է իր անձը մինչ այն աստիճան, որ իր ոտով գնում է նրա խրճիթը հաշտութիւն խընդրելու և, երբ չէ արժանանում գրան, ինչպէս ոչընշանում և հողի հետ հաւասարում է: Զիմզիմովին, ինչպէս և «Խելքից պատուհասի» հերոս ֆամուսովին, մեծ հոգս է պատճառում ոչ թէ կատարւած իրողութիւնը, ոչ թէ տգեղ արարքը, այլ այն, թէ ինչ կասեն մարդիկ. «Մարդիկ իմանան, ի՞նչ կասեն. էլ ով կ'հաւատայ ինձ... Սպահութիւնը աչքերս կապեց, էլ սև ու սպիտակ չ'ջոկեցի... Հիմի գնա, սևացն երեսդ»:

Հեղինակի հոգեբանական հմտութիւնը երևում է մի նուրբ դիտողութեան մէջ, որ վերաբերում է Զիմզիմովի բնաւորութեան մի գծին: Զիմզիմովը ինքը հասակն առած մարդ է, բայց նրա ամուսինը երիտասարդ է և նրա երկրորդ կինը: Այդ հանգամանքի շնորհիւ, հարուստ վաճառական Զիմզիմովը, այդ սարսափելի կեղեքիչը, որ կեանքում Պէտօի նման բազմաթիւ խեղճերի դժբախտութեան պատճառ է եղել, դարձել է իր ջահէլ կնոջ ձեռքին գերի և նրա հլու կամակատարը:

Նոյնքան յաջող է գուրս բերւած Գիքօն, այդ գիքօնաշալի ծերունին, որ հեզ և խոնարհ է, ինչպէս գառ: Կարծես շրջապատի ապականութիւնից մի ցայտ անգամ չէ զիպել նրան: Գիքօն վերին աստիճանի սառնաւիրտ, անտարբեր փիլիսօփայի ապաւորութիւնն է գործում: Նա մի հայ խիկար է, որ իր իմաստութիւնը ձեռք է բերել կեանքի բազմազան փորձերից: Զարմանալի անվրդով բնաւորութիւն. իր կեանքում անշուշտ ոչ որի մի ցուրա խօսք ասած չի լինի: Որքան հաւատարիմ ընկեր պիտի լինէր Գիքօն, որ Պէտօի հայրը իր պահ տւած գումարի մուրհակը հաւատար ոչ թէ իր կնոջը կամ որդուն, այլ Գիքօն: Եւ ինչպիսի արթուն խղձի տէր է այդ ծերունին: Երբ մուրհակը կորչում է, ինչեր չէ անում խեղճը, որ զըտնւի. «Գարի ասես, ես եմ գցել տւել, էֆէմերդի ասես, ես եմ բաց անել տւել, չոքած եկեղեցու բոլորն ասես, ես եմ աղօթք արել»:

Գիքօի պարտաճանաչութիւնը հասնում է այն աստիճանի, որ նա իր խիզճը հանգստացնելու համար, զրաւ է զնում իր սեփական տունը, որպէս զի ստացած փողով վճարէ Պէտօի պարտքը: Գիքօն միենոյն ժամանակ բարի ծիծաղ է շարժում իր մանկական միամտութեամբ, դանդաղկոտութեամբ և ուրոյն ձևերով:

Մինչդեռ հեղինակը մի փոքր իդէալացրել է կակուի Պէտօին, կակուլին տիպիկ ներկայացուցիչ է իր դասակարգի: Նա ևս Պէտօի նման ընկերասէր է, ընկերի համար կեանքը չի խնայի: Պէտօի նման ուրախ, սրամիա և համարձակախօս է: Բայց նա չունի Պէտօի ազնւութիւնը: Նրա մէջ գերակշռում է կոպիտ, Փիզիքական ոյժը: Նա աւելի գործնական է և սիրում է կանխիկը. ահա ինչու այնպիսի յամառութեամբ

պահանջում՝ էր, որ Պէտօն Զիմզիմովի հետ հաշտուի և ձեռքից չ'տայ աւելորդ գումարը, որ նա առաջարկում էր: Կակուլին այսպիսի անձերից է, որոնք սիրում են դատաստանը: Կտրել իրանց ձեռքով: Թշնամու հետ դրանք ուրիշ զէնք չունեն, եթէ ոչ բռունցքը, ծաղը և կծու հեղնութիւնը: «Աստւած գիտենայ, Պէտօ, բացի դնաքելուց, ուրիշ ճար չ'կայ», ասում է նա Զիմզիմովի մասին:

Կանացի դէմքերը նոյնպէս յաջող են: Աղքատութէմքեր թիւնից բարձրանալով և հարուստ տուն ընկնելով, սնափառ, չտես էփէմիան իր բռան մէջն է պահում թէ Զիմզիմովին և թէ ամբողջ տունը: Նա շատ լաւ հասկանում է իր երիտասարդ գեղեցկութեան ոյժը, որով նա իր ամուսնուն կատարել է տալիս իր իւրաքանչիւր քմահաճոյքը: Օրինակ, կանչւած հիւրերի առաջ պարծենալու համար, նա պահանջում է, որ ամուսինը երկու նոր հայելի գնէ՝ զոյգը 45 թուման:

Պէտօի մայր Շուշանը, ընդհակառակը, ապրում և շնչում է միայն իր զաւակների սիրով. միշտ անհանգիստ է Պէտօի համար, ինչու ուշացաւ, չ'լինի խեղդւեց կուրում: Աղքատութեան բովից անցած, նա չէ նախանձում հարուստներին. փողը նրա համար մեծ արժէք չունի: Աղջկայ առողջութիւնը և հանգիստը աւելի թանկ է նրա համար, քան թէ այն վարձը, որ նա ստանում է իր պատէրների համար: Կէկէլը չորս պատի մէջ մեծացած, անհատականութիւնից բոլորովին զուրկ, կերած-կորած հայ աղջիկ է, որի բախտը անօրինում են ծնողները կամ մեծ եղբայրը:

«Պէտօի» արժանաւորութիւններից մէկն է նախ արժանիքը և առաջ նրա հետաքրքրական սիւժեար. նկարագրած գէպը ներկայանում է ոչ որպէս եղակի երեսյթ,

այլ իբրև չարիք, որ սովորական է հայի կեանքում: Կօմեգիայի արժանիքը կազմում են և այն մի շարք յաջող գեղարւեստական ախպերը, որոնց մի ծայրում կանգնած է Պէտօն, իսկ միւս ծայրում Արութին աղան: «Պէտօն» իր հիւտւածքով ներկայացնում է մի գեղարւեստական ամբողջութիւնը, որի առանձին մասերը, այն է՝ երեք գործողութիւնները սերտ կապւած են իրար հետ և բիսում են մէկը միւսից բնական ընթացքով: Բնական է նոյնպէս գործողութեան հանգոյցը (մուրհակի կորուստը), նրա զարգացման դագաթնակէտը (Պէտօի ընդհարումը Զիմզիմովի հետ) և կատաստրօֆը (Պէտօի բարոյական յաղթանակը):

Բացի ընդհանուր արժանաւորութիւններից, «Պէտօն» ունի և մասնաւոր գեղեցկութիւններ, օրինակ, Պէտօի հրաշալի մենախօսութիւնը՝ առաջին գործողութեան վերջում, երբ նա պատրաստում է գնալ Զիմզիմովի մօտ հօր աւանդը ստանալու, այն մենաշխօսութիւնը, որ սկսում է հետեւել խօսքերով. «Գնա, Պէտօ, գետինը լիզիքր...» Ալդպիսի գեղեցիկ կտորներ ցըւած են ամբողջ գրւածքի մէջ: «Պէտօն» նշանաւոր է և իր լեզուվ, որը թիֆլիսեցոց բարձր որն է և պարունակում է իր մէջ նրա բոլոր սրամատութիւնը, հեղնանքը և բազմաթիւ նուրբ դարձւածները:

Սունդուկեանի բոլոր պիէմների մէջ ամենամեծ ժողովրդականութիւն ստացաւ «Պէտօն»: 1871 թվից սկսած նա անթիւ անհամար անգամ ներկայացւել է թէ թիֆլիսի և թէ գաւառական թատրոններում, և դա միակն է, որ արժանացաւ երեսնամեայ յորելեանի (1901):

«Պէտօից» յետոյ Սունդուկեանի տաղանդը քառակաց իջնել իր բարձրութիւնից, սակայն նա մի ան-

գամ ևս պայծառ փայլեց, որի արդիւնքը եղաւ «Քանդած օջախը»:

«Քանդած օջախի» մէջ Սունդուկեանը հանդէս է բերում նոր չարիք, որը նոյնպէս կործանիչ հետևանքներ էր ունենում ընտանիքների համար: Դա ուրիշ բան չէր, եթէ ոչ «մօգա» (նորաձեռութիւն): Ինչպէս յայտնի է, հարուստ դասակարգը սեփականում է քաղաքակրթութեան ամենից առաջ արտաքին կողմը՝ տան սարք ու կարգ, հանդերձեղէն, պարանդէմներ և այն: Նորասիրութիւնից առաջ է գալիս շուայլութիւն: Մօգայի իշխանութեանն ամենից շատ ենթարկում էր կանացի սեռը, իսկ տուժում էր տան գլուխը, աշխատող ձեռքը, և այդ հոգի վրայ ծագում էին ընտանեկան դրամաներ:

Մի այդպիսի ընտանեկան դրամա տեղի է ունենում «Քանդած օջախի» մէջ, ուր մենք ականատես ենք լինում մի ամբողջ ընտանիքի կործանման:

Ահա պիէսի համառօտ բովանդակութիւնը: Կենակութիւնը տրոնական անձը մի պատւաւոր վաճառական է, անունը Օսէփի, որը շատ դժբախտ է իր ընտանիքում, չնորհիւ ամուսնու և աղջկայ շուայլ բնաւորութեան: Նրա աղջկայ նատօի ձեռքը ինդրում է մի աստիճանաւոր, բայց մինոյն ժամանակ մեծ օժիտ է պահանջում: Օսէփը թէն գժւարանում էր այդքան մեծ գումար վճարել փեսացուին, բայց նա յոյս ունէր մի կերպ նրան գոհացնել: Սակայն նրան խանգարում էր մի վատթար արարած: Դա իր փուճութեամբ յայտնի վաճառական վասիլ Մատվէիչն էր, նախկին Փասան: Օսէփը դրան պարտ էր մի պատկառելի գումար: Բանը նրանումն է, որ Օսէփի պարտատէրը նոյնպէս հասած աղջիկ ունէր և մտադիր էր տալ նրան չինոմնիկ Մարմարովին, և ահա ինչու, Օսէփի

աղջկայ նշանադրութիւնը խանգարելու համար, նա դիմում է դատարանի: Օսէփի տանը նշանադրութեան առիթով հրաւիրւած էին բազմաթիւ հիւրեր և ուրախ ժամանակ էին անցկացնում: Հէնց այդ միջոցին երևում է Բարսեղը ոստիկանի հետ և հրամայում է վեր գրել բոլոր կայքը: Օսէփի տունը քանդում է, հիւրերը շւարած են, փեսացուն լկտիաբար հրաժարւում է նշանածից:

Բացասական տիպերի մէջ Օսէփը բացառութիւն Օսէփի կազմում: Նա ազնիւ, բարեխիղճ մարդ է, զգում է Բարսեղի նման վաճառականներից: Թէն իր հասկացողութիւններով պատկանում է հին սերնդին և ափսոսանքով է յիշում «վաղուցայ ժամանակը», բայց իր բարոյականութեամբ անհամեմատ աւելի բարձր է կանգնած Մարմարովի նման երիտասարդներից: Օսէփը աշխարհ տեսած մարդ է, Եւրօպա այցելած, գիտէ զանազանել իսկական լուսաւորութիւնը կեղծից: Շոայլ և անկիրթ հայ կանաց նա հակազրում է Եւրօպայի օրինակելի տանտիկիններին և ամուսիններին: Օսէփը բարի է, բայց թոյլ կամքի տէր, ուստի և անզօր է չափաւորելու կնոջ պահանջները: Նրա յանդիմանութիւնը, քարոզը մնում են ձայն բարբառոյ յանապատի: Նա կին է բերել որ տունը կառավարէ և օջախը չէն պահէ, բայց կինը քանդում է տունը, հանգցնում է օջախը: Աղջիկը, որ նրա միխթարութիւնը պիտի լինէր, շոայլասէր վարքով յետ չէր մնում իր մօրից: Մի այսպիսի ընտանիքում, ուր մարդիկ իրար չեն հասկանում, Օսէփը կորցնում է իր գլուխը և համսում է ծայրայեղ յուսահատութեան, որի վախճանը յաճախ լինում է ողբերգական:

Փարսիղը Օսէփի հակապատկերն է: Խարդախ և Փարսիղ

խաբեբայ վաճառականի տիպ է: Նա բարձրացել է ամենաստոր աստիճանից: Առաջ նրան Փասօ էին առում, տեղից վեր կացողը գլխին խփում էր, բայց մի փոքր գումար ձեռք բերելով, գարձաւ աղա Փարսիդ կամ Վասիլ Մատէիչ: Նրա կեանքի նշանաբանն է՝ «ով չուստ, նա կուշտ»: Նրա կարծիքով, աշխարհը մեղքի կարաս է: «ով շերէփը ձեռին մէկին գէսը կը բոթէ, միւսին գէսը ու շատ բաժինը ինքը կ'փախցնէ, զօշզը նա է, անունն ուղարքիւը նրանն է»: Նրա անբարոյականացնող ազգեցութիւնը տարածում է նաև խանութի ծառայողների վրայ, որոց նա սովորեցնում է մարդկանց խաբելու բոլոր նրբութիւնները: Փարսիդը մի չար և վրէժինդիր արարած է: Նա առիթ էր վնարում Օսէփին վնասելու. հէսց որ ներկայանում է, նրան կործանում է իր ամբողջ ընտանիքով և, որպէս չարախնդաց հոգի, հրճւդում է նրա սնանկութեամբ:

Մարմարով Մարմարով թէն երիտասարդ է, բայց ոչինչ երիտասարդական չ'կայ նրան մէջ: Դա մի չոր, կոշտ ու կոպիտ սիրտ է, բոլորովին օտար մաքուր և ազնիւ զգացումների: Նրա սէրը նիւթական հաշիւ է, նրա ամուսնութիւնը մի առևտուր: Իր հոգու բոլոր գարշելիութիւնը նա մերկացնում է այն բոպէին, երբ տեսնելով իր նշանած օրիորդի հօրը յետին յուսահատութեան մէջ, ցինիկաբար սկսում է պահանջել խոստացած օժիտը և, չստանալով, հրաժարւում է այն օրիորդից, որին քիչ առաջ այնպէս ջերմածերմ համբուրում էր:

Կանացի Օսէփի ամուսինը՝ Սալօմէն յիշեցնում է Զիմտիպեր, զիմովի կնոջ էփէմիային. Նրա պէս շռայլ և նորափրութեան գերի է: Աւելի հետաքրքրական է, իբրև պճնասէր օրիորդի տիպ, Նատօն, Օսէփի դուստրը:

Նա ևս, իր մօր նման, մօդայի սիրահար է. ընկերունիներից յետ չ'մնալու համար, ստիպում է գնել դաշնամուր, փողեր է շռայլում նօտաների վրայ, մինչդեռ կարգին նւագել չ'գիտէ: Ուսումը մազի չափ օգուտ չէ աւել նրան: Նա մի անզարգացած, թեթեւամիտ աղջիկ է, միկնոյն ժամանակ արժանապատւութեան զգացումից բոլորովին զուրկ. իմանալով հանդերձ, որ Մարմարով իրան ուզում է փողի համար, ամենեին իր ինքնասիրութիւնը վիրաւորւած չէ զգում:

Միւս անձանց մէջ աչքի է ընկնում Գիժ-Մօզին, որը, թէև խենթի հոչակ ունի, բայց խկապէս համարձակ, յանդուգն, պակասութիւնները ճակատի խփող մէկն է, Փարսիդի նման փուչ մարդկանց թշնամին և աչքի գրողը:

Սակայն զբամատիկական հիւսւածքի տեսակէտից, թէ Գիժ-Մօզին, թէ մի քանի ուրիշ անձինք (Գէւօ, Միխօ) և թէ մի քանի միջանկեալ տեսարաններ բոլորովին աւելորդ են և ոչ մի կապ չունեն գլխաւոր զործողութեան հետ:

Սունդուկեանի փառքը հիմնած է վերոյիշեալ կօմեղիաների վրայ: «Քանդած օջախից» յետոյ նա զրեց «Ամուսինները», որը սակայն յաջողութիւն չունեցաւ և ոչինչ չաւելացրեց զբամատուրգի փառքի վրայ: Նրա վերջին գրւածքները յիշւած են իր տեղում:

Հնդիանուր գնահատումից առաջ աւելորդ չեմ համարում մի քանի խօսք ասել նրա մանր կատակերգութիւնների մասին:

«Զիշերայ սաբրը խէր է» հետաքրքրական է նըրանով, որ դա սկսնակ դրամատուրգի անզըսիկ

կատակերգութիւնն է (1863 թ.) և գրւած է Փուղինեանի «Թալալ-Ղաղօի» ներկայացման թարմ տպառը ութեան տակ, նոյն ուղղութեամբ, ինչպէս զրում էին 60-ական թւականների թատերագիրները։ Հեղինակի նպատակն է միայն աշխոյժ ծիծաղ յարուցանել։

Միւս կատակերգ, խորթգիրն է «Օսկան Պետրովիչ» էն կինքումը։ Դա ուրիշ բան չէ, եթէ ոչ Սունդուկեանի կօմեղիաների ոէղիւմէն, ամփոփումը։ Այսուղ դարձեալ երեսում են մեզ ծանօթ գէմքեր՝ Օսկան Պետրովիչ, Գարասիմ Եակուլիչ, Խամփերի և այն։ Դրանք բոլորը գժոխիք բաժին պիտի գառնան։ Դժոխքն իր սատանաներով և բոլոր արհաւիրքներով մի նոր կատակերգական ձև է, որով հեղինակը կրրկին անգամ ծիծաղում է իր ներուների վրայ։ Հեղինակը նոր տիպեր չէ ստեղծում, նոր բան չէ առում։

Մենք ծանօթացանք Սունդուկեանի զլիաւոր վաստակների հետ, այժմ դիմենք նրանց ընդհանուր զնահատման։

Թէև Սունդուկեանը բեղմնաւոր հեղինակներից չէ և զրել է ընդամենը ճինդ խոշոր և մի քանի մասը պիէսներ, այնուամենայնիւ մեծ է այն ծառայութիւնը, որ նա մատուցել է հայոց գրականութեան։ Non multa, sed multum. ոչ շատ, բայց լաւ։ Նախ, կենցազարական կօմեղիան, որ նրանից առաջ գտնում էր սաղմնային դրութեան մէջ, նա հասցըրեց իր գեղարւեստական կատարելութեան։ Նա պատկերացրեց Թիֆլիսի հայ ազգաբնակութեան կեանքը բազմակողմանի, իր նիւթերը վերցնելով ժողովրդի բոլոր խաւերից։ Իրար հանդէպ կանգնեցրեց իին և նոր սերնդի ներկայացուցիչներին իրանց տարբեր աշխարհայեացքով և ձգտումներով, հանդէս բերեց ըոլոր

դասակարգերը իրանց ուրոյն կենցաղով և սովորութիւններով, հարւածեց վաճառականների խարդախութիւնը, մերկացըրեց կեղեքիչներին, պախարակեց կանանց պճնասիրութիւնը և ժողովրդի ստորին խաւերից գուրս բերեց Պէպօի նման անհատներ։

Սունդուկեանը ստեղծել է մի շարք գեղարւեստական տիպեր։ Մեր առջև հանդէս են գալիս մի կողմից՝ Զամբախովի և Զիմզիմովի նման մամօնայի երկրպագուներ, Եփէմիայի և Սալօմէի նման պճնասէր կանայք, Մարմարովի նման անազնիւ և փուշ երիտասարդ, և այնպիսի մի սարսափելի կին-հրէշ, ինչպէս Խամփերին է. միւս կողմից՝ մեզ հաշտեցնում են տիսուր իրականութեան հետ այնպիսի պայծառ գէմքեր, ինչպէս, օրինակ՝ Պէպօն, Պէպօի մայրը, ծերունի Գիքօն, Մասիսեանը, Միքայէլը և այլն։ Իր լաւացոյն թատերագրութիւնների մէջ Սունդուկեանը եղել է բէալիստ, հոգեբան և ստեղծագործող։

Սունդուկեանին կարելի է համեմատել ոռւսաց դրամատուրգ Օստրօվսկու հետ։ Վերջինս կատարելագործեց ոռւսաց կենցազարական կօմեղիան, Սունդուկեանը՝ հայոց Երկուսն էլ իրանց կատակերգութիւնների մէջ զուրս էին բերում զիշաւորապէս վաճառականական դասակարգը. Երկուսն էլ տւել են մի շարք գեղարւեստական անման տիպեր։

Սունդուկեանի կօմեղիաները՝ գրւած վիճելով Թիֆլիսի բարբառով, չեն կարող մնայուն կեանք ունենալ թատրոնական բեմի վրայ։ Եւ նոյն խակ մեր օրերում այդ պիէսները բեմի վրայ երևում են աւելի և աւելի սակաւ։

Չնայած դրան, Սունդուկեանի կօմեղիաները կ'պահպանեն իրանց պատմական նշանակութիւնը։

Անտարակոյս, մի որոշ ժամանակամիջոցից յե-

տոյ, Թիֆլիսի հայ ազգաբնակութեան կենցաղը այնպիսի արմատական փոփոխութիւնների պիտի ենթարկւէ, ինչպէս արդէն սկսւել է, որ նախկին տարագից, կենցաղից, սովորոյթներից հետք անգամ չի մնալու, այսուամենայնիւ Սունդուկեանի կօմեդիաները կ'մնան իբրև թանկագին յիշատակարաններ, որոնք հայելու պէս կ'ցռացնեն իրանց մէջ թիֆլիսեցոց վաղեմի կենցաղը, բարք ու վարքը, անհետացած տիպերը և տեղական բարբառը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0378753

64.462